

ՄԱՐԶԻԳ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

հսլս

marzig

SPORTS MAGAZINE

40-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 420

VOL. XXXX N° 420

السنة الأربعون - العدد رقم ٤٢٠



ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ
ԵՒ ՅԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ



ՅԱԷՐԺ ՓԱՌՔ, ԵՂԲԱՅՐՆԵՐ



ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Արցախի պայքարին եւ արցախահայութեան ցուցաբերած աջակցութեան կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը չմոռցաւ պատերազմի դաշտին վրայ ինկած իր տասը նահատակները, որոնցմէ իւրաքանչիւրին ընտանիքին յատկացուց անմիջական օժանդակութեան 2500 ամ. տոլարի գումար մը՝ համապատասխան «Աջակցութեան գիր»ով:

Գումարն ու «Աջակցութեան գիր»ը նահատակներու ընտանիքներուն փոխանցուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու ներկայութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Վիեննայի Սեկուսի մասնաճիւղի վարչական պատասխանատուներուն ձեռամբ:

Ստորեւ տրուած «Աջակցութեան գիր»ը յանձնուած է նահատակ եղբ. Գրիգոր Ղազարեանի ընտանիքին:

Յարգանքի եւ խոնարհումի արժանի նահատակ եղբ. Գրիգոր Ղազարեանի ընտանիք,

Ցաւակցագիրով, մոմավառութեամբ եւ յիշատակի օրուան հանդիսութեամբ, օրին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը ոգեկոչեց յիշատակը ձեր նահատակ զաւկին՝ եղբ. Գրիգորին, որ Արցախեան վերջին պատերազմին անմահացաւ եւ հայոց պատմութեան հետ յաւերժացաւ:

Եղբ. Գրիգորի կորուստին մեր ցաւը մեծ եղաւ, իսկ հպարտութիւնը՝ աւելի, որովհետեւ կեանքի դաժան իրականութիւնը ցոյց տուաւ, որ դառնաղէտ այս պատերազմին միակ յաղթողները մեր անմահացած հերոսներն էին, արիաբար մարտնչած աննման տղաքը, որոնք իրենց մէջ կը կրէին պատիւն ու ոգին իրենց քաջարի նախնիներուն:

Մենք յաւերժ պարտական կը մնանք եղբ. Գրիգորին նման նուիրեալ երիտասարդներու, որոնք հայրենիքի պաշտպանութեան համար տուին իրենց ամենէն թանկագինը, բարձրացա՛ն երկինք, հեռացան յարդգողի ծանապարհով ու միացան երկնակամարի փայլող աստղերուն:

Գերագոյն նուիրաբերումի այս երեսոյթին դիմաց կարելի չէ լուռ մնալ եւ շնորհակալութիւն չյայտնել ամենէն առաջ ձեզի՝ որդեկորոյս ծնողներ, որովհետեւ ձեր ընտանեկան նուիրական յարկին տակ դուք ծնունդ տուիք հերոս Գրիգորին, կրթեցիք, դաստիարակեցիք եւ կերտեցիք անբասիր հայրենասէրի անոր լուսեղէն կերպարը:

Շնորհակալութեան խօսքերու հետ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պարտք կը զգայ իր խօսքերուն միացնելու այս դժուարին օրերուն ձեր սգակիր ընտանիքին գործնական աջակցութեան քայլ մը, որ նիւթական իր արժեքէն աւելի ունի բարոյական, խորհրդանշական իմաստ, քանի ան կու գայ հաստատելու, որ դուք առանձին չէք ձեր վիշտին ու ցաւին մէջ: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը բաժնեկիցն է ձեր խոր վիշտին ու ցաւին, ձեր կորուստին մէջ անգամ ձեզ բարձրաճակատ եւ անկոտորում տեսնելու նախանձախնդրութեամբ:

Հետեւաբար, աջակցութեան մեր քայլը թող յիշատակի ծաղկեպսակ մը ըլլայ եղբայր Գրիգորի թարմ շիրիմին եւ սփոփանքի ու մխիթարանքի սպեղանի մը ձեզի, եղբ. Գրիգորին երազանքները անպայման իրականացած տեսնելու:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ոգի, նկարագիր եւ դրոշմ **2**

ԲԱԺԻՆՆԵՐ

Ի Յիշատակ **4**

Վերջին Հրաժեշտ **12**

Հ.Մ.Ը.Մ.ի Հետ **14**

Ոգեկոչում **17**

Պատմութեան Համար **20**

Անդրադարձ **30**

ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ **32**


ՍԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ **55**



ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

«Մարզիկ»-ի յաջորդ թիւը ամբողջութեամբ նուիրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի յիշարակին: Թիւը պիտի ընդգրկէ եղբոր միութեանական կեանքն ու վաստակը ներկայացնող գործակիցներու վկայութիւններ, յուշեր եւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի բնութագրումը կայարարող անոր ճառերէն հապուածներ: Պիտի ներկայացուին նաեւ եղբոր վերջին հրաժեշտի եւ մահուան քառասունքի նշումները շրջանէ շրջան:





ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումծէ միութեան երկար տարիներու Կեդրոնական Վարչութեան ատենապետ, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական՝

ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 6 Յունուար 2021-ին:



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org





Խմբագիր: Վիզէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւսահեան, Միզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Անուշիկ Փանոսեան:

Վարչական կազմ: Արօ Մոսիկեան, Միլվա Սաղրրեան, Վարդուի Յըռնզլեան, Վարդան Բաաճիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլէճեան:

Էջադրում եւ ընդհանուր ձեւաորում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյաճեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէքեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

Քաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւարալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հաւարավաճառի սակն է 5000 լ.ն.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանալ նաեւ «Համազգային»-ի գրասանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը սրացուի «Liban post»-ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան  9611248043, 9611260117  marzig@Homenetmen.org  Homenetmen - Հ.Մ.Ը.Մ.  www.Homenetmen.org

ՈԳԻ, ՆԿԱՐԱԳԻՐ ԵՒ ԴԻՈՇՄ

(ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Մեծերեն մեկն ալ գնաց:

Եղբայր Պատրիկ Կիւլպէնկեանի մահով ամբողջ ժամանակաշրջան մը պատմութիւն դարձաւ: Գեղեցիկ, փառատոր եւ յիշատակելի ժամանակաշրջան մը, որուն կերտիչները հանդիսացան եղբայր Պատրիկն ու իր սերունդակից հոյլ մը նուիրեալները՝ Բիւզանդ Թրիկեան, տոքթ. Միսաք Արզումանեան, Երևանոյ Տէմիրճեան, Վարուժան Մուրատեան, Յարութիւն Գեղարդ, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Կարօ Թիւթիւնճեան, Միհրան Շիմշիրեան եւ ուրիշներ: Անցնջելի իր դրոշմով՝ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառոյցի երկրորդ սերունդն է այս, արժանատի յաջորդը Յովհաննէս Շահինեաններու, Նշան Թիւսիւզեաններու, Յովհաննէս Պայթարեաններու, Վարդգէս Տէր Կարապետեաններու եւ անոնց գործակից անդրանիկ սերունդին:

Այսպէս, հիմները կը մեկնին, նորերը կը շարունակեն - գէթ կը ձգտին շարունակել - ինչ որ հիմները չեն կրնար կատարել, կամ ժամանակ չեն ունենար կատարելու: Բոլոր ժամանակներու, բոլոր սերունդներու ճակատագիրն է այս,- ձգտիլ, տքնիլ եւ հասնիլ կատարելագոյնին ու լաւագոյնին: Արդարեւ, հոն ուր կանգ կ'առնէ ձգտումը, հոն կանգ կ'առնէ յառաջդիմութիւնը:

Մեծնալու, բարձրանալու, յառաջդիմելու առաջին պայմանն է ձգտիլն ու տքնիլը: Ասիկա սովորական պայման մը չէ, կանոն է, պատգամ է, գոր հիմները կ'ուղղեն նորերուն: Այդ պատգամին նպատակը այն չէ, որ նորերը ձգտումներով տարուած՝ կտրուին իրականութենէն եւ մնան օդին մէջ, այլ՝ այն է, որ անոնք կտրուին օդէն եւ մնան իրականութեան ամուր գետնին վրայ:

Կեանքի մէջ դժբախտութիւն է բարձրանալու ձգտում չունենալը: Դժբախտութիւն է մանաւանդ բարձրանալէ ետք բարձունքի կատարին առանձին մնալը, առանց նմանները իր հետ բարձրացնելու մարդկային ազնիւ ճրգտումին: Անոնք որոնք ձգտելու կիրքն ու մղումը չունին, անոնց ճակատագիրը «մեռնիլ է» քսան տարեկանին եւ թաղուիլ... ութսունէն ետք: Այլ խօսքով, վաթսուն տարի



«մեռած» ապրիլ: Ասիկա ճիշդ է մարդոց համար, ճիշդ է նաեւ միութիւններու եւ ժողովուրդներու համար:

Ահա թէ ինչո՞ւ, հիմներու մեկնումով, նորերու ուսերուն կը մնայ իրենց միութիւնը, շրջապատն ու ժողովուրդը «իրենց պատկերով» վերակառուցելու պարտականութիւնը: Իսկ վերակառուցման աշխատանքին համար բաւարար չէ միայն *գիտնալը*, անհրաժեշտ է մանաւանդ *կարենալը*: Գիտուն մարդէն, վկայեալ անձէն արեւի գործօն մարդն է փնտռուածը: Մարդ, որ ունենայ

պատասխանատուութեան գիտակցութիւն, կամք, վճռականութիւն, եւ այս բոլորէն առաջ՝ նկարագիր եւ դրոշմ, որովհետեւ սերունդներ իրենց դրոշմն է, որ պիտի տան այն ժամանակաշրջանին, որուն մէջ կ'ապրին եւ որուն մէջ իրենց յաջորդները պիտի ապրին:

Նորերը կը դատուին համաձայն իրենց գործերուն եւ ոչ՝ իրենց խօսքերուն կամ զաղափարներուն: Որքան հարուստ ըլլան անոնց բարոյական արժէքներն ու միութեանական սկզբունքները, այնքան հարուստ կ'ըլլայ անոնց գործը: Որքան խոր ըլլայ իրենց կնիքը ժամանակին եւ տարածութեան վրայ, այնքան անցնջելի կ'ըլլայ անոնց հետքը սերունդներու վրայ:

Գիտենք, որ ընկերութիւններու մէջ սովորաբար քանի մը հոգի միայն կը գործէ, իսկ մնացեալը կը զբաղի կատարուած գործին արժեւորումով: Քանի մը հոգի միայն կը ստեղծէ, իսկ միւսները կը սպառեն: Քանի մը հոգի միայն կը կառուցանէ, միւսները կը նորոգեն կամ... կը քանդեն: Քանի մը հոգի միայն նոր ուղի կը բանայ, իսկ մնացեալը կը հետեւին: Քիչեր միայն նոր պայմաններ կը ստեղծեն, մինչդեռ մեծամասնութիւնը կը յարմարի օրւան պայմաններուն:

Նորերը պէտք է որոշեն, հետեւաբար, թէ գործեր արժեւորո՞ղ պիտի ըլլան թէ գործեր կատարո՞ղ: Ստեղծո՞ղ թէ սպառո՞ղ: Կառուցանո՞ղ թէ նորոգո՞ղ: Դամբայ բացո՞ղ թէ հետեւո՞ղ: Շրջապատի պայմաններուն յարմարո՞ղ թէ իրենք նոր պայմաններ ստեղծո՞ղ:



Այս հարցումներուն պատասխանները պիտի տրուին գործով ամէն բանէ առաջ եւ ոչ՝ խօսքով: Իսկ գործը կը զնահատուի հաւատքի իր կշիռով, ծառայութեան այն չափով, որուն լծուած են գործը կատարողները: Ի վերջոյ, մեծ գործերը կ'իրագործուին մեծ հաւատքով եւ անչափելի ծառայութեամբ: Ի վերջոյ նաեւ, աւելի դժուար է հաւատքը խախտելը, քան՝ գիտութիւնը:

Անշուշտ, այսօրուան աշխարհին մեջ գիտութիւնն ու հմտութիւնները ունին իրենց անուրանալի դերը, սակայն անոնք անբաւարար են Հ.Մ.Ը.Մ.ի նման միութեան մը համար, ուր ոգին գերակշիռ է՝ քան մնացեալ բոլոր առաւելութիւնները: Գիտութիւնը եւ հմտութիւնները ուսանելի

են, մինչդեռ ոգին մարդոց հետ կը ծնի ու կ'ապրի: Ամէն բան կը հիննայ ու կը մաշի, միայն ոգին չի հիննար ու չի մաշիր: Տաղանդ ըստածն ալ այդ ոգին է արդէն: Ոգի ունի՞ն նորերը: Եթէ ունին, կը յաջողին: Եթէ չունին, կը ձախտին:

Եղբայր Պատրիկ Կիւլպենկեանը եւ իր սերնդակից նուիրեալները ոգի՛ ունէին, նկարագիր եւ դորձմ ունէին, անոր համար ալ իրենց շիրիմները այսօր կ'ամփոփեն ինչ որ կորնչելի է իրենցմէ, միւսը՝ անկորնչելին արդէն իսկ կը պատկանի իրենց ժողովուրդի պատմութեան եւ իրենց միութեան ժառանգութեան հարուստ զանձարանին:

Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄՆԱՃԻՂԵՐ ԵՒ ՄԻՎԻՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արովեան (Արովեան), «Հ. Առուարամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վերի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սյրեւիանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկոյա. **Լիբանան:** Պէյրութ, Չախլէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Երևան, Անթիլիաս, Ժրլէյրէ, Պաուլիէ, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղրատ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Մյունխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթելիա. **Պուլիարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրիա. **Գանատ:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիձ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ, Վանքովըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Բրանսիսքօ, «Մասուն» (Ֆրեզնօ), Մոնթրէալ, «Ազատամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կլեյուէյ), Օրէնձ Բաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Սեան» (Սան Տիէյօ), «Արազ» (Ինըրնոյ Էմիլայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Քրեմէնթա Հոլիոյ), «Սիփան» (Պըրպէնք), «Արցախ» (Լաս Վելլաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Քրիք) «Չապիք» (Նորթ Հոլիոյոյ), «Լոռի» (Մաքքամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Բլարիթա), «Հրազք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ, Սերիմաթ Հոլիոյ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորրոպա, Մոնթեվիդէօ. **Աստորիա:** «Անդրանիկ» (Սիլոնի), «Արաքս» (Մելպուռն), «Կամք» (Սիլոնի), «Նասասարդ» (Սիլոնի), «Արարատ» (Սիլոնի).

Հ.Մ.Ը.Մ.Ի ԽՈՆԱՐՀ ԶԻՆՈՒՈՐԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Սգակիր բարեկամներ,
Հ.Մ.Ը.Մ.՝ ահա քոյրեր եւ եղբայրներ,
Դժուար է այն պահը, երբ հարազատներ եւ բարեկամներ կը հաւաքուին վերջին հրաժեշտ տալու սրբելի մը, որ առ յաւէտ կը բաժնուի իրենցմէ:

Կը փորձեն գտնել մխիթարութեան եւ սփոփանքի խօսքեր, որոնք, քաջ գիտենք, որ անպայման պիտի չմխիթարեն եւ չսփոփեն մեզ, երբ հեռացողը իր ետին ձգած է բազմամեայ վաստակ, միութենական հարուստ գործունէութեամբ:

Եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան ծնած է 1932-ին, Համատանի մէջ, Պարսկաստան: Իբրեւ սկաուտ, ան Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած է 1950-ականներու սկիզբը, Պէյրութ:

1950-1953 եղած է Լիբանանի Շրջանային Վարչութեան հեծեարչաւի յանձնախումբի անդամ:

1960-1970 ան եղած է Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամ:

Այնուհետեւ, 1975-1978, ան մաս կազմած է Լիբանանի Շրջանային Վարչութեան, ստանձնելով գանձապահի պաշտօն:

1987-1991, 1991-1995, 1995-1999 եւ 2003-2007 եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, եւ համա-



Հ.Մ.Ը.Մ.՝ ահա Դ., Ե., Զ. եւ Ը. բանակումներուն ստանձնած է գանձապահի պարտականութիւն:

Երկար տարիներ ան եղած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի վարչական պատասխանատու եւ լրագոր ներկայացուցիչ:

Մասնակցած է միութեան գերագոյն՝ 8 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն:

2001-ին, եղբ. Պատրիկ պարգևատրուած է Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնին, իսկ 2006-ին՝ լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ:

14 Նոյեմբեր 2008-ին, միութեան 90-ամեակի հանդիսութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ան պարգևատրուած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան տարիներ շարունակ անշահախնդիր, բժախնդիր մօտեցումով եւ Հ.Մ.Ը.Մ.՝ ավայել, միութենականի բարձր գիտակցութեամբ եւ նուիրումով ծառայեց իր պաշտած միութեան:

Բախտը ունեցած եմ փոքր տարիքէս ծանօթանալու եղբ. Պատրիկին, իբրեւ սկաուտ,



ապա իբրեւ խմբապետ եւ միութենական: Իմ առաջին դրական տպավորութիւնս պահած եմ մինչեւ հիմա, ինչպէս է պարզապէս բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ մեզմէ ամէն մէկուն, որ աշխատած եւ գործակցած է եղբ. Պատրիկին հետ, միութենական յանձնախումբերու կամ պատասխանատու այլ մակարդակներու վրայ:

Եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան իր միութենական աշխատանքին ընթացքին յատկանշուեցաւ իբրեւ խոնարհ զինուոր միութեան, ազնիւ ոգիով եւ ընտիր նկարագրով անհատ մը, միշտ համբերատար եւ ուշադիր անզգայաբար չվիրավորելու ոչ ոքի՝ իրողութիւն մը, որ ակամայ մեր հեւքոտ առօրեային մաս կը կազմէ միութենական գործակցութեան ընթացքին:

Սիրելի՛ եղբ. Պատրիկ, Թէեւ այսօր տխուր ենք, որ մեզմէ կը բաժնուիս առանց լուր տալու, առանց մեզի առիթը տալու քեզմէ հրաժեշտ առնելու, բայց շատ լաւ գիտենք, որ դուն ապրեցար Հ.Մ.Ը.Մ.ական հարուստ կեանք մը, հաւատարիմ ըլլալով միութեան նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին եւ քու ազնիւ ու Հ.Մ.Ը.Մ.ական տիպարովդ օրինակ դարձար մեզի եւ քեզի ճանչցող բոլոր միութենականներուն:

Հարազատ միութենական եղբայրներդ եւ քոյրերդ իրենց

սիրտերուն մէջ պիտի պահեն քու յիշատակդ, քու ազնիւ ժպիտդ եւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի քու ձգած ժառանգդ, զոր փոխանցեցիր յաջորդող սերունդներուն:

Այսօր, աւելի քան երբեք, պէտք ունինք քու փոխանցած միութենական դաստիարակութեանդ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ականներէն կ'ակնկալուի առաւել աշխատանքի կամք՝ քեզի նման, առաւել հաւատք եւ նուիրում Հ.Մ.Ը.Մ.ի տեսչականին՝ քեզի նման, աւելի գործ՝ քեզի նման, որպէսզի կարելի ըլլայ դիմագրաւել միութեան եւ հայ ազգին դէմ օրէ օր ծառայող մարտահրաւէրները:

Յարգելի՛ սգակիրներ,
Հ.Մ.Ը.Մ.ը 102-ամեայ իր պատմութեան մէջ ունեցած է պատկառելի ղեկավարներու փաղանգ մը, որ իր տիպարով օրինակ ծառայած է «Կամաւոր բանակ»ին, սակայն հազուադիւրս եղած են եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանի նման ազնիւ եւ նուիրեալ անձերը, որոնք երկարաշունչ ձեւով պատասխանատու պարտականութիւններ ստանձնած ըլլան եւ որոնց արժէքը եւ բացակայութիւնը ժամանակի ընթացքին աւելի զգալի պիտի ըլլայ:
Երթդ բարի՛, սիրելի եղբ. Պատրիկ:
Հողը թեթեւ դայ վրայ:

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՆԱՄԱԿ՝

ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԷՆ ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԿԼՊԷՆԿԵԱՆԻՆ



Այս գրութիւնը, ինչպէս ներածականէն կ'երեւի, եղբ. Գառնիկ Մկրտչեան գրած է երկար փորձերու իր գործակից, սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Պատրիկ Կիւլպէնկեանի քաղման օրը՝ 13 Գեկտեմբեր 2020-ին, մահէն 24 օր առաջ: Հակառակ սովորութեան, այս անգամ զարմանալի աճապարանքով մը, ան գրած է շար կանուի, հաւանաբար եղբայր Պատրիկի քառասունքին իր պարտականութիւնը նախօրոք կատարած ըլլալու գոհունակութեամբ: Ափսո՛ս, որ ան չընտար եղբոր քառասունքը, բայց այս գրութեամբ անգամ մը եւս օրինակը փոխառաքանչիւր պարտականութիւն փրկին եւ ժամանակին կատարելու Հ.Մ.Ը.Մ.ական մարդու իր պարտականաշուքեան:

Անակնկալ մահէն ետք, գրութիւնը ընդամենը պարագաներուն կողմէ պատասխանաբար գրութեամբ անհնարան քոյրերուն մէջէն:

Սիրելի՛ եղբայր Պատրիկ, երկու ժամ եղաւ թաղումիդ: Վերագառնալէս ետք, քիչ մը առանձնացած, սկսայ մտածել եւ ես ինձի հարց տալ, թէ արդեօք կա՞ր բան մը, զոր չկըրցանք ընել, որպէսզի քիչ մը եւս քեզ մեզի հետ ունենայինք: Յիշեցի այն բոլոր խօսակցութիւնները եւ վերջին տարուան հեռաձայնային մեր բոլոր զրոյցները, նաեւ՝ վերջին ամիսներու մեր «Կուխները», որոնք կը միտէին քեզ արեան քննութեան ենթարկելու, բժիշկի այցելութեան տանելու, անհրաժեշտութեան պարագային՝ քեզ հիւանդանոց փոխադրելու, սակայն դուն միշտ ալ մերժեցիր: Մեր պնդումներուն տեղի տուիր ի վերջոյ, համոզուեցար, եւ իրերայաջորդ կերպով կատարեցինք բժշկական անհրաժեշտ հետապնդումներ, քննութիւններ, եւ դուն սկսար աւելի հանգիստ զգալ, դեղերդ դործածել: Մահէդ 15 օր առաջ վիճակդ վատթարացաւ, սակայն դուն դարձեալ, քու ամուր մարդու նկարագրիդ համաձայն, ըսիր՝ բան մը չունիմ, միայն քիչ մը փորի ցաւ: Քեզ կարողացանք համոզել եւ փոխադրել ՔԱՀԼ-ի կեդրոն՝ այն խոստումով, իմ կողմէս, որ քիչ մը կազդուրուելէ ետք կրկին պիտի վերադառնաս տունդ, որուն այնքա՛ն կապուած էիր, որովհետեւ հոն էին քու բոլոր յիշատակներդ եւ երբեք չէիր ուզեր լքել տաքուկ բոյնդ: Հոս կ'ուզեմ յատուկ շնորհակալութիւն յայտնել ՔԱՀԼ-ի տնօրէնութեան, ԼՕԽ-ի Շրջանային Վարչութեան անդամներուն, որոնք մեզի հետ տաղնապեցան:



Մեծ շնորհակալութիւն դրացիներուդ՝ Զաւէնին եւ Սեդային, որոնք բնաւ քեզ առանձին չձգեցին, այլ մնալուն կապի մէջ եղան հետդ:

Այս բոլորը կատարուեցան, եղբայր Պատրիկ, սակայն, ցաւ ի սիրտ, մեր պատկերացումն ու իրականութիւնը իրարու չհամապատասխանեցին: Կեդրոնի օրէնքներուն համապատասխան՝ բոլոր դասաւորումները կատարուեցան, ամէն բան կարգին էր: Հոն գտնուելուդ երկրորդ օրը քեզի այցելեցի, սուրճ խմեցինք եւ բաւական երկար զրուցեցինք, չգիտցանք, որ ասիկա մեր վերջին հանդիպումը պիտի ըլլար: Խօսեցանք տարբեր նիւթերու մասին, ինչպէս սովորաբար կ'ընէինք Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնին մէջ, սակայն այս անգամ մեր հանդիպման վայրը ՔԱՀԼ-ի գրաստանն էր, իսկ զրոյցին առանցքը, ինչպէս միշտ՝ Հ.Մ.Ը.Մ-ը, յատկապէս՝ «Մարզիկ» պաշտօնաթերթը: Ինձմէ խնդրեցի կեանքիս ընթացքին երբեք չմոռնալ Հ.Մ.Ը.Մ-ը եւ «Մարզիկ»ը: Կարգ մը հարցերու մասին խօսելէ ետք, երախտագիտութիւն յայտնեցի դրացիներուդ, ուզեցի, որ օգտակար ըլլամ իրենց, եթէ բանի մը կարիքը ունենան: Մտահոգ էիր նաեւ նիւթական հարցերով, թէ ո՞վ պիտի հոգար ծախսերը, սակայն ես հանգստացուցի քեզի ու ըսի՝ «Եղբայր Պատրիկ, Կեդրոնական Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը քու ընտանիքդ են, դուն այս բաներով երբեք չմտահոգուիս»: Յուզումնախառն ժպիտով եւ վեհանքով ոգիով ընդունեցի: Սուրճը ամբողջացուցինք, ես հեռացայ՝ խոստանալով, որ անպայման նորէն պիտի տեսնուինք, իսկ լուրերուդ պիտի հետեւիմ հեռաձայնով՝ անօրէնութեան ճամբով: Ափսո՛ս, ասիկա մեր վերջին հանդիպումը եւ սուրճի շուրջ զրոյցը պիտի ըլլար, որովհետեւ նոյն գիշերը, կանուխ առաւօտուն հաղորդեցին գոյժը, թէ մահացած ես քնացած պահուդ, սրտի կաթուածի պատճառով, առանց մարդ նեղացնելու, ինչպէս էր քու նկարագրիդ:

Սիրելի՛ եղբայր Պատրիկ,
Քիչ մըն ալ հետդ կ'ուզեմ խօսիլ յաւէտ մեկնումէդ մինչեւ յոգնած մարմինդ հողին յանձնուելու փուլին մասին: Կիրա-

կի, 13 Դեկտեմբեր 2020-ին, Ֆրնն Շրպպէքի Ազգային գերեզմանատուն վերջին հրաժեշտի եկած էին բոլորը, ինչպէս քեզի հետ խօսած էինք, նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը՝ Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, «Մարզիկ»ի խմբագիրն ու վարչական կազմը, մասնաճիւղերէ ներկայացուցիչներ, Պէյրութի մասնաճիւղի վարչութեան անդամներն ու սկաուտները, քեզ սիրող խումբ մը յուղարկաւորներ:

Սկաուտներու խումբը «Պատուի ա՛ռ»ով ընդունեց Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակով ծածկուած դագաղը, գերեզմանատան մուտքին, ուրկէ ուսամբարձ տարուեցար մատուռ՝ ներկայ եւ նախկին Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեան անդամներու կողմէ: Դագաղը կ'առաջնորդէին ծաղկեպսակները, ապա տարագաւոր մը բռնած էր այն բարձր, որուն վրայ շքանշանները տեղադրուած էին, իսկ դագաղիդ վրայ գետեղուած էր «Սիրելի ընկերներդ» գրութեամբ ծաղկեպսակ մը: Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարեցին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երկու միաբաններ եւ քահանայ հայր մը: Հայր Սուրբը արտասանեց դամբանական մը, որուն յաջորդեց Կեդրոնական Վարչութեան դամբանականը: Անկէ ետք ուղղուեցանք ձեր տանեկան դամբարանը եւ մարմինդ աղօթքով յանձնեցինք հողին՝ երգելով քու պաշտած միութեանդ քայլերգը՝ «Յառա՛ջ նահատակ»ը:

Ես գիտեմ, որ դուն շատ չսիրեցիր այս բոլորը, որովհետեւ չէիր հաւատար երեւոյթներուն, կը սիրէիր գործը, բայց նաեւ պահապան էիր սկզբունքներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի վայել գործերուն: Այդպէս ալ կատարուեցաւ ամէն բան, եւ վստահ եմ, որ եթէ քորոնայի համաճարակի պայմանները չըլլային երկրին մէջ, քեզ յարգող շատ աւելի մեծ թիւով անձեր պիտի ըլլային հոն, սակայն, յարգելի պատճառներով, բոլորը չէ, որ կարողացան գալ վերջին հրաժեշտիդ:

Հիմա որ գացիր հոն, եղբայր Պատրիկ, հոն, ուր շատ աւելի հին եղբայրներ ունիս, եւ վստահ եմ՝ պիտի հանդիպիս կամ արդէն սկսար հանդիպիլ ընտանիքի անդամներէն անկախ՝ Հ.Մ.Ը.Մ-ական այն եղբայրներուն, որոնց հետ կեանք մը ամբողջ անցուցած էիր այս ժամանակաւոր կեանքին մէջ: Հիմա որ հասար յաւիտենական կեանքին, որուն ես հաւատացողն եմ, պատմէ՛ իրենց՝ եղբայրներ Վարդգէսին, Բիւզանդին, Յովհաննէսին, Երուանդին, տղթ. Միսաքին, տղթ. Գեղարդին, Վարուժանին, «կուռէ՛» նաեւ Միհրանին, Կարոյին հետ եւ ըսէ, որ Հ.Մ.Ը.Մ-ը, հակառակ դժուար օրերուն եւ դժուար պայմաններուն, տակաւին կը գոյատեւէ եւ լա՛ւ պայմաններու մէջ ալ պիտի գոյատեւէ, իսկ ձեր սիրած ու փայփայած «Մարզիկ»ն ալ անպայման պիտի յարատեւէ, որովհետեւ տակաւին կան գործին հաւատացող մարդիկ:

Հանգի՛ստ ննջէ:
Վարձքը կատա՛ր, երթդ բարի սիրելի՛ եղբայր:
Միշտ պիտի յիշենք քեզ:

ԱԶՆՈՒՌԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

(ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԻՆԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

Քանի մը ամիսը ժամանակի իմաստով երկար տեւողութիւն չէ, սակայն անվերադարձ բաժանումի պարագային իսկապէս ծանր է ու երկար: Դիւրին չէ քանի մը ամսուան մէջ հաշտուելի կորուստին հետ մարդու մը, որ Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով 70 տարուան ծառայութիւն մատուցեց հայ մարմնակրթութեան, ազնիւ մարդու եւ մաքրամաքուր Հ.Մ.Ը.Մ-ականի բարի անուն ձգելով իր ետին:

Խօսքը Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական կառոյցի երկրորդ սերունդի տիպարային ներկայացուցիչներէն եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանի մասին է, որ 11 Դեկտեմբեր 2020-ին իր սիրելիներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին հրաժեշտ տուաւ լուռ եւ անշուք, այնպէս ինչպէս ապրած էր իր բովանդակ կեանքը:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի երիցագոյն սերունդի վերջին մոհիկանն էր ան: Մէկը, որ 1950-էն մինչեւ մահը ապրեցաւ ու գործեց միութենական քանի մը սերունդի հետ, յարգուեցաւ ու սիրուեցաւ բոլորէն: Բեմերու մարդը չեղաւ ան, թէեւ տասնվեց տարի գործեց միութեան բարձրագոյն բեմին՝ Կեդրոնական Վարչութեան չորս



Եղբ. Պատրիկ Յ.Ս.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան 1995-1999 քառամեակի կազմին հետ: Ոտքի, ձախէն աջ՝ եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեան, Մանուէլ Յալաճեան, Սարգիս Ստեփանեան, Յրաչ Սիսեռեան, Գօգօ Պալեան, Ժիրայր Սարգիսեան եւ Միհրան Շիմշիրեան:

Նստած, ձախէն աջ՝ եղբայրներ Կարօ Թիւթիւնճեան, տոքթ. Միսաք Արզումանեան, Վարուժան Սերոբեան եւ Անդրանիկ Պէօյիքեան:

Կազմերուն մէջ, պատկառելի գործակիցներ ունենալով եղբայրներ տղթ. Միսաք Արզումանեանն ու Բիւզանդ Թորիկեանը, Յարութիւն Գեղարդն ու Յովհաննէս Տէր Յարութիւնեանը, Երուանդ Տէմիրճեանն ու Արա Յակոբեանը, Կարօ Թիւթիւնճեանն ու Միհրան Շիմշիրեանը:

Թերթերու եւ լուսանկարներու մէջ չերեւցան, թէեւ 35 տարի տքնաջան գործեց «Մարգիկ» պաշտօնաթերթի պահպանման ու զարգացման համար, մինչեւ կեանքին վերջ պայքարելով անոր անխափան հրատարակութեան համար: Եղբ. Պատրիկ եղաւ «Մարգիկ»-ի մօտ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան մնալուն ներկայացուցիչը: Իսկ երբ տարիքի բերումով դադարեցաւ Կեդրոնական Վարչութեան անդամակցութենէ՝ ան դարձաւ հեղինակաւոր ատենապետը անոր վարչական կազմին, մինչեւ մահ ամսական կանոնաւորութեամբ ներկայ գտնուելով անոր բոլոր ժողովներուն: Բացակայեցաւ միայն վերջին ժողովին, առողջութեան վատթարացման պատճառով: Իսկ երբ տարիներու գործակիցն ու մտերիմը, մեզմէ





Եղբ. Պատրիկ Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութեան 1991-1995 քառամեակի կազմին հետ: Աջէն ձախ՝ եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեան, Կարո Թիւթունճեան, Արա Յակոբեան, Ժիրայր Պոյաճեան, Վարդան Բախշեան, Յարութիւն Գեղարդ, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, տոքթ. Միսաք Արզումանեան, Սիիրան Շիմշիրեան, Վարուժան Սերոբեան եւ Սուրէն Նազարեան:

յաւէտ բաժնուած եղբ. Գառնիկ Մկրտիչեանը եղբ. Պատրիկի մահէն օր մը առաջ իրեն այցելեց, վերադարձին փոխանցեց «Մարգրիկ»ի վերջին թիւին մասին անոր հարցապահումը եւ թերթին ամէն գնով տէր կանգնելու յորդորը:

Եղբ. Պատրիկ ընտանիք չունեցաւ, Հ.Մ.Ը.Ս.Ր եղաւ իր մեծ ընտանիքը: Երիտասարդութիւնը անցուց Հ.Մ.Ը.Ս.Ի սկաուտական շարքերուն մէջ, հասուն տարիքը՝ վարչական կազմերուն մէջ, իսկ ծերութիւնը՝ «Մարգրիկ»ի ծառայութեան մէջ: Իր գաւալներն ու թոռները եղան Հ.Մ.Ը.Ս.Ր-ական իր եղբայրներն ու քոյրերը, որոնք ակնածանքով յարգեցին զինք, գնահատեցին ու պատուեցին միշտ:

Իսկ ո՞վ էր մինչեւ մահը շատերուն համար անձանթ եղբ. Պատրիկը:

Տասնեօթը տարեկանին «Պարսկաստանի խորքից»՝ Համատանէն Պէյրութ ժամանած երիտասարդ եղբ. Պատրիկը կը սերէր պատմական Կիւլպէնկեան ընտանիքի ազնուական շառաւիղէն: Պէյրութի մէջ, ան երկրորդական ուսումը կը ստանայ Հայ Աւետ. Քոլէճին մէջ, իսկ այնուհետեւ՝ 1956-ին ան կը վկայուի Պէյրութի Ամբերիկեան Համալսարանի տնտեսագիտութեան բաժանմունքէն:

Կրթական զարգացման առընթեր, եղբ. Պատրիկ նախանձախնդիր կ'ըլլայ հոգիի ազնուութեան զարգացման: Մօրեղբօր՝ վաստակաւոր Հ.Մ.Ը.Ս.Ր-ական եղբ. Կրէկուար Մղձակեանի քաջալերանքով ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Ս.Ր-ին եւ կը գործէ Հ.Մ.Ը.Ս.Ի Պէյրութի

հեծելարչաւի յանձնախումբին մէջ: Շատ չանցած, սակայն, կարգապահ, օրինապահ եւ ճշգրտապահ եղբ. Պատրիկը կ'անդրադառնայ, որ իսկական տեղը տիսիփիլինի աշխարհն է՝ սկաուտութիւնը եւ մատղաջ սերունդի դաստիարակութիւնը: Ան աւելի քան տասը տարի մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Ս.Ի Պէյրութի մասնաճիւղի եւ ապա՝ Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդներուն, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Ս.Ի Պէյրութի վարչութեան, առիթը ունենալով գործակցելու Հ.Մ.Ը.Ս.Ի Լիբանանի փառքի օրերը կերտած ղեկավարութեան Յովհաննէս Շահինեաններու, Վահէ Դանիէլեաններու, Վարուժան Մուրատեաններու, Վարդգէս Հայրապետեաններու, Ալէքթօ Պէգրիկեաններու, Արա Պապիկեաններու, Վարուժան Խանամիրեաններու եւ բազմապատասխան այլ դէմքերու հետ:

Լիբանանի նախապատերազմեան այդ տարիները ինչպէս Հ.Մ.Ը.Ս.Ի մարզական կեանքին, նաեւ սկաուտական կեանքին վերելքն ու զարգացումը կը նշեն: Եղբ. Պատրիկ մասնակից է սկաուտական շարքերու քանակական եւ որակական աճին համար թափուող ճիգերուն: Ան ներկայ է, կը ղեկավարէ Հ.Մ.Ը.Ս.Ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան միջմասնաճիւղային բանակումները, սեմինարները, հայ սկաուտութեան 60-ամեակին նուիրուած շքեղ տօնակատարութիւնները: Լուռ շուքը ամէն տեղ է, անունը՝ ո՛չ մէկ տեղ: Ներկայ է գործը, բացակայ է անձը՝ եսը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը կը յեղաշրջէ շատ բան: Միութենական գործունէութեան նախկին թափը կը նահանջէ: Եղբ. Պատրիկ սակայն կը մնայ պատենչի վրայ, թէեւ իրեն առիթներ կը ներկայանան երկրէն հեռանալու:



Եղբ. Պատրիկ (տոքի, Բ. շարք, ձախէն առաջինը) Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութեան 1987-1991 քառամեակի կազմին հետ:

Պատերազմի ամենէն տագնապալի օրերուն՝ 1977-1985, ան երեք շրջան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ է, սկստական աշխատանքներու ներկայացուցիչի հանգամանքով, միշտ հետամուտ կարելին փրկելու եւ մատղաշ սերունդը Հ.Մ.Ը.Մ-ի հայաշունչ դաստիարակութենէն չզրկելու: Ռումբերու տակ ժողովներու ներկայ է: Համեմատական խաղաղութեան օրերուն հաւաք եւ Մայիսեան փառատօն կը կազմակերպէ, տեւաբար գործելով քուլիսներու ետին, իրեն յատուկ խոնարհ ու հեզ բնաւորութեամբ:

1987-ը կարեւոր դարձակէտ մը կը նշէ եղբ. Պատրիկի Հ.Մ.Ը.Մ-ական կեանքին մէջ: Այդ տարի, միութեան Պատգամաւորական չորրորդ Ընդհանուր Ժողովին ան կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ այնուհետեւ երեք անգամ կը վերընտրուի՝ 1991-ին, 1995-ին եւ 2003-ին, ստանձնելով գանձապահութեան պատասխանատու պաշտօնը: Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան առաջին ութ տարիները կը գուգադիպին Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերընծիւղման հանգրուանին: Իրարու ետեւէ գործուղումներ կը կատարուին, աստիճանաւորական սեմինարներ կ'ընդգործուին, իսկ կարեւորագոյն եւ մեծագոյն նորութիւնը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ական երագին իրականացումը՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումներուն կազմակերպումը մայր հայրենիքի՝ Բիւրականի եւ Աղաւնաձորի մէջ: Եղբ. Պատրիկ կարեւոր դերակատարութիւն ունի այս բոլորին յաջողութեան մէջ: Կազմակերպական տեսակաւոր դժուարութիւններու յաղթահարման կողքին, մեծ բժախնդրութեամբ ու համբերութեամբ ան գլխաւոր պատասխանատուն է հսկայական աշխատանքին նիւթական գործառնութիւններուն, հաշուական բոլոր ելք ու մուտքերուն: Իւրաքանչիւր դահեկանի վրայ դողացողն է ան, միութեան նիւթականին հանդէպ առաւելագոյն բժախնդրութեամբ՝ անտեղի ծախս մը չկատարելու կամ միութեան գումարները շուսյութեամբ չմսխելու համար: Զէ՛ որ իւրաքանչիւր դահեկանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ականի մը քրտինքը կայ: Նուիրատուի մը վստահութիւնը եւ բարեբարի մը յանձնառութիւնը կայ:

Վարչական աշխատանքները, որքան ալ տաղտկալից ու սպառիչ, եղբ. Պատրիկը ետ չեն մղեր իր «առաջին սէր»էն՝ սկստականութենէն, որուն զարգացման եւ կատարելագործման համար ջանք չի խնայեր ան, իր խօսքով ու գործով մարմնաւորելով այն բոլոր արժէքները, որոնք տիպար սկստաւոր մը բնորոշ գիծերը կը կազմեն: Մինչեւ վերջ ան կը մնայ հաւատքով ու եռանդով սկստաւոր՝ չարքաշ ու աշխատասէր, նուիր-



եալ ու ծառայասէր, «ամէն օր բարիք մը գործելու» պատրաստակամութեամբ: Փափկանկատ բոլորին նկատմամբ, յարգալիր՝ մեծին ու փոքրին հանդէպ:

Նկարագրային ու խառնուածքային գիծերով սովորականէն տարբեր մարդ մըն էր եղբ. Պատրիկ: Իսկական ազնուականի մը տիպարով, ան հեռու էր առօրեայ ճղճիւմ հարցերէ, մանրութիւններէ եւ ըսի-ըսաւներէ: Զերմ պաշտպան էր ազգային աւանդական արժէքներու եւ միութեանական բարոյական սկզբունքներու, որոնց հանդէպ ան ունէր պաշտամունքի հասնող կապուածութիւն: Այստեղ գիշումի հարց չէր կրնար ըլլալ իրեն համար: Ծակատը բաց կը քննադատէր թերացողներն ու ընկրկողները: Առանց չափազանցութեան, շատեր գինք կը նմանցընէին Դաշնակցութեան «Աշխարհիկ Սուրբ»ին՝ Զաւարեանին, գայն նկատելով Հ.Մ.Ը.Մ-ի «Աշխարհիկ Սուրբ»ը:



Եղբ. Պատրիկ մեծահոգի մարդուն եւ տիպար Հ.Մ.Ը.Մ-ականին բնութագրումը կատարող այս տողերը կրնան երկարիլ եւ անդրադառնալ նաեւ այն բոլոր բարեմասնութիւններուն, որոնք հաւատաւոր այս միութեանականը կը դարձնեն վեհանձնութեան եւ ազնուութեան իսկական խորհրդանիշ: Մէկը, որուն օրինակը լաւագոյն ուղեցոյց եւ ներշնչարան կրնայ ըլլալ բոլոր անոնց, որոնք կը մտածեն, կը փափաքին կամ արդէն իսկ որոշած են ընթանալ Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով մեր ժողովուրդին եւ անոր երիտասարդութեան ծառայութեան երկա՛ր ու փշոտ, բայց միաժամանակ հոգեկան հիասքանչ ինքնաբաւութեան ուղիէն:

Յիշատակը անթառամ, վաստակը անմոռաց, ազնիւ եղբայր:

Սերունդները մի՛շտ պիտի յիշեն քեզ:

ԱՆԲԱՍԻՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

Կարպիս Գապասագալեան ՊԵՅՐՈՒԹ

Միրելի՛ եղբւ. Պատրիկ,
Վստահ եմ, որ համեստութիւնդ վիրաւորած պիտի ըլլայի, եթէ ողջութեանդ անարժանաբար քեզ յիշէի «անբասիր» վերնագիրով:

Այո՛, անբասիր մակդիրը հոմանիշ էր անձիդ ու հուլիանդ, ո՛չ միայն քեզ մօտէն ճանչցողներուն համար, այլեւ՝ անծանօթ մարդոց համար, որոնք նկատեր էին վերաբերմունքդ այլոց հանդէպ:

Այո՛, անբասիր կը համարուէիր մեզի համար, որովհետեւ բոլոր հարցերուն քու ըստ հուլիանդ քննութիւններուդ եւ ներկայացումներուդ մէջ անաչառ ու անշահախնդիր էիր:

Այո՛, առ յաւէտ պիտի մնաս անբասիր մակդիրի խորհրդանիշ, քու անհամար բարեմասնութիւններուդ եւ անշեղ նկարագիրիդ համար: Եթէ փորձեմ զանոնք գրիչովս թուղթին յանձնել, ապա պէտք է թուեմ ու մեկնաբանեմ բառագիրքի բոլոր ածականները, որոնք կ'արտացոլային քու անձնական եւ միութենական կեանքիդ ամբողջ տեսողութեան:

Գործեցիր ամրակուռ հաւատքով, առանց դժգոհելու, միշտ փորձելով կարողութիւններէդ աւելին եւ լաւագոյնը



Յուլիս 1988. համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Բ. համագումարի մասնակիցներ, Քալիֆորնիա, Յուլիս 1988: Պատրիկ Կիւլպեկեան ծուկնի, աջէն առաջինը:

տալ, որովհետեւ անով կը հրճուէիր ու կը ցնծայիր:

Միրելի՛ եղբայր Պատրիկ, թոյլ տուր որ ընդգծեմ նաեւ նկարագիրիդ կարեւորագոյն յատկանիշը, որ կ'ըսէր. «Գծաքաշը ուղիղ կ'ըլլայ, ծուռիկ-մուռիկ գծաքաշը չեն գործածեր»: Սաստիկ կ'ընդվզէիր, եթէ երբեք որեւէ տեղ, նոյնիսկ կամքէ անկախ, սխալներ կամ թերութիւններ արձանագրուէին: Յաճախ կ'ըսէիր. «Դուք ձեր անձին հանդէպ թերեւս կրնաք սխալիլ, բայց Հ.Մ.Ը.Մ.ին հաշուոյն իրաւունք չունիք սխալելու: Հ.Մ.Ը.Մ.ը սուրբ է»:

Ի վերջոյ կը շեշտէիր, որ միութենական պաշտօնը մարմիններու համար աթոռ չէ, ո՛չ ալ փետուր, զոր գլխուն կապուած կը պտըտինք, այլ՝ յանձնառութիւն է անխնայ աշխատանքի, անսակարկ նուիրումի, անշահախնդրօրէն եւ յամառօրէն ծառայելու դաշտ է, աշխատանքի լուծ է, որուն արդիւնքը բոլորին է, իսկ փառքն ու պատիւը՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

Միրելի՛ եղբայր Պատրիկ, ճիշդ է որ այսօր դուն Ֆիզիքապէս չկաս, բայց դուն մեր սերունդին համար միշտ պիտի ապրիս իբրեւ տիտան: Ափսո՛ս, որ ձեր սերունդին ժառանգորդները այլեւս անգոտանելի են...:

Յոյսով եմ, որ պիտի ծնին նորերը, որոնց համար ուզեցի գրել յիշատակիդ: Թերեւս բարեմիտ օրինակիդ պիտի ուզեն հետեւիլ անոնք, որոնք պիտի լսեն ու կարդան քու հաշուոյդ կատարուած հարազատ վկայութիւնները, որովհետեւ այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ.ը ծով կարիքը ունի նմաններուդ:

Լիարժէք միութենական կեանք մը բոլորեցիր, վաստակդ անգնահատելի է եւ անթաւան պիտի մնայ:

Հողը թեթեւ գայ վրադ...



Դեկտեմբեր 1982. Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի Շրջանային Ներկայացուցչական Ժողովի կազմ:

Եղբւ. Պատրիկ, ծուկնի, Ա. շարք, ձախէն չորրորդը (կարմիր փողկապով):

ԵՂԲԱՅՐ ՊԱՏՐԻԿԸ ԲԱՑԱԿԱՅ՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ

Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՄ

Իրօք, մարդ մը, որուն համար բացակայութիւն երբեք չկար, կարծես պիտի չըլլար:

Մարդ մը, որուն համար իր ստանձնած պատասխանատուութենէն բացակայութիւն անկարելի է որ ըլլար:

Մարդ մը, եղբայր Պատրիկ անունով, կարելի չէր որ չըլլար հոն, ուր պայման է որ ըլլար:

Եղբայր Պատրիկին հետ ծանօթութիւնս ունի գոնէ 14 տարւան պատմութիւն:

Ծանօթութիւն, որ սկիզբ առած է Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական Ժողովներու ընթացքին, որոնց իբրեւ Կեդրոնական Վարչութեան գանձապահ, ան յաճախ ներկայ էր:

Ծանօթութիւն, որուն օրերու գումարը հազիւ թէ երեք կամ չորս շաբաթը գերազանցած ըլլար, բայց այդ քանի մը շաբաթն իսկ բաւարար պիտի ըլլար, որպէսզի եղբայր Պատրիկը մտքիդ մէջ տարիներ ամբողջ գամուած մնար:

Հիմա որ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ մահը եղբայր Պատրիկին, աչքիս կը պատկերանայ տարիքով երէց, բայց հոգիով ու աշխատանքային եռանդով ինձմէ երիտասարդ եղբայր Պատրիկը:

Եղբայր Պատրիկը ո՛չ մէկ բացակայութիւն ունէր որեւէ ժողովէ, հանդիպումէ եւ սեղանէ:

Եղբայր Պատրիկ թէեւ լուռ շուք մը, բայց եւ այնպէս տիրական ներկայութիւն էր ամէն ժողովի:

Եղբայր Պատրիկ թէեւ ստանձնած էր միութեան լուծմաներուն հաւաքը, բայց եւ այնպէս ան չէր կրնար ծածկել այն



2004, Ծաղկածոր. համա-Յ.Ս.Ը.Մ.ական խմբապետական Դ. համագումարի մասնակիցներ: Համագումարի մասնակիցներ վաղամեռիկ քաղաքական գործիչ Վահան Յովհաննէսեանի հետ:

փաստը, որ ան արդէն մեծապէս տիրապետած էր իր պաշտած Հ.Մ.Ը.Մ-ին հոգեւոր հարստութեան:

Ձեմ գիտեմ, այդ Կիւլպէնկեան անունը ուրկէ՞ ժառանգած էր ան:

Ձեմ կարծեր, որ երբեւէ որեւէ կապ ունեցած ըլլար հինգ տոկոսին հետ:

Ձեմ գիտեմ, որքա՞նը իրեն կը հետաքրքրէր իր անուանակիցին աշխարհէն:

Ձեմ գիտեմ, եթէ երբեք պիտի զբաղէ՞ր լուծմաներով, եթէ անոնք չըլլային Հ.Մ.Ը.Մ-ի լուծմաները:

Այնուամենայնիւ, ըսեմ, որ հոգիով իրապէս որ մեծահարուստ մըն էր, իսկ իր առօրեայով կատարեալ հպարտ մշակ բանուոր մը, խիստ լուսակեաց ու զուսպ:

Տեսակ մը Կոմսեան խոնարհ հերոս մը, որուն երկու անգամ եթէ տեսնես, ամբողջ կեանքդ չես կրնար մոռնալ:

Հոզը թեթեւ գայ վրադ եղբայր Պատրիկ: Դուն մարդ մըն էիր, որ ո՛չ մէկուն հինգ տոկոսը առած ունէիր, իսկ եթէ մէկը կարողանար քու տեսակիդ հինգ տոկոսին տիրանալ, ամբողջ կեանք մը երջանիկ պիտի ապրէր:

Բարո՛ւ վ երթաս, եղբայր Պատրիկ: Օր մը ես ալ պիտի բացակայիմ, ու վստահ իրարու պիտի հանդիպինք, հակառակ պարագային ես քեզի պիտի փնտռեմ հազարներու մէջ:





Photo Róffi

ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ, ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵԱՆԻ

Կիրակի, 13 Դեկտեմբեր 2020-ի կէսօրին, Ֆրրն Շըպպէքի Ազգային գերեզմանատան մատրան մէջ, Հ.Մ.Ը.Մ. վերջին հրաժեշտ տուաւ երկու օր առաջ՝ 11 Դեկտեմբերին, միութենական 70 տարւան ծառայութեանէ ետք իր մահականացուն կնքած եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանին:

Եղբոր յուղարկաւորութեան եւ թաղման ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, եղբոր երկար տարիներու գործակիցներ եւ սկաուտներ, որոնք



պատուոյ պահակ կանգնեցան միութեան դրօշով եւ վաստակած շքանշաններով ծածկուած իր դագաղին շուրջ:

Յուղարկաւորութեան աւարտին, վաստակաւոր եղբոր բարեմասնութիւնները ներկայացնող խօսք մը արտասանեց Պօղոս Վրդ. Թինքճեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին անունով դամբանական

խօսք փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան:

Եղբ. Նաճարեան իր խօսքին մէջ նշեց, որ եղբայր Պատրիկ Կիւլպէնկեան տարիներ շարունակ անհաճախնդիր, բժախնդիր մօտեցումով եւ Հ.Մ.Ը.Մ.ավայել, միութենականի բարձր գիտակցութեամբ եւ նուիրումով ծառայեց իր պաշտած միութեան: Ան, աւելցուց եղբ. Նաճարեան, միութենական աշխատանքի ընթացքին յատկանշուեցաւ իբրեւ խոնարհ գինուոր միութեան, ազնիւ ոգիով եւ ընտիր նկարագիրով անհատ մը, միշտ համբերատար եւ ուշադիր անզգալաբար չվիրաւորե-

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժ միութեան «Արժանեաց» շքանշանակիր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու բազմավաստակ անդամ՝

ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 11 Դեկտեմբեր 2020-ին, Պէյրութ:



լու ոչ ոքի իրողութիւն մը, որ ականաւայ մեր հեւքոտ առօրեային մաս կը կազմէ միութենական գործակցութեան ընթացքին:

Շարունակելով, եղբ. Նաճարեան ըսաւ. «Թէեւ այսօր տխուր ենք, որ մեզմէ կը բաժնուիս առանց լուր տալու, առանց մեզի առիթը տալու քեզմէ հրաժեշտ առնելու, բայց շատ լաւ գիտենք,

որ դուն ապրեցար Հ.Մ.Ը.Մ.ական հարուստ կեանք մը, հաւատարիմ ըլլալով միութեան նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին եւ քու ազնիւ ու Հ.Մ.Ը.Մ.ական տիպարովդ օրինակ դարձար մեզի եւ քեզի ճանչցող բոլոր միութենականներուն» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 4-5):

Յուզարկաւորութեան եւ թաղման

կարգէն ետք, եղբայր Պատրիկ Կիւլպէնկեանի յոգնատանջ մարմինը հողին յանձնուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Այնուհետեւ, եղբոր մահուան ցաւակցութիւնները ընդունեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Պէյրութի մասնաճիւղի ներկայացուցիչները:




ԳՈՅԺ

Հ.Ս.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը եւ վարչութիւնը կը գումծեն թերթին երկար տարիներու վարչական պատասխանատու՝

ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 11 Դեկտեմբեր 2020-ին, Պէյրութ:

**Հ.Մ.Ը.Մ.Ը ՈՒՆԻ
ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳԻՐ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՒԻՆ,
ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹՒԻՆ
ԵՒ ՄԱՆԱԲԱՆԴ
ԿՈՉՈՒՄ` ՆԱՅՈՒՆ ՄԷՋ
ՆԱՅԸ ԱՆԽԱՌՆ
ԵՒ ԱՆԱՂԱՐՏ
ՊԱՆԵԼՈՒ ՆԱՄԱՐ**



21 -րդ դարու սկզբ-նաւորութեան, մենք, իբրև Հ.Մ.Ը.Մ.ը մեր սրտին, հոգիին, մտքին եւ գգացումներուն մէջ գգուող եւ սիրող հայրողիներ, չենք կրնար անտարբեր մնալ աշխարհի պարտադրած դրական եւ ժխտական երեւոյթներուն դիմաց:

Այս օրերուն, համաշխարհայնացումի հոսանքով, երբ մէկ կողմէ ազատութիւններու մասին կը խօսուի՝ մարդկային իրաւանց պաշտպանութեամբ, եւ միւս կողմէ մակերեսայնութիւնը, թեթեամտութիւնը եւ մեր պարագային օտարամտութիւնը կը մաշեցնեն մեր երիտասարդները մեծ մասամբ, մենք ալ մտահոգութեամբ կը նայինք միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ, եթէ այժմ չկարենանք բժշկել մեր արտերը ու հիւանդութիւնները ընդհանրապէս, ինքնաքննութեամբ եւ ինքնաքննադատութեամբ, գալիք օրերուն մեր վերքերը պիտի մեծնան, անբուժելի պիտի ըլլան, ու այն ատեն դժուար պիտի ըլլայ առողջ մարմինի մէջ

16 Յունուար 2021-ին, ի Տէր հանգաւ Հայ Եկեղեցոյ հաւաքատը սպասարներէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջին սերունդի ներկայացուցիչներէն Մեղրիկ Եպս. Բարիքեան (1968-2021), որ աւելի քան երեք տասնամեակ եղաւ հաւաքի զինուորեայ մը եւ առաքելութեան նուիրեալ մը:

Մեղրիկ Սրբազանին ծառայութեան դաշտերը եղան Լիբանանը, Գանապան եւ Պարսկաստանը: Ուր որ գրկուեցաւ ան, շարժում, խանդավառութիւն եւ մթնոլորտ սրեղծեց իր շուրջ: Մեղրիկ Սրբազան եղաւ ժողովրդային լայն խաւերու եւ յարկապէս երիտասարդներու մօտիկ հոգեւորական: Ան Հ.Մ.Ը.Մ.ը սիրեց հոգուով ու սրտով եւ յաճախ արտայայտուեցաւ մեր իրականութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ին վերապահուած կենսական դերին մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի մասին անոր հրապարակային ելոյթներէն յիշարժան կը մնայ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւ եղած շրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի 35-ամեակին առիթով իր արարասանած պարգումը, 23 Հոկտեմբեր 2004-ին:

Իր վախճանման փառք առիթով, Հ.Մ.Ը.Մ. կը խոնարհի Սրբազանին վաստակին ու յիշարակին դիմաց եւ այս առիթով կը ներկայացնէ հարուածներ յիշեալ պարգումէն, որուն ամբողջութիւնը օրին լոյս տեսած է «Մարգիկ» յայտնողական երկու քիւով (ԻԳ. փարի, քիւ 12, 270, էջ 11-12 եւ ԻԳ. փարի, քիւ 1, 271, էջ 11-13):

Խումկի ու մոմ իր անմեռ յիշարակին:

արթուն միտք ու ազնիւ հոգի ունենալը:

Յառաջացած այս աշխարհին մէջ, եթէ քայլ չպահենք աշխարհի զարգացումներուն հետ, կը ճահճանանք եւ կը նեխինք:

Բայց զգո՛՛յ՛ն...

Քայլ պահել չի նշանակեր անցեալը մոռնալ եւ ներկայի սիրոյն վաճառել պատիւ եւ արժանապատուութիւն:

Հայոց պատմութեան բոլոր ժամանակներուն ալ, մեր եւ թագաւորները, եւ իշխանները, եւ հոգեւորականները, եւ գիտնականները, եւ ժողովուրդը, ո՛չ միայն քայլ պահեցին իրենց օրերու աշխարհի յառաջընթացին հետ, այլեւ՝ զարգանալով եւ սորվելով, կայսրութիւններն ու իշխանութիւնները գերազանցեցին բոլոր մակարդակներու մէջ, գիր, գրականութիւն եւ մշակոյթ ստեղծելով:

Այսօր ալ, Հ.Մ.Ը.Մ.ը յանձնառու պէտք է ըլլայ ազգային արժէքներու հանդէպ ցուցաբերած իր բծախնդրութեամբ, քալէ ժամանակին հետ, առանց սակայն յանձնուելու ժամանակին:

Անցնող հարիւրամեակին, Հ.Մ.Ը.Մ-ը կեանքի ամէնէն դժուար պայմաններուն մէջ ինքզինք պահեց ու պահպանեց, միշտ բարձրանալով բարձրացնելու գաղափարախօսութեամբ, եւ եղաւ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ, ձեռք երկարելով բոլորին:

Երբ մեր ոտքերուն տակ Հայաստան չունէինք, Հ.Մ.Ը.Մ-ը մեզի համար եղաւ Հայաստան:

Երբ ազգի մը արժանապատուութիւնը եղող սեփական դրօշ չունէինք, եղաւ ու մնաց Մայիս 28-եան յաւերժական յաղթանակով եւ արեամբ շողախուած Եռագոյնին ջերմ պահպանը եւ, ինչո՞ւ չէ նաեւ, բաց ճակատով եւ հպարտութեամբ կարելի է ըսել՝ իրաւական տէրը:

Երբ կարօտը ունէինք հայկական բանակի, իր շքերթներով ու սողանցքներով, իր շեփորախումբերով, կակուղ թաթիկներով, գայլիկներով եւ մրջնիկներով, արենոյշներով եւ սկառուտներով, Հ.Մ.Ը.Մ-ը իւրաքանչիւրիս համար եղաւ կամաւոր եւ պատիւ ունեցող բանակ, որուն հպարտ քալուածքով հրճուեցաւ Արարատը, ցնծաց շղթայակապ մեր պապենական ու բռնագրաւեալ հայրենիքը, խայտաց մեր նահատակներու հոգին, իսկ քաջ եւ խրոխտ Հ.Մ.Ը.Մ-ականի ոտքին տակ ճըզ-մըլեցաւ ամէն անարդարութիւն:

Անցնող տարիներուն, Հ.Մ.Ը.Մ-ը մեր լքուած հոգիներուն հայրենիքի յոյսը ներշնչեց:

Օտար եւ մուլթ երկիրներու տակ ապրող հայերուն համար եղաւ մշտնջենական լոյս եւ սփոփանք:

Օտարին դառն եւ անհամ բոյսերը, պղտոր եւ լեղի ջուրերը, դաշտերն ու անապատները, հովիտներն ու արտերը Հ.Մ.Ը.Մ-ի կամքով դարձան քաղցր, համեղ, ծաղկուն եւ պտղալից: Զիննն ու ձմեռները եղան գարուն, ձանձրոյթը՝ վայելք, անարգանքը՝ պատիւ:

Հ.Մ.Ը.Մ-ով օտար օդն ու շունչը մեզի համար եղան հայրենի օդ եւ շունչ:

Ահա անցեալը...: Անցեալը շատ գեղեցիկ էր եւ զգլխիչ: Կարեւորը ներկան ու ապագան են մեզի համար:

Եթէ ներկան չկարենանք զօրացնել, ապագան պիտի ըլլայ մեղկ, թոյլ ու տկար:

Եթէ այսօր չտազնապինք, ապագան պիտի ըլլայ մուլթ եւ մեռելային:

Եւ ինչո՞ւ այս բոլորը, որովհետեւ անտարբերութեան հոսանքէն եւ ախտէն կ'ազդուի նաեւ Հ.Մ.Ը.Մ-ը: Ամէն օր քիչ մը աւելի կը նուազի թիւը եւ համակիրներուն, եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ականներուն:

Արդ, պէ՛տք է վերափոխուինք եւ վերակազմակերպուինք:

Վերափոխուողները պիտի ըլլանք մե՛նք՝ այսօրուան պատասխանատուներս, իսկ պէ՛տք է վերակազմակերպուին գալիք սերունդները մեզմով:

Հ.Մ.Ը.Մ-ական պատրաստել գալիք օրերուն համար: Ահա ա՛յս պիտի ըլլայ այսօրուան մեր պատասխանատուներուն նշանաբանը:

21-րդ դարու այս արագընթաց հեւքին մէջ չենք կրնար ապրիլ, դեկավարել ու դեկավարուել այնպէս ինչպէս էին, մինչեւ երէկ:

Այսօրուան աշխարհի յառաջխաղացքին հետ քայլ պահելը եւ հաւասար մակարդակ ունենալը մեծ զոհողութիւններ կը պահանջեն իւրաքանչիւրէս, բայց տեղ մը պէտք է սկսիլ: Իսկ սկսելու համար պէտք է մեր կամքերը զսպանակել եւ զգոյշ ըլլալ ազգայինն ու աւանդականը ոտքի կոխան չդարձնելու համար:

Զի բաւեր միայն հպարտանալ անցեալով, եթէ գալիք օրերու ապագան չէ ապահովուած:

Այսօրուան Հ.Մ.Ը.Մ-ականը պէ՛տք է գիտնայ, ինչպէս միշտ, որ ինք, իբրեւ ՀԱՅ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անդամ, չի՛ նմանիր սկառուտական այլ շարժումներու, որովհետեւ ՀԱՅ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը միայն եւ յատուկ է հայուն: Հ.Մ.Ը.Մ-ը օտար մարմնակրթական միութիւններու չի նմանիր, որովհետեւ ՀԱՅ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ունի իւրայատուկ նկարագիր, պարտականութիւն, պարտաւորութիւն եւ մանաւանդ կոչում՝ հայուն մէջ հայր անխառն եւ անաղարտ պահելու:

Հ.Մ.Ը.Մ-ականը պարտաւոր է պահել, եւ պէտք է գիտակցութիւնը ունենայ հայու արժանապատուութիւնը բարձր պահելու:

Հ.Մ.Ը.Մ-ականը պարտաւոր է իրեն յանձնուած ազգապահպանման պարտաւորութիւնները գործադրել ի գին ամէն զոհողութեան:

Հ.Մ.Ը.Մ-ականը պարտաւոր է իր կոչումին՝ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ եւ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ըլլալու հաւատամքին ամբողջականօրէն հաւատարիմ մնալ:

Անցեալին, կեանքի դժոգակ պայմաններուն մէջ, երբ ամէն օր նոր մարտահրաւէր ցցուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ին դէմ Հ.Մ.Ը.Մ-ականը բնաւ չկորսնցուց իր ուղղութիւնն ու ճանապարհը ճշմարտութեան: Անոր համար ալ Հ.Մ.Ը.Մ-ը սփիւռքացած հայերուն համար, բանաստեղծին բառերով, եղաւ մեծ





երազին՝ Հայաստանի բազուկին զարկը:
 Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ բուռ մը մեր հայրենի հողէն:
 Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ ծիւղ մը մեր հայրենի արտէն:
 Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ թերթիկ մը մեր հայրենի ծաղիկէն:
 Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ շիւղ մը մեր հայրենի հասկէն:
 Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար եղաւ հայրենի երկիր, Հայաստան,
 Արցախ, Նախիջևան ու Զաւախք:

Այսօր, երբ այլեւս ունինք հայրենիք եւ հող, Եռագոյն դրօշ եւ ազատութիւն, բանակ եւ պետութիւն, Հ.Մ.Ը.Մ.ը եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներն ու համակիրները պէտք է գիտակցին, որ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքն ու առաքելութիւնը կը կրկնապատկուին:

Այսօրուան մարտահրաւէրները բազմազան են.-
 Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի մեր հաւատքին համար:
 Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի մեր ազգային արժանապատուութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի մարդուն մէջ հայը պահելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի Մեսրոպաշունչ լեզուն եւ Սահակ Մեսրոպեան այբբենական բանակը միշտ պատրաստ եւ արթուն պահելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի Վարդանանց սուրն ու վահանը պատրաստ եւ բարձր պահելու համար:

Այլ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է պայքարի սփիւռքացած մեր ժողովուրդի գոյութեան, յաւիտենականութեան եւ յաւերժութեան համար:

Եւ երբ կը մտածենք այս բոլոր մարտահրաւէրներուն մասին, առանց վարանումի, կարելի է վստահեցընել, որ Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է



նուիրուի մեզ ազատելու նուիրական գործին, արդի ժամանակներու սպանդներէն փրկելով մեր ողջ էութիւնը:

Այս օրերուն հայերէն լեզուն կը չքանայ մեր զաւակներու շրթներէն: Հ.Մ.Ը.Մ.ական հայերէն խօսէ:

Յարգանքը կը պակսի մեր զաւակներուն մօտ: Հ.Մ.Ը.Մ.ական պատուէ՛ հայրդ ու մայրդ, մեծդ ու փոքրդ:

Միշտ օտարինը աւելի գեղեցիկ կը թուի: Հ.Մ.Ը.Մ.ական, մի՛ մոռնար քեզի համար նահատակուած պատմութեան բոլոր մարտիրոսները, նահատակները, Աւարայրի ճակատամարտէն մինչեւ Օթառուայի բանտերուն մէջ իրենց կեանքերը զոհած ու մաշեցուցած ձեր եղբայրները՝ Թիթիզեան Բաֆֆիները, Նուպարեան Յովիկները եւ Մարաշլեան Գէորգները:

Կը մոռնա՛նք, որ «Օտարը մեզի Փայտա չունի»: Հ.Մ.Ը.Մ.ական, մարմնով, մտքով հսկայ դարձիր, ջանք, ճիգ թափէ դուն ամէն օր, եղիր առողջ եւ հպարտ քու հայութեանդ համար եւ մի ձգեր, որ հոգիդ ստրկանայ, միտքդ մթազնի եւ մարմինդ օտարի գիրկին մէջ հանգստանայ:

Այսօր, անհունօրէն եւ հոգիիս ամբողջ զօրութեամբ կը հաւատամ, որ այլ կառոյցներու կողքին նաեւ, ու մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ը տէր պէտք է ըլլայ մեր լեզուին, հայու արժանապատուութեան, ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին:

Պէտք է շարունակել նուիրական եւ սրբազան աշխատանքը Բրիտեան Շաւարշներու, Հինգլեան Յովհաննէսներու եւ Յակոբեան Գրիգորներու, Խոյեան Տիգրան Քահանաներու, Ճիգմէճեան Հայկերու, Շահինեան Գարրօներու, Փափագեան Վահրամներու, Խորասանճեան Ժիրայրներու, Սիրունիներու եւ անոնց, որոնք իրենց կամքով եւ յաւիտենականութեան վառ յոյսերով հիմնեցին Հ.Մ.Ը.Մ.ը:

Հայ հանճարեղ գրող եւ մանկավարժ Լեւոն Շանթ կ'ըսէ. «Այսպէս է կեանքը. ծով մըն է: Ալիքները կը զարնեն ու կը մօտեցնեն մարդիկը իրարու: Ալիքները նորէն կու գան, կը զարնեն ու կը զատեն մարդիկը իրարմէ»:

Չենք կրնար եւ պիտի չուզենք, որ կեանքի այս ճշմարտութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի բաժինը ըլլայ, կ'ուզենք որ կեանքի ալիքները մեզ եւ մեր զաւակները համախմբեն Հ.Մ.Ը.Մ.ին շուրջ, բայց չենք ուզեր բաժնուիլ Հ.Մ.Ը.Մ.էն, երբ կեանքի ծովուն ալիքները բարձրանան, որովհետեւ մենք կը հաւատանք, որ առանց հովի եւ ալիքի կըրնա՛նք առագաստ քշել, բայց չենք ուզեր Հ.Մ.Ը.Մ.ը ձգել, նոյնիսկ եթէ երբեք մեր աչքերուն արցունքը պիտի չորնայ:

ԻՐԵՆՑ ԳԾԱԾ ՃԱՄԲԷՆ ՊԻՏԻ ՏՈՂԱՆՑԵՆՔ ՈՒ ԻՐԵՆՑ ԼՈՅՍՈՎ ՊԻՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԻՒՆՔ

Նահապուակ եղբ. Մոսիկ Սեքլեմեանի անունով պահի բացման հանդիսութեան, Վիեննա, այս խօսքը իբրև պատգամ արտասանուած է Հ.Յ.Գ. Կեդրոնական Եւրոպայի կոմիտէի ներկայացուցիչ եղբ. Գեորգ Յակոբեանի կողմէ:

**Ով կամաւոր է գրւում, այն օրից հերոս է նա,
Իր ազգի ազնիւ կուռում ամենամեծ յոյսն է նա,
Սիրայօժար, մահն աչքերին է գնում,
Առիւծի պէս է կուռում:
Ձի երազում ո՛չ անուն, ո՛չ ոսկի, ո՛չ դանձ,
Հայրենիքն է իր հոգում սրբազանացած:
Կռիւներ է մղում նա բոցերում անշէջ,
Սխրանքները չի պատմում, պահում է իր մէջ:**

Հաւաքուած ենք յարգելու եւ մեծարելու յիշատակը հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին իրենց ամէնէն թանկագինը՝ կեանքը զոհաբերած, մերօրեայ նահատակներու հոյլին պատկանող, կամաւորական, Հայաստանի Հանրապետութեան «Արիութեան» մետալակիր, Մովսէս (Մոսիկ) Սեքլեմեանի յիշատակը: Իբրեւ յարգանքի եւ մեծարանքի խորհրդանշական արտայայտութիւն, այսօր այս սրահը միասնաբար կը կոչենք՝ «Մոսիկ Սեքլեմեան սրահ»:

Մոսիկը ծնած էր 1991 թուականին, Դեկտեմբերեան այս օրերուն, Սուրիոյ հայաշատ Գամիշլի աւանին մէջ: Մոսիկին Հայրը, մասնագիտութեամբ բժիշկ, տղթ. Եսայի Սեքլեմեանը, արմատներով մուսա լեռցի, երկար տարիներ Սպանիոյ մէջ ուսանելէ ետք, կը մասնագիտանայ Հայաստանի մէջ, ու իբրեւ ներքին հիւանդութեանց բժիշկ, տասնամեակներ կը ծառայէ Սուրիահայ Օգնութեան Խաչի ընկերաբժշկական կեդրոնին: Իսկ մայրը, թուրքահայուհի Լուսին Տէր Արթինեանը, արմատներով այնթապցի, 26 տարի կը պաշտօնավարէ Հալէպի Կրթասիրաց Վարժարանին մէջ, իբրեւ թուրքահայութեան եւ գիտութեան ուսուցիչ եւ ամէնօրեայ դրութեամբ կը զբաղի հայ նորահաս սերունդներու դաստիարակութեամբ: Այսինքն, Մոսիկը պտուղն է այն ծառին, որուն ճիւղերն ու արմատները անած են գիտութեամբ, զարգացումով, ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ ու մանաւանդ ծառայութեամբ:

Երեք տարեկան մանուկ հասակին Մոսիկ ընտանիքին հետ կը տեղափոխուի Հալէպ, ուր նախնական եւ միջնակարգ կրթութիւնը կը ստանայ Կրթասիրաց վարժարանին մէջ, ապա երկրորդական ուսումը կը շարունակէ արհեստից վարժարանի մէջ եւ կը վկայուի Հալէպի Արհեստից Ուսումնարանէն, իբրեւ ջեռուցման եւ օդափոխութեան սարքերու մասնագէտ:



Փոքր տարիքէն ան կ'անդամագրուի հալէպահայ միութիւններուն եւ տան ու դպրոցին կողքին ազգային դաստիարակութիւն կը ստանայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Գ. Սուրիոյ Երիտասարդական Միութեան մէջ: 2014-ին ան կը կատարէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամակցութեան իր երդումը:

Մոսիկ սուրիական պատերազմի առաջին օրէն, մասնագիտական գործին կողքին, կը նուիրուի Հալէպի հայաշատ թաղամասերու պաշտպանութեան ամէնօրեայ ծանր աշխատանքին: Մոսիկին ընկերները կը վկայեն, որ ան նկարագրիով ինքնամոփօ էր (հակառակ մանկութեան իր չարուկ ու անհանդարտ խառնուածքին), կացութիւնները հանդարտօրէն կը վերլուծէր եւ ճիշդ որոշումներ կու տար անել կացութիւններէ դուրս գալու համար: Ան պատրաստ էր անխտիր բոլորին օգնելու: Սուրիական պատերազմի ծանր օրերուն, կենցաղային տարրական կարիքներու բաւարարումէն սկսեալ (Ջուր, հաց, սնունդ եւ դեղորայք հասցնել), փյառակներու տակէն վիրաւորներ փրկել, վիրաւորներ տեղափոխել, գիշերները պահակութիւն ընել եւ զէնքը ձեռին մարտական գործողութիւններ վարել՝ հայաշատ թաղերը պաշտպանելու համար հրոսակային խումբերու յարձակումներէն: Ան շրջան մը կը մասնակցի նաեւ Գամիշլիի հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան գործին:

2016-ի Արցախի քառօրեայ պատերազմին, Մոսիկն ու ընկերները շատ կը փափաքին Արցախ մեկնիլ, սակայն սուրիական պատերազմը չ'արտօներ այդ մէկը եւ իրենց երազը կամ մուրազը կ'իրականանայ, երբ Արցախը գիրենք կը կանչէ Սեպտեմբեր 2020-ին: Մոսիկ իր մարտական ընկերներուն՝ հրամանատար Յարութ Բանոյեանին եւ Յակոբ Աստարճեանին հետ անմիջապէս կ'անսայ Հայաստանի Հանրապետու-



թեան պաշտպանութեան բանակի հրաւէր կոչին եւ կը մեկնին Հայաստան ու Արցախ՝ պաշտպանութեան նախարարութեան հովանիին տակ յատուկ նշանակութեան եւ ժամանակակից զինամիջոցներու ծրագիրներ իրականացնելու եւ խնդրիներ լուծելու համար: Անոնք կը նահատակուին Շուշի մէջ, 5 Նոյեմբեր 2020-ին եւ իրենց նահատակութեան գոյժը կը հաստատուի 14 Նոյեմբերին: Երեք նահատակներուն սրբացած աճիւնները այս պահուն կը հանգչին Եռաբլուրի մէջ: Յետ մահու, Մոսիկը կը պարտեւատրուի Հայաստանի Հանրապետութեան «Արիութեան» մետալով:

Յարգելիներ,

Մեր այսօրուան խորհրդածոթիւնն ու պատգամը կ'արժէ կեդրոնացնել երեք կէտի շուրջ՝ սուգ, հպարտութիւն եւ պարտաւորութիւն:

Մենք ազգովին կը սգանք մեր բոլոր նահատակները, որոնք իրենց ընտանիքները, սիրելիները, հանգիստը եւ ապագան ձգած, իրենց կեանքերը զիտակցաբար ու խոր համոզումով զոհաբերեցին յանուն հայրենիքի պաշտպանութեան: Կը սգանք կորուստը պայծառ ու լաւատես սերունդի մը, որ դեռ ինչէ՛ր ունէր տալիք մեր ժողովուրդին, հայրենիքին ու համայն մարդկութեան: Սուգը ողբ է, ցա՛ւ է, թախի՛ծ է ու մեծ վիշտ, եւ իւրաքանչիւր զիտակից հայ մարդ այս օրերուն այս բոլորը կ'ապրի իր հոգւոյն եւ էութեան խորը: Մենք կը սգանք Մոսիկը, Յարութը, Յակոբը, Արտակը, Գէորդը, Քրիստափորը եւ մնացեալ հազարաւոր քաջարիները ու մեր սուգին զուգահեռ՝ մեր երակներուն մէջ կը շրջագայի հպարտութեան զգացումը:

Հպարտ ենք մենք այսօր: Հպարտ ենք ո՛չ թէ մեր կրած խայտառակ պարտութեամբ, քաւ լիցի, այլ՝ մեր հերոս նահատակներով: Հպարտ ենք, որ Մոսիկին նման հայորդիներ ունի հայ ժողովուրդը: Հպարտ ենք, որ Սփիւռքի հեռաւոր ափերուն մէջ ծնած ըլլալով, կամաւորաբար, կը շեշտենք «կամաւոր» հանգամանքը, մեկնեցան Արցախ՝ հայրենի հողն ու արժանապատուութիւնը պաշտպանելու համար: Հպարտ ենք, որովհետեւ տիկին Լուսինին նման առիւծասիրտ ու հերոսա-

ծին մայրեր ունինք մեր իրականութեան մէջ: «Կարեւորը թող ա՛զգը ապրի», ըսաւ տիկին Լուսին իր ցաւին ու տառապանքին ամէնէն խոցելի պահուն, իսկ ինչպէ՛ս չհպարտանալ նման մայրերով ու չխոնարհիլ անոնց առջեւ: Հպարտ ենք, որովհետեւ ըստ բազմաթիւ վկաներու, տղաքը միշտ կ'երագչին միասին հայութեան համար նահատակուիլ եւ Եռաբլուրի մէջ հանգչիլ ու կարծէք իրենց երազը Աստուածային նախախնամութեամբ մը իրականացած է այսօր: Հպարտ ենք, որովհետեւ, ինչպէս որ Մոսիկին քոյրը կը պատմէ, տղոց թաղման արարողութեան ընթացքին, երբ ծնողները դազադին մօտ կանգնած էին, բարձրաստիճան սպայ մը կը մօտենայ իրենց եւ կը հաստատէ, որ ան պատիւ ունի այս տղոց հետ աշխատելու համար, կը հաստատէ նաեւ, որ իրենց տարած աշխատանքը անգնահատելի է եւ ամբողջ Հայաստանի համար նշանակութիւն ունի: Ան կը խոստովանի, որ Մոսիկն ու ընկերները իսկական հայրենասիրութեան վառ օրինակներ են եւ իրենցմէ շատ բան ունինք սորվելիք բոլորս: Իրենցմէ սորվելու հանգամանքն է, որ սուգէն հպարտութիւն, հպարտութեանէն պարտաւորութիւն կ'առաջնորդէ մեզ:

Յարգելի հայրենակիցներ,

Մենք պարտաւոր ենք դասեր քաղել Մոսիկին ու բոլոր նահատակներուն սիրագործութիւններէն: Պարտաւոր ենք յարգել անոնց յիշատակը եւ շարունակել իրենց կէս ձգած ճանապարհը: Առ այդ, խօսքս կ'ուղղեմ այս սրահին մէջ գտնուող երիտասարդներուն, որ Եւրոպայի հանգստաւէտ ու համեմատաբար խաղաղ պայմաններուն մէջ ապրելով չհեռանան ազգային կեանքէ, չհեռանան այս ակումբէն, այս շէնքէն ու այս եկեղեցիէն, տէր ու պաշտպան կանգնին մեր ազգային արժէքներուն, հայ եկեղեցւոյ, մեր ազգային-մշակութային ու հոգեմտաւոր ժառանգութեան եւ ամէնէն կարեւորը՝ անշահախնդրօրէն ծառայեն մեր ժողովուրդին ու պետականութեան, ու երբ անհազանգը անգամ մը եւս հնչէ, Մոսիկին նման պատրաստ ըլլան իրենց գերագոյնը զոհաբերելու:

Մեր պետականութեան համար տագնապալի ու ծանր այս օրերուն, իւրաքանչիւրս, անխտիր, գործ ունինք կատարելիք՝ քաղաքական, քարոզչական, մարդասիրական եւ ընկերային մակարդակներու վրայ: Ամէն անգամ որ Մոսիկին հայեցի ու խրոխտ աչքերուն կը նայիք, իրմէ ստացե՛ք քաջութիւն, անկոտորում կամք, զոհողութեան եւ ծառայասիրութեան ոգի: Ամէն անգամ որ իր աչքերուն կը նայիք, քիչ մը աւելի մարդասէր, ազգասէր ու հայրենասէր դարձե՛ք: Մեր նահատակներուն կտակը մէկ է՝ շարունակել պայքարը յանուն մեր պետականութեան եւ ազգային շահերու իրագործման, վեր դասել համազգայինն ու պետութիւնը, պետականութիւնը՝ անհատական, խմբակային կամ հատուածական շահերէ: Պարտաւոր ենք չյուսահատիլ, չընկճուիլ, դուրս գալ պարտուողա-

կան տրամադրութիւններէ եւ պատրաստուիլ ապագայի յաղթանակներուն, Շուշիի ազատագրութեան եւ կայուն խաղաղութեան հաստատման: Մոսիկն ու իր ընկերները համայն հայութեան նահատակներն են:

Յարգելին՛ըր,

Նահատակները իրենց նահատակութեան պահէն սկսեալ կը դադրին մէկ ընտանիքի, մէկ շրջապատի, մէկ կուսակցութեան գաւազը ըլլալէ, բարոյականօրէն եւ իմացականօրէն անոնք կը պատկանին համայն հայ ժողովուրդին: Այսօր Մոսիկը, իր ընկերները ու բազմահազար նահատակները, առանց խտրութեան, մեր գաւազներն ու եղբայրներն են ու անոնց ծնողները մեր բոլորին ծնողներն ու հարազատներ են, որոնց դիմաց բոլորս պարտաւորութիւններ ունինք կատարելիք: Մենք պարտաւոր ենք յարգել անոնց յիշատակը, պարտաւոր ենք չքաղաքականացնել ու քաղաքական սին հաշիւներու չվերածել իրենց նահատակութիւնը, պարտաւոր ենք նպաստել, որպէսզի մեր նահատակներուն ծնողները արժանավայել կեանք մը ապրին: Այս առթիւ շնորհակալութեան յատուկ խօսք կ'ուղղենք Աւստրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան եւ աշխատակիցներուն իրենց ցուցաբերած համագործակցութեան համար:

Մոսիկն ու իր նման հազարները մեր կողքին չեն այսօր, անոնք միացան պատմութեան ընթացքին հայութեան համար նահատակուած հերոսներու աստղահոյլին եւ իւրաքաչիւրը



այսօր, իբրեւ մէկական փայլուն աստղ, խաւարին մէջ կը լուսաւորէ մեր հոգիներն ու մեր ճանապարհը: Իրենք վերէն, երկնային բարձունքներէն կը գծեն եւ կը լուսաւորեն արդարութեան ճիշդ ուղին, որ կ'անցնի Շուշիի արահետներէն: Իրենց գծած ճամբէն պիտի տողանցենք ու իրենց լոյսով ու փայլքով պիտի առաջնորդուինք խաւարէն դէպի լոյս, պարտութենէն դէպի յաղթանակ ու կայուն խաղաղութիւն:

Յաւե՛րժ փառք մեր բոլոր նահատակներուն:

PINK
Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՒԻՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ. 1918-1927 (Գ. ՄԱՍ)



Հ.Մ.Ը.Մ.Ի պատմության նշանակալից ու անծանօթ մէկ հանգրուանին վրայ կարելու լոյս սփռող աշխատասիրութիւն մըն է ստորեւ տրուած պատմական ակնարկը, գրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Զեքիճեանի կողմէ:

Ակնարկը երրորդ մասն է երկար ուսումնասիրութեան մը, որ մաս առ մաս կը հրատարակուի «Մարգիկ»-ի յաջորդական թիւերով:

Նիւթը կ'անդրադառնայ Ա. Հանրապետութեան եւ անոր յաջորդող շրջանին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած գործունէութեան: Այս մասին միութեանական պատմագիտութիւնը գրեթէ բան չէ հաղորդած մեզի:

Զեքիճեան նիւթը ուսումնասիրած եւ ներկայացուցած է Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի գիտաժողովին, ապա զայն վերամշակելով եւ յաւելեալ նիւթերով հարստացնելով, զայն պատրաստած է հրատարակութեան:

կառքը կանգ առնէ եւ ճամբորդները մօտակայ անտառներէն վառելիափայտ հաւաքեն շոգիին համար...

«...Երեւանի Անգլիական այգիին մէջ, մեր սկառտներուն դրօշակով խօսելու փորձերէն տպաւորուած, յայտնի հան-

րային գործիչ եւ մտաւորական Գրիգոր Չալոսուշեան գեղեցիկ յօդուած մը գրած է Երեւանի «Յառաջ» թերթին մէջ», կը գրէ Խոյեան, որուն այս մասին պատմած է ամերիկացի հայախօս միախոնար՝ բժիշկ Աչըրը, որ կարդացած է յօդուածը եւ իր կարգին բարձր գնահատած է Հայաստանի սկառտութիւնը՝:

- 1 Հոկտեմբեր 1920-ին Վահան Չերազ կը հրատարակէ կրթութեան նախարարութեան իր պաշտօնէն, միանալու համար կամաւորներուն: «...Վաղը Աղպապա [Կարսի շրջան] կը մեկնիմ ձի բերելու համար», կը գրէ նամակի մը մէջ²¹: Տիգրան Խոյեան կը մնայ Ալեքսանդրապոլ, իսկ Օննիկ Եազմաճեան՝ Երեւան:

- 9 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»- Կը նշուի, թէ Ամերիկեան Նպաստամատոցի կոմիտէի ներկայացուցիչ Եղիշէ Քաջունիին դիմում կատարուած է Իգտիլի բնակչութեան ձմեռնային զգեստեղէն մատակարարելու:

- 12 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»- «Կիրակի օրը [10 Հոկտեմբեր 1920 Երեւանի մէջ] տեղի ունեցաւ սկառտ տասնապետներու [Բ. Կարգի] քննութիւնը, սկառտ մարզիչ Օննիկ Եազմաճեանի եւ այլ քննիչներու մասնակցութեամբ: Քննութիւնը յաջողութեամբ աւարտեցաւ, բոլոր տասնապետները [հարցարանին] ճշգրիտ պատասխաններ տուին»³:

Յարութ Զեքիճեան ՊԵՅՐՈՒԹ

- «26 Սեպտեմբեր 1920-ին՝ Ալեքսանդրապոլի մէջ տեղի կ'ունենայ տեղւոյն «Մեծն Վարդան» եւ Երեւանի «Սպորտ» ակումբին միջեւ ֆուտբոլի փոխ վրէժի մրցում մը՝ Կազաչի ֆոստի [նախկին ռուսական զօրանոց՝ որբանոցի վերածուած: Կային նաեւ՝ Փոլիկոն եւ Սեվերսքի փոստերը: Այս եւ նման փակագիծերով կատարուած լուսաբանական միջամտութիւնները կատարուած են մեր կողմէ- Յ.Զ.] դաշտին վրայ, ներկայութեամբ Շիրակի նահանգապետ Կարօ Սասունիի եւ հոծ բազմութեան, տոմսերը սպառած էին: Կարգապահութեան կը հսկեն սկառտներ եւ ոստիկաններ: Իրաւարար կը նշանակուի Տիգրան Խոյեան, որ գրեթէ անդադար կը սուլէ... Երեւանցիները 1-0 արդիւնքով կը յաղթեն՝ հակառակ երկու գիշեր շոգեկառքին մէջ անհանգիստ, անօթի եւ անքուն մնալուն: Երկու օր, քանի որ Ուրբաթ երեկոյեան ժամը 9-ին մեկնելիք շոգեկառքը Շաբաթ առաւօտ ժամը 9-ին ճամբայ կ'ելլէ... Վառելանիւթի պակասը լրջօրէն կը խանգարէր հազորակցութիւնը: Սովորական երեւոյթ էր, որ շոգե-

Ալեքսանդրապոլի երեք որբանոցներու որբերուն թիւը անցած է 22 հազարը:



- 14 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»⁴. «Երէկ [13 Հոկտեմբեր 1920] Երեւան հասան Պոլիսէն ներգաղթող 120 [պէտք է ըլլայ 126, ըստ Հ.Մ.Լ.Մ-ի «Հայ Սկսուտ» պաշտօնաթերթին] սկսուտ հայ պատանիներ» [14 տարիքը բոլորած, եւ եօթը պատասխանատուներ՝ գլխաւորութեամբ Զաւէն Սարունիի, Հայկ Սերէնկիւլեան եւ հողագործութեան մասնագէտներ Կոպեռնիկ Թանտրոնեան, Փարթամ, Յարութիւն Արքեան, Զարմայր Մարտիրոսեան եւ այլք]: Վասն Չերագ նամակի մը մէջ նշած է, որ պատուիրակութիւնը Պոլիսէն սկսուտական 500 տարագ բերած է¹:

Նոյն թիւին մէջ Արշակ Սաֆրատեան Լոնտոնէն 15 Օգոստոս 1920 թուակիր «Պոյ-սկսուտների միջազգային խաղահանդէսը» [Լոնտոնի մէջ կայացած] խորագիրով թղթակցութիւն մը գրած է, քաջալերելով բոլոր հայ սկսուտները մասնակցելու յաջորդ տարի կայանալիք խաղերուն, դիմելով հետեւեալ հասցէին.- The Armenian Bureau, Regent street London W.1

- Սեպտեմբեր 1920-ի սկիզբը, Հ.Մ.Լ.Մ-ի Արմաշի մասնաճիւղի 126 որբ սկսուտները ճամբայ կ'ելլեն դէպի Հայաստան՝ ներգաղթելու: Հասնելով Երեւան՝ կայարանէն դէպի կեդրոն հպարտ ու յաղթական քայլերով կը տողանցեն, իրենց փողերախումբին «Արեւ ծագեց զէյթունցիներ» եղանակին ընկերակցութեամբ:

«Երեւանի բնակիչները յանկարծակիի եկած էին: Ամէն կողմէ կը վազէին դէպի մեզ՝ հայեր են, հայեր են բացազանչելով: Այո՛, հայեր էինք եւ կ'երթայինք մեր հարազատ կառավարութեան հպատակութիւն յայտնելու:



Կառավարութեան շէնքը եւ նշանաւոր պատշգամբը:

«Վերը պատշգամին [կառավարութեան շէնք] վրայ հայ նախարարներ՝ գլխաւորութեամբ վարչապետին, կ'ունկնդրեն սկսուտական մեր երգումը՝ կ'երգունք հաւատարիմ մնալ ազգիս ու հայրենիքիս: Վարչապետ Համօ Օհանջանեանը արտասուախառն աչքերով կը շնորհաւորէ ազգին հարա-



Հ.Մ.Ը.Մ.ի Արմաշի 20-րդ մասնաճիղի հոդաօրոժ սկաուտ որբերը, Ակարը՝ «Հայ Սկաուտ»էն, թիւ 23-24, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1920:

զատ գաւակները: Հայաստանի քաղաքացիներ էինք այլեւս: Այս առիթով, նախարարութեան պատրաստած բացօթեայ հանդիսութեան՝ «յայտնութիւն էր [Քաջուկի մարզած Հայաստանի արենոյններուն] 250 աղջիկներու հպարտ, ուղիղ քայլերով, գեղեցիկ մարզական շարժումներով մուտքը», կը պատմէ [Պոլսոյ պատուիրակութեան անդամ] Հայկ Սերէն-կիւլեան⁵:

- 16 Հոկտեմբեր 1920, «Յառաջ». Ահա սկաուտավայել պարկեշտութեան ծանուցում մը. «Երեւանի սկաուտական խումբի տասներորդ տասնեակի սկաուտներէն Երուանդ Վարպետեանը Սաղովայա փողոցին մէջ գտած է 4270 ռուբլի: Կորսնցնողէն կը խնդրուի Անգլիական այգի գալ եւ մարզիչէն (սկաուտապետէն) այդ գումարը ստանալ»:

«Պոլիսէն եկած սկաուտներ Գէորգ Մարգարեանը եւ Պետրոս Սարաֆեանը կը փնտռեն Յակոբ Հայրենեանը: Վերջինիս հասցէն իմացողներէն կը խնդրենք յայտնել [սկաուտներուն, որոնք կը գտնուին] սպայից վարժարան»⁶:

- 17 Հոկտեմբեր 1920, «Յառաջ». «Այսօր՝ Կիրակի ամսոյս 17-ին, կէսօրուան ժամը 12-ին, Անգլիական այգիին մէջ տեղի պիտի ունենայ Պոլիսէն Երեւան ժամանած [Հ.Մ.Ը.Մ.ի] 126 սկաուտներուն հանդէսը: Բոլորին մուտքը ազատ է»⁷:

- 19 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»ի մէջ կը կարդանք սկաուտական հանդէսին երկարաշունչ թղթակցութիւնը: Ա. ստորագրութեամբ եւ «Պոյ սկաուտների հանդէսը Երեւանում» խորագիրով⁸. «Կիրակի, 17 Հոկտեմբեր 1920-ին, Երեւանի Անգլիական այգիին մէջ տեղի ունեցաւ Պոլիսէն նոր եկած սկաուտներուն հանդէսը:

«Որոշուած ժամուն հաւաքուած էր երկսեռ խումբն բազմութիւն մը: Մեր արիները կանուխ առաւօտէն զբաղած էին հանդէսի պատրաստութիւններով եւ մարզանքներով:

«Ժամը մէկին եկաւ վարչապետը [Համօ Օհանջանեան], երաժշտախումբի պատուոյ նուագով ու ներկայ հասարակութեան խանդավառ բացականչութիւններով: Ներկայ էին նա-

եւ նախարարները, օտար պետութիւններու ներկայացուցիչները, բարձրաստիճան անձինք, մամուլի եւ զանազան հասարակական հիմնարկութիւններու ներկայացուցիչները եւ խումբն երկսեռ բազմութիւն:

«Հանդէսը սկսաւ, սկաուտները՝ աղջիկ եւ տղայ խումբ-խումբ, իրենց մարզիչներուն առաջնորդութեամբ նուագախումբին կշռոյթով, իրենց յատուկ դրօշակներով եւ Եռագոյնի առաջնորդութեամբ տողանցքով քանի մը անգամ հրապարակին վրայ շրջան կատարելով ու պատուի ա՛ռ կատարելով վարչապետին եւ բարձրաստիճան հիւրերուն առջեւէն անցնելու ընթացքին, ապա գրաւեցին իրենց տեղերը եւ բուն հանդէսը սկսաւ:

«Խմբային սուլոցով հնչեց «Մեր հայրենիք» ազգային քայլերգը, որ ապա երգեցողութեան փոխուեցաւ: Բոլորը յոտնկայս եւ գլխաբաց ունկնդրեցին: Ապա սկսաւ հանդէսը՝ համեմաւած գրական, երաժշտական եւ մարզանքային բաժիններով:

«Թէ՛ Պոլիսէն եկած եւ թէ՛ տեղական սկաուտները, աղջիկ ու տղայ կ'երգէին, կ'արտասանէին, կը պարէին եւ մարզանքներ կը կատարէին, հաճելի եւ յաջող կերպով:

«Արտասանութիւններուն մէջ առանձնապէս ուշագրաւ էր Պոլիսէն եկած սկաուտի մը զգացուած ելոյթը Հայաստանի Եռագոյնին: Առանձին հետաքրքրական էր նաեւ պոլսեցիներուն տապալակներով վազքը, բուրգերը՝ ուժաւափութիւնը: Գեղեցիկ ու գեղարուեստական էր տեղական աղջիկներուն [արենոյններուն] պար-մարզանքը՝ փողերախումբի նուագին կշռոյթով:

«Ուշադրութեան արժանի էր նաեւ տեղական սկաուտներուն դրօշախօսութիւնը: Աղջիկ ու տղայ իրենց յաջող մարզանքներով կը մրցէին իրարու հետ եւ ետ չէին մնար Պոլիսէն եկած սկաուտներէն:

«Վերջաւորութեան, հանրային կրթութեան նախարարի օգնական Սոտնիկեանը հակիրճ ճառով մը ողջունեց սկաուտները, գնահատեց անոնց մարզիչներուն եռանդուն աշխատանքը, որուն արդիւնքը վայելեցինք, մատնանշելով որ Միացեալ եւ Անկախ Հայաստանը կարիքը ունի առողջ, կիրթ, ազնիւ ու անձնուէր քաղաքացիներու, պահանջ մը, որ պիտի բաւարարեն սկաուտական կազմակերպութիւնները: Ապա հրաւիրեց բոլորին կեցցէ՛ կանչել մեր ազատ, անկախ, Միացեալ Հայաստանին: Հանդէսէն ետք, սկաուտները փողերախումբին առաջնորդութեամբ տողանցեցին մայրաքաղաքին գլխաւոր փողոցներուն մէջ:

«Հանդէսը շատ հաճելի տպաւորութիւն ստեղծեց. ցանկալի է յաճախ կրկնել:

«Ծնողները իրենց հերթին պիտի շտապեն սկաուտ անդամագրելու իրենց զաւակները, եթէ կ'ուզեն զանոնք հեռու պահել փողոցի վատ ազդեցութիւններէն, եթէ կ'ուզեն ազնուացնել իրենց զաւակները ֆիզիքապէս եւ բարոյապէս»:

- 21 Հոկտեմբեր 1920-ի «Յառաջ»ի թիւը լեցուն է սկաուտական եւ մարզական լուրերով եւ յօդուածով⁹. Հոն Հ.Մ.-

ԸՄ-ի սկառուներուն մասին կը կարդանք հետեւեալ լրատուութիւնը.- «Երէկ, Չորեքշաբթի 20 Հոկտեմբեր 1920-ին, առաւօտեան ժամը 7-ին, Երեւան ժամանեց խորհրդարանի անդամ եւ նախորդ վարչապետ Ալեքսանտր Խատիսեանը: Կայարանին մէջ անոր դիմաւորեցին քաղաքի պարէտ փոխ գնդապետ Արշաւիր Շահխաթունին, պահակային գումարտակը իր նուագախումբով եւ Պոլիսէն եկած 126 սկառուները»:

- 21 Հոկտեմբեր 1920-ի «Յառաջ»-ի առաջին էջին մէջ¹⁰ Գրիգոր Չալիսեան սկառուները գովաբանող «Հայ կանաչ կացէ՛ք» նուէր Պոլիսէն եկած սկառուներուն» խորագիրով գեղարուեստական յօդուած մը գրած է. «Աշուն է: Երկինքը՝ ամպոտ, չի ժպտիր իր կապոյտ աչքերով: Անձրեւ կը կաթկթի: Երբեմն չես գիտեր ո՞ր անկիւնէն քամին կը բարձրանայ, հով կը փչէ երեսիդ եւ կարծես ամչնալով իսկոյն կը հանգստանայ: Աշունը եկած է, բայց խոնավին եւ հովին միջեւ տակաւին կը զգաս ամառուան տաք շունչը եւ անոր վերջին, յոգնած, թուլցած համբոյրները...»

«Երեւանի Անգլիական այգին այսօր կարծես սովորական էն աւելի զարդարուած է: Ամէն մէկ ծառ առանձին փայլ մը, տեսք մը ունի: Տերեւները գունատուած են, կանաչ կարմիր, դեղին, նարնջագոյն եւ բնութիւնը այսօր հագած է իր ամենագեղեցիկ, ամենաչքեղ, ամենաթանկագին շորերը:

«...Քամին քնքոյշ կը փչէ ծառերուն եւ մէկիկ-մէկիկ կը պոկէ, կը փետէ գունաւոր տերեւները եւ կը թափէ վար պարահանդէսներու գունաւոր թղթիկներու նման կը թափին հագարաւոր մանուկներու գլուխներուն, որոնք պարտէջ եկած են փայտերը ձեռքերնին դրօշակներով՝ նուագախումբով...»

«Մէկ, երկու, երեք, չորս...»

«Հանդարտ [հանգիստ]...»

«Կա՛ց...»

«Կը լսուին հրամանատարներուն ձայները...»

Մէկ կողմը նստած են նախարարները, բարձր պաշտօնեաները եւ օտար պետութիւններու ներկայացուցիչները:

«Մեծ, խուռն բազմութիւն...»

«Կը ծածանին հայկական դրօշակները:

«Մանուկները կը կատարեն զանազան մարզանքներ: Կը քալեն կարգով, զինուորներու հմտութեամբ:

«Կայտառ, առնական դէմքեր...»

«Կա՛ց...»

«Կը խօսին:

«Հայրենիքի կարօտ: Հայրենիքի սէր: Վառ զգացումներ եւ տենչ...»

«Մառայելու հայրենիքի փրկութեան համար...»

«Ամբոխին մէջ կը տեսնեմ յայտնի շահադէսները, որոնք հացը, շաքարը, կաթը կտրած են որբերուն բերաններէն եւ ամուր կերպով կը պահեն իրենց պահեստներուն մէջ, որպէսզի խեղդեն ժողովուրդը, որուն սով կը սպառնայ:

«Ես կը տեսնեմ պաշտօնեաներ, որոնք իրենց գեղծումներով հանրապետութեան վարկը կ'արատաւորեն:

«Ես կը մտածեմ, որ այս իսկ ըրպէսին մեր սահմաններուն մեր բանակը կը կռուի ներս խուժած քիւրտին, թուրքին դէմ...»

«Ամէն կողմէ դաւադրութիւններ:

«Ներքին դժուար կացութիւն:

«Երբ այդ բոլոր վհատեցուցիչ միտքերը կը ծանրանան հոգիիս վրայ, յանկարծ կը լսեմ՝

«Մէկ, երկու, երեք, չորս... Հանդարտ... Կա՛ց...»

«Եւ կը տեսնեմ կայտառ, առնական դէմքեր...»

«Եւ կը լսեմ մանուկները՝

«Որ կը խոստանան մեռնել հայրենիքի փրկութեան համար...»

«Մինչ խոնաւութեան եւ հովին մէջէն տակաւին կը զգամ ամառնային տաք շունչը եւ անոր վերջին, յոգնած, թուլցած համբոյրները, մեր հայ մանուկներուն խօսքերը ինձի կը թուին ըլլալ զարնան առաջին ուժեղ համբոյրները... Որոնք կ'արբեցնեն եւ կը ներշնչեն սէր եւ հաւատք:

«Անոնք գրաւականներ են, որ մեր ազգը կը մաքրուի այդ ժամանակաւոր կեղտերէն, արատներէն: Փոթորիկները կ'անցնին կոպտա լախոյն վերջը՝ դէս հայ տրէջ...»

«Բարձր օդին մէջ կը պտտին երկար ու վար կը թափին կանաչ, դեղին, նարնջագոյն եւ կարմիր տերեւները մեր մանուկներուն սիրուն գլուխներուն, երեսներուն եւ ուսերուն վրայ...»


«Աշուն է: Այո աշունը եկեր է: Ոչինչ: Չմեռը կարճ կ'ըլլայ եւ շուտով կու գայ զարունը:

«Հայ կանաչք, հանդարտ, կա՛ց»


«Յանձնեցէք ձեր գաւակները մեր սկառուական ընկերութեան, որպէսզի ստանաք առողջ եւ արի երիտասարդներ:

Գր. Չալիսեան»

- Ահա՛ Հ.Մ.ԸՄ-ի առաքելութիւնը իր նպատակին ծառայած ըլլալը կը վկայէ հաղորդակցութեան նախարար Արշակ Զամախեանը իր յուշերուն մէջ. «1920-ի աշնանը



Սկառուական հանդիսութեան թղթակցութիւն, «Յառաջ», 19.10.1920:



Որբաքաղաք Ալեքսանդրապոլը: Ամերիկեան հոգաժողովեան տակ գտնուող հազարաւոր հայ որբեր խնամող որբանոցներէն մէկը, 1921:

դուք այլեւս անպատասխար որբեր չէիք տեսներ մեր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, որոնց լացն ու կականը սիրտ կը կըտրատէին: Անոնց աղիտողորմ ճիչերը փոխարինած էին պոյ-սկառուտներու կորովի քայլերգը եւ Ֆուլթպոլիստներու աղմուկն ու քրքջոցը Երեւանի Անգլիական այգիին եւ Ալեքսանդրապոլի Փոլիկոնին [երկրորդ մեծ որբանոցը] մէջ: Ասոր հետ միասին՝ դանակով կտրածի պէս դադրած էր մուրացկանութիւնը»¹¹:

- 21 Հոկտեմբեր 1920-ին «Յառաջ»¹² կը յայտարարէ «Դիւցազն» ակումբի հիմնադրութեան մասին. «Օգոստոսի սկիզբներուն Երեւանի մէջ հիմնուած է «Դիւցազն» մարզական [եւ սկառուտակա՞ն] ակումբը, որուն կանոնադրութիւնը 14 Հոկտեմբեր 1920-ին հաստատուած է Երեւանի շրջանային դատարանին կողմէ:

«Ակումբին կրնան անդամակցել, առանց ազգի եւ սեռի խտրութեան, 18 տարեքը բոլորածները:

«Անդամագրուել կարելի է Երեւանի պարէտային վարչութեան մէջ՝ տեղակալ Առաքելեանի մօտ:

«Մուտքի սակը 250, իսկ ամսավճարը՝ 50 ռուբլի է»:

- 21 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»¹², Երեւանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ԱՌԱՋԻՆ ՅՈՒԹՊՈՂԻ ՄՐՅՈՒՄԻՆ յայտարարութիւնը. «Յառաջիկայ Կիրակի, 24 Հոկտեմբերին, Անգլիական այգիին մէջ տեղի կ'ունենայ Ֆուլթպոլի մրցում Կոստանդնուպոլսոյ Հ.Մ.Ը. Միութեան 20-րդ մասնաճիւղին եւ Երեւանի «Սպորտ» ակումբին միջեւ:

«Կը հրաւիրուին կառավարութեան անդամները, օտար ներկայացուցիչները [ղեսպաններ] եւ այլ բարձրաստիճան հիւրեր: Պիտի նուազէ զինուորական նուազախումբը:

«Մրցումը կը սկսի ճիշդ ժամը 12-ին: Մրցումը որեւէ պատճառով չի յետաձգուիր:

«Մուտքի սակեր 500, 250 եւ 100 ռուբլի»:

- 22 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»¹³. «Արմաշի գիւղատնտեսական դպրոցի 113 [126] աշակերտ սկառուտները, որոնք Պոլիսէն Երեւան հասան, երեք գիւղատնտես մասնագէտ ուսուցիչներու ղեկավարութեամբ, իրենց հետ բերած են շուրջ 2 հազար օսմանեան ոսկի, որ մեր դրամի այժմու սակով կը համապատասխանէ 18-20 միլիոն ռուբլի: Նշեալ գումարը պիտի յատկացուի գիւղատնտեսական դպրոցի հիմնադրումին, միաժամանակ փափաք յայտնելով, որ գաղութային բաժինը անմիջապէս գործի լծուի:

«Այս առթիւ գիւղատնտեսութեան նախարարութեան դիմում ներկայացուած է, արագացնելու գիւղատնտեսական դպրոցին բացումը, խնդրելով նախարարներու խորհուրդէն համապատասխան վարկ»: Ահաւասիկ Հ.Մ.Ը.Մ-ի մասնակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան գիւղատնտեսութեան եւ կրթութեան վերելքին:

- 26 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»¹⁴.

«Ժողով-հանդէս Պոյ-սկառուտական մրցահանդէս» խորագրով թղթակցութիւն մը գրած է Ար. «24 Հոկտեմբեր 1920-ին, ժամը 12-ին, քաղաքիս Անգլիական այգիին մէջ, Երեւանի «Դիւցազն» մարզական ակումբին բացումին առիթով տեղի ունեցաւ Ֆուլթպոլի մրցում՝ Կոստանդնուպոլսոյ [Հ.Մ.Ը.Մ-ի] եւ Երեւանի սկառուտներուն միջեւ:

«Մուտքը վճարովի էր, ներկայ էր իզական եւ արական սեռի հասարակութեան խուռն բազմութիւն: Զինուորական երաժշտախումբի նուազին ընկերակցութեամբ, ծրագրէն դուրս՝ յայտագիրը սկսաւ երկու մրցակիցներու միջեւ անգլիական բռնցքամարտով:

«Շուրջ ժամը 1-ին սկսաւ Ֆուլթպոլի մրցումը եւ տեւեց մինչեւ 3: Մրցումին սկիզբէն նկատելի էր կարմիր շապիկ հագած երեւանցիներուն առաւելութիւնը, որ խաղը փոխադրեց Պոլսոյ սկառուտներուն բերդը:

«Մրցումին ընթացքին երկու անգամ երեւանցիները յաջողեցան գնդակը մտցնել Հ.Մ.Ը.Մ-ի բերդէն ներս, որոնք հասարակութեան կողմէ ողջունուեցան բուռն ծափերով: Մէջ ընդ մէջ կը նուազէր փողերախումբը»:

- 26 Հոկտեմբեր 1920, «Յառաջ»¹⁴. Հայկական սկառուտական պիւրոն Լոնտոնէն թղթակցութիւն մը ղրկած է միջազգային 21 երկիրներէ եկած սկառուտական շաբաթ մը տեւած հանդէսին մասին եւ կ'առաջարկէ հայ սկառուտներուն մասնակցել յաջորդ տարի, դիմելով հայկական պիւրոնին:

- «Այժմ դադրած ենք սկառուտ եւ մարզիկ ըլլալէ, բոլորս կամաւորներ ենք եւ մեր հայրենիքի պաշտպանութեան համար խրամներ կը փորենք», կը գրէ Չերազի¹:

- Հայկական բանակի թնդանօթային բաժինի հրամանատար զօրավար Արարատեանը, որ Ալեքսանդրապոլ եկած էր Կարս մեկնելու համար, խոյանէն կ'ուզէ 21 սկառուտներ, որպէսզի անոնք իբրեւ օգնականներ զինեն [Ալեքսանդրապոլի]

բլուրին վրայ գտնուող բերդի թնդանօթները: «Բոլորն այ հիանալի ոգիով «Պատրաստ ենք իսկոյն մարզուելու» կ'ըսեն» եւ 31 Հոկտեմբեր 1920-ին 30 կամաւոր սկաւտներ խոյեանին հետ բերդ կ'երթան¹⁵:

- Տիգրան խոյեան կ'եզրակացնէ. «Միայն երկու ամսուան «գործունէութիւն» մը ունեցաւ մեր առաքելութիւնը: Գրեթէ մէկ ամիսը անտեղի կերպով վատնուեցաւ կրթական նախարարութեան ներկայացուցիչ՝ բժիշկ Արծրունիի եւ մեր միջեւ գոյութիւն ունեցող մարզական անհաշտ տեսակէտներու միաձեւումին: Սեպտեմբեր ամիսը մտանք արդէն եւ մենք՝ չորսս դպրոցական տարեջրանին համար պատրաստեցինք մեր կողմէ խնամքով մշակուած եւ կրթական նախարարութեան վաւերացման ենթարկուած մարմնակրթական ծրագիր մը, որուն գործադրութեան հազիւ սկսած՝ պայթեցաւ թուրք եւ հայ նոր պատերազմը:

«...Վահան Չերազն ու Եգնիկ Քաջունին հրաժարականներն տուին նախարարութեան եւ մեկնեցան կուռի ճակատ: Օննիկը մնաց Երեւան եւ ես՝ Ալեքսանդրապոլ, փութով սկսանք դպրոցներու համար պատրաստուած ծրագիրը գործադրել փորձել: Ուսուցիչներէն գործակիցներ ճարեցինք, անոնց միջոցով դպրոցներուն մէջ տարուելիք մարմնակրթական աշխատանքին թափ տալու համար: Սկաւտական շարժումը, պայմաններու բերումով աւելի դանդաղ սկսաւ յառաջանալ: Միեւնոյն ատեն, պատերազմական դրութեան պարտադրանքին տակ, մեծ սկաւտները տրամադրեցինք քաղաքային վարչութեանց եւ զինուորական իշխանութեանց կարիքներուն՝ անոնց դիմումին իբրեւ գոհացում: Դէպքերը, սակայն, գահավէժ ընթացք մը առին, կացութիւնը շատ ծանրացաւ, հայ հանրապետութիւնը ինկաւ»¹⁵, եւ միայն Վահան Չերազ մնաց Հայաստան:

«Վահան Չերազ իրեն յատուկ սկաւտապետի տաղանդով կը գրաւէ սէրն ու վստահութիւնը իր որբ սկաւտներուն: Պրատունի գոհունակ հովանիին տակ, տիպար տասնեակներ կը կազմակերպէ այդ որբերէն, որոնք իրենց թոյլ, անկարգապահ եւ խարդախելու հակամէտ նկարագրային վատթար գիծերը կը փոխարինեն առոյգ, կարգապահ եւ պատուախնդիր

նկարագիրով: Իբրեւ ամէն կերպով առողջ հայեր ըլլալու հպարտութեամբ՝ այդ «Հայ արիները» եղան Վահանի ջանքերուն արդար վարձատրութիւնը: Չերազի յառաջ բերած այդ հրաշալի արդիւնքը վարձատրութիւնն է նոյնպէս, եւ՝ միակ շօշափելի գործը, զոր Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանեան առաքելութեան անունին կրնանք կապել, քանի որ այդ առաքելութեան ամենավաստակաւոր եւ արժանաւոր երէց անդամն էր, որ երբ առիթը ներկայացաւ՝ սկաւտական դաստիարակութեան սրբազան արժէքը երեւան բերաւ» կ'եզրակացնէ խոյեան¹⁵:

- 1-25 Նոյեմբեր 1920. Այս քսանչորս օրերը հռչակուած ըլլալով «Սկաւտը հայրենիքին համար» օրեր՝ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերը տուներէն դրամ եւ հագուստ կը հաւաքեն Հայաստանի սկաւտներուն համար:

- 2 Նոյեմբեր 1920. Սեպուհի բանակէն խոտորջուրցի Թորգոմը ճակատէն նամակ կը բերէ Չերազէն, որ կը թելադրէր պատրաստուել արտագաղթելու, կը գրէ խոյեան¹⁵:

- 7 Նոյեմբեր 1920, «Յառաջ»¹⁶. Կառավարութիւնը նպաստ կը յատկացնէ ներգաղթող սկաւտներուն. «Պոլիսէն եկած 126 սկաւտներուն համար, վարչապետ Համօ Օհանջանեանի տնօրինումով, պետական պահեստէն յատկացուած է հետեւեալը. - 210 տուփ խտացուած կաթ, 60 Ֆունտ [24,6 քիկ.] օճառ, 25 փութ [407,5 քիկ.] լուբիա, 25 փութ [407,5 քիկ.] սիսեռ, 20 Ֆունտ [8,19 քիկ.] քաքաօ, 25 փութ [407,5 քիկ.] չալթուկ [կեղեղով բրինձ], 1 փութ [16,3 քիկ.] աղ եւ 500 հազար ռուբլի դրամ:


Ահա նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտին նպատակը՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին, գործնապէս կ'իրագործուի:

- 18 Նոյեմբեր 1920 թուականի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնը դրկած նամակին մէջ Օննիկ Եազմաճեան Երեւանէն կը գրէ¹⁷. «...Պատերազմական դրութիւնը կարծես աւելի մեծ ոյժ եւ եռանդ տուած է, եւ մեր տղաքը այս վայրկեանին աւելի լաւ փարած են գործին Մեր դասախօսութիւնները կը շարունակենք: Այս շաբաթ մտադիր ենք Բ. Կարգի սկաւտներու [Երկրորդ] քննութեան սկսիլ...»

«Ձանազան ճակատներ ուղարկեցինք սկաւտներ այլեւայլ պաշտօններով. օրինակ՝ սուրհանդակ, մթերանոցներու

հսկիչ, Կարմիր խաչ, դրօշախօսներ որոնք այս պահուս կը գտնուին Շարուրի [Վայոց Ձորի Բարձրունի գիւղը] ճակատը, որոնք հոն դրկուած են տեղւոյն զինուորական պետին հրահանգով: Երկու սկաւտ դրկուած է Ուլուխանլու [Մասիս քաղաք], ուր կը գտնուի գաղթականներու համար բացուած սննդակայանը, ուր սկաւտները կը պատրաստեն թէյ, կերակուր եւ այլն: Նոր Գաւիթ գիւղն ալ սկաւտներ կան, ուր կը պատրաստուի գաղթականներուն հացը՝ տեղւոյն պաշտօնեաներուն վրայ իբրեւ հսկիչ: Երկու սկաւտ ունինք Ելեւմտական նախարարութեան մէջ եւ այլ տեղեր:

Երեւանը լեցուն է [նոր] գաղ-



Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտները Ալեքսանդրապոլի մէջ, 1922:



Կուփամարտիկ փոքր ու մեծ սկաուտներ, Ալեքսանդրապոլ, 1922:

Թականներով եւ որբերով: Երկուշաբթի օր Կարմիր խաչին հետ գացինք դարմանեցինք 30-40 որբեր, որոնք Կարսէն փախուստի ժամանակ վերաւորուած էին եւ զանազան վէրքեր ունէին: Այսօր խնամատարութեան նախարարին հրամանով մեզի յանձնուեցաւ թեմական դպրոցին մէջ գտնուող 1000 գաղթականներուն հոգը: Երեւանէն էջմիածին պիտի փոխադրենք 400 որբեր: Տրամադրութեան տակ մեծ սկաուտ չմնաց, սակայն պզտիկներն ալ քաղաքին մէջ կրնանք գործի մղել: Մեղուի պէս կ'աշխատին»:

- 23 Նոյեմբեր 1920, «Յառաջ»¹⁸. Եզնիկ Քաջունի շնորհակալական հետեւեալ նամակը հրատարակած է «Երեւանի արեակների [սկաուտներու] համար» խորագիրով. «Երեւանի «Արեակներու» [սկաուտ] կազմակերպութիւնը երկաթուղիի վարչութեանէն 100 հազար ռուբլի նուէր ստացեր է:

«Երկաթուղային ծառայողներու համագործակցականը իր կեդրոնական պահեստը ունէր Ալեքսանդրապոլի կայարանին մէջ, ուր վերջին դէպքերուն ժամանակ ենթարկուեցաւ կեղտոտ թալանի եւ ծանր ու անդարմանելի կորուստներու: Ամիսներու լարուած աշխատանքին ամբողջ արդիւնքը, ցորեն եւ այլ տեսակի մթերքներ գրեթէ ամբողջութեամբ թալանեցան անազնիւ մարդոցմէ ու իրենց պահեստէն հազիւ մէկերկու վակոն մթերք յաջողեցան հասցնել Երեւան:

«Ահա այսպիսի կողոպուտի ենթարկուած այս ընկերութիւնը շատ գեղեցիկ ու ինքնաբոլի մղումով եւ առանց նախընթաց խոստումի կը տրամադրէ 100 հազար ռուբլի մեր «Արեակ» կազմակերպութեան:

«Մեր արեակ սերունդը այսպիսի հիմնարկութիւններու հանդէպ ունի միայն երախտագիտութիւն, եւ կը խոստանայ իր փոքր ուժերով ստեղծագործել եւ շինել աշխատանքի լծուել մեր դժբախտ հայրենիքին վերաշինութեան:

«Այս առիթով պէտք է յիշենք նաեւ Հայկոոպի անցեալ Մայիսի համագումարին 30 հազար եւ Վան Կոոպերատիւ ընկերութեան նախորդ վարչութեան կողմէ 15 հազար ռուբլիի խոստումները անծանօթ պատճառով չստացանք:

«Եթէ մամուլով յայտարարութիւնները հասարակական խաւերու անկեղծ արտայայտութիւններն են, ապա ուրեմն սկաուտական կազմակերպութիւնը մեր մամուլին յաճախակի դրուատիքներուն արժանանալով պէտք էր համապատասխան լուրը ուշադրութեան եւ հոգածութեան արժանանար:

«Մենք յոյս ունինք, որ Երկաթուղու պին ազնիւ օրինակը

խթան կը դառնայ նախապէս տրուած խոստումներու իրագործման եւ ապա, հասարակական թէ անհատական հիմնարկութիւններու քաջալերական նոր արտայայտութիւններու: Եզնիկ Քաջունի»

- 25 Նոյեմբեր 1920, «Յառաջ»¹⁹. Եզնիկ Քաջունի արեւոյշները դրամահաւաք կը կատարեն բանակին համար. «Երեւանի պարէտ փոխ գնդապետ Շահաթունի շնորհակալութիւն կը յայտնէ Երեւանի աղջկանց «Արծուիկ» սկաուտական խումբին, 10,330 ռուբլի ռազմաճակատի գինուորներուն նուիրաբերելուն համար:

2 Դեկտեմբեր 1920-ին Հայաստանը կը հռչակուի խորհրդային Հանրապետութիւն:

- 13 Փետրուար 1921-ի հակախորհրդային շուրջ երկամսեայ Փետրուարեան ապստամբութեան մասնակցելէ ետք, անգլերէնին տիրապետած Վահան Չերազ 29 Նոյեմբեր 1921-ին Ալեքսանդրապոլի իր թաքստոցէն դուրս գալով գործի կը դիմէ Ամերիկեան Նպաստամատոցի տնօրէն Միլթըն Պրաունին, որ իր կարգին սկաուտապետ եղած է, եւ իսկոյն լաւ վճարումով պաշտօն մը կու տայ Վահանին: Պաշտօնը Կազաչի Փոստ որբանոցին մէջ հսկողութիւն-պահակութիւն էր, սակայն ան կը դիմէ տնօրէնին՝ այդ որբերուն նաեւ սկաուտական դաստիարակութիւն տալու: Դիմումը ջերմօրէն կ'ընդունուի:

- 21 Փետրուար 1921-ին Չերազ կը գրէ. «Պոլշեկները խափանեցին սկաուտական շարժումը, որովհետեւ «Հայրենիքի կործանիչ եւ յետադիմական գաղափարներ կը ներշնչենք եղեր մանուկներուն» եւ, թէ՛ «անգլիական իմպերիալիստական մեթոտներուն կը հետեւինք եղեր»²¹:

- Հ.Մ.Ը.Մ-ի օժանդակութիւնը հայրենիքին կը շարունակուի, եւ Մարտ 1921-ին սկաուտները Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ Հայաստանի սկաուտներուն համար կը հաւաքեն 24 հակ [խոշոր ծրար] հագուստ եւ մօտ 2500 ոսկի²⁰:

- 17 Մարտ 1921, Հայաստանի Հանրապետական կառավարութեան (Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի) օրկան «Ազատ Հայաստան»ի մէջ կը կարդանք²¹. «Պոլշեկները Ալեքսանդրապոլի որբանոցներու բոլոր պահեստները թալանելէն եւ բազմաթիւ որբեր փողոց նետելէն ետք, որոշած են նաեւ ձերբակալել եւ բանտարկել ամերիկացիները, որոնք սակայն իմանալով այս, փախուստ կու տան Ալեքսանդրապոլէն: Անոնցմէ մաս մը այժմ Կարսի մէջ կը գտնուի:

- 10 եւ 20 Մայիս 1921-ին Չերազ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոն կը ղըր- կէ բովանդակալից նամակներ, գորս կարելի է Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան տեղեկագիրներ նկատել²²։

«Թերեւս դուք կը կարծէք որ Հայաստանը մեռաւ, թաղեցինք ու ծանր քար մը դրինք վրան։ Թերեւս կը կարծէք որ Հայաստանին հետ խաչ քաշեցինք նաեւ մեր սրտին այնքան մօտիկ սկառուտութեան եւ մարմնակրթանքին վրայ։ Բոլորովին կը սխալիք։

«Անցեալ տարուան Յուլիս 26-ի յիշատակելի բաժանումէն ի վեր զլիսն անցածները մասամբ գիտէք, մասամբ ոչ։ Ես այդ մասին պիտի չգրեմ ձեզի, հարկաւ երջանիկ առիթներ կ'ըլլան, որ կարենամ բերանացի պատմել ձեզի։ Կ'ուզեմ որ այս նամակս աւելի մտերմական տեղեկագիր մը ըլլայ մեր այժմու մարմնակրթական շարժումին, քան թէ արկածներու պատմութիւնը։

«22 Մարտին [1921] Երեւանէն մեկնեցայ [Փետրուարեան ապստամբութեան մասնակցելով] եւ քանի մը անգամ ստոյգ մահէն փրկուելով հասայ Ալեքսանդրապոլ։

«Ներկայանալով Ամերիկեան Օգնութեան Կոմիտէի լիազօր քափիթէն Պրաունին՝ ստացայ պահակապետի պաշտօնը։ Փոլիկոնը՝ ուր կան մանչ որբերը, իսկ Կազաչի փոստին մէջ՝ աղջիկները։

«Երբ պաշտօնս ընդունեցի, միայն պահակութեան համար, տեսնելով պահականոցը եւ պահակները մտածեցի այս տղոց սկառու դարձնել։ Պահականոցը եւ միջավայրը շատ յարմար էին։ Եթէ այս պատեհութենէն չօգտուէի՝ մեղանշած պիտի ըլլայի Փրոթիի օդին ու ծովին, Տորքեան օրերուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի փառքին ու պատիւին դէմ։

«Այս նպատակով դիմեցի տնօրէն Պրաունին [նախկին սկառու խմբապետ], որ լայն բացաւ պահեստանոցները։ Ի՞նչ կ'ուզես ըրէ, հաւնածդ ա՛ն», ըսաւ։

«Հիմա Կազաչի Փոստի պահակները սկառու աթլէթներ են, եւ պահականոցը՝ իր շրջապատով այնպիսի մարմնակրթական հաստատութիւն մը, որ եզակի է Հայաստանի մէջ, որուն կրնայ նախանձիլ Պոլիսը։

«Սկսայ գործի։

«Գիշեր մը տղոց կողմէ պատգամաւոր ղրկեցին խմբապետները՝ յայտնելու համար, որ չեն ուզեր սկառուական տարագ եւ կարճ տաբատ հագնիլ, թէ՛ ամօթ է եւ այլն, ապա թէ ոչ...»

«Ապա թէ ոչ ի՞նչ հարցումիս պատասխան չունէին ու հարցը փակուեցաւ։

«Պատգամաւորները զլիսկոր վերադարձան խրատուած, համոզուած որ իրենց երանելի օրերը անցած են։

«Հիմա բոլորն ալ սկառու են, նորընծայ եւ արժանի եղբայրները պոլսեցի կտրիճ հայ սկառուներուն։ Հիմա չես կրրնար համոզել անոնց, որ սկառուական տարագը հանեն։ Այլեւս հայհոյանք չես լսեր, խռովութիւն, անկրթութիւն եւ չարահնարք ի սպառ կորած են։

«Ինչպէս ըսի մեր պետն է քէփթըն Միլթըն Պրաունը, անոր նման ասպետ օտարագգի գործիչ դժուար թէ եկած է Հայաստան։ Ան մեր սկառուներուն մեծ եղբայրն է՝ սկառուապետը։ Թող լաւ տղաք ըլլան՝ ամէն ինչ կը տրամադրէ։

«Հիմնարկութեան արհեստանոցները այս միջոցին միայն մեզի համար կ'աշխատին։ Ատաղձագործարանը նոր շինեց Ֆուլթպոլի փառաւոր բերդերը, տակաւին կը շինէ սկառուական դաւազանները, այսօր պիտի յանձնէ բարձրութիւն ցատկելու կազմածը եւ վաղը կը սկսի շինել արգելավագքի խոչընդոտները։

«Կաշեգործները մեր գօտիները կը պատրաստեն։

«Հիւսնները շուտով կը սկսին լոգանքի բաղնիքներու պատրաստութեան։ Կար ու ձեւի արհեստանոցը կը կարէ սկառուական տարագները։

«Իմ համակրելի օգնականս է Սկիւտարի Հ.Մ.Ը.Մ-կան Չաքէոս [ճորճ, ապագային ԱՆՉԱ-յի ղեկավար] Մարտիկեանը, որուն հետ հեզասահ կ'աշխատիմ։ Ան հազիւ կրցած էր Կարսէն փրկել մեր բերած Հ.Մ.Ը.Մ-ի գոյքերուն աննշան մնացորդը՝ 7 ձեռք տարագ, 6 գօտի, 5 զլխարկ, 1 սկաւառակ, 1 Ֆուլթպոլ, 1 օղահան [փոմփ], երկուքական կանգուն կարմիր եւ կապոյտ կտոր, քանի մը «Հայ Սկառու», 54 սկառուական կանոնագիր, 3 l'eclairer [Ֆրանսերէն սկառուին գիրքը] եւ 4 նշանակ։

«Աթլէթի գոյքերու կողմէն աղքատ ենք։ Գունտերը կոտրած են, կը գործածենք ռուսական եկեղեցւոյ չորս անկիւնները դրուած հին ռումբերը, որոնց վրան ծակ է, խոշոր են եւ 8 քիլո 185 կրամ կը կշռեն։ Միակ սկաւառակը կլորութիւնը սկսած է կորսնցնել։

«Մէկ Ֆուլթպոլ ունինք եւ երկրորդը՝ իմս, 2-4 ձգախէժ մէջի գնդակ, սակայն փակցնելու խէժ եւ կտոր չունինք։



Ձախին՝ սրինգով, տուտուկով, շուիով եւ ծնծղայով նուագախումբ, Ետին՝ ձիւնին վրայ շուրջապար կը պարեն։ Աջին՝ հայկական թառի նուագախումբ՝ Ալեքսանդրապոլի որբերէն, 1921։



Վահան Չերազի հսկողութեամբ (բաժնկոն հագած) սկաուտներ (պատանիներ սկաուտական գլխարկով) բոկոսոն՝ բարձրութիւն ցատկել կը մարզուին, իսկ օդին մէջ, շուրջ 130 սմ.է աւելի բարձրութեամբ կը ցատկէ հաւանաբար լաւագոյն մարզիկը՝ կարնեցի 15-ամեայ Սարգիս Յովհաննէսեանը, 1921, Ալեքսանդրապոլ:

«Ո՛ւր է «Հայ Սկաուտ» թերթը, ինչեր կ'ընէք, որ չենք գիտեր, տակաւին անցեալ տարուան ողիմպիականին արդիւնքէն տեղեակ չեմ:

«Կուփամարտը մանաւանդ, որ այնքան նոր ու տարօրինակ երեւոյթ մըն է այստեղ, մեծ հետաքրքրութեան կ'արժանանայ: Տղոց մէջ իրական տաղանդներ կան. այստեղ իւրայայտուկ խաղաոճ ունեցողներ կան որ կը զարմացնէ:

«Երէկ [հաւանաբար 9 Մայիս 1921-ին] մեր նոր դաշտին վրայ տեղի ունեցաւ մեր 4 խումբերուն միջեւ ֆուլթպոլի առաջին պաշտօնական մրցումը: Առաջին խումբը 5-1 արդիւնքով յաղթեց չորրորդին:

«Բունցքամարտի, պարանի, գունտի, վազքի եւ այլնի մրցումները միշտ միջ-խմբային բնոյթ ունին եւ նիշեր կը դրուին, արդիւնքները կը փակցուին պահակային ամէնօրեայ հրահանգներու պատերուն: Պատերը զարդարուած են գիրքերէս հանուած սկաուտական եւ մարմնակրթական մեծ նկարներով:

«Այստեղ պէտք է յայտնեմ, որ սկաուտական դրութիւնը քիչ թէ շատ յարմարցուցած եմ պահակային դրութեան, օրինակ՝ յիսնապետի դրութիւնը:

«Ուստի, մեզ մի մոռնաք, կ'արժէ մեզմով զբաղիլ, որովհետեւ արդիւնքները արդէն շօշափելի են եւ խոստմնալից: Ամէն բան նպաստաւոր է շնորհիւ տնօրէն Պրատունին, որուն համար կ'արժէ երեք կեցցէ՝ բացազանչեն մեր պոլսեցի սկաուտները [այստեղ «Հայ Սկաուտ»ի խմբագրութիւնը ծանօթով մը կը մէջբերէ «Ձեր նամակը բոլոր ընկերներուն ներկայութեան կարգացուցեալ եւ «Կեցցէ»ի փափաքը գործադրուեցաւ], շինութիւնը նոյնպէս նպաստաւոր է: Ունինք փառաւոր ննջարան մը, ուր 120 անկողին կայ: Մօտ օրէն ֆուլթպոլի դաշտին վրայ ակումբ մը պիտի ունենանք:

«Յաջողութեան մէկ այլ պատճառն այն է, որ լիազօր եմ, մինակ ես եմ պատասխանատուն: Ժողով-մողով հարկաւոր չէ որոշումի համար, ո՛չ ալ խոչընդոտող տարրեր կան:

«Ուրեմն՝ տղաք, դեռ կ'ապրինք: Կը յուսամ որ երկինքէն լուսանկարչական գործիք մը կը հասնի, որպէսզի մեր գործունէութիւնը նկարահանենք: Իսկ առայժմ գոհացէք իմ չափազանց հապճեպ տեղեկագրով: [Հաւանական է, որ վերոնշեալ բաժինը 10 Մայիսի նամակն է, որ խմբագրութիւնը օրին երկու նամակները անջատած չէ]:

Ստորեւ հաւանաբար 20 Մայիս 1921-ի նամակը.-

«Կեանքիս մէջ այսքան զբաղած չեմ եղած, սակայն երբեք այսքան անոյշ զբաղում չեմ ունեցած:

«Գոյքերուս մեծ մասը գտայ, թէեւ շատ բաներ կը պակսին: Մարմնակրթական գիրքերս ամբողջութեամբ մնացած են:

«Առայժմ Պոլսոյ մասին չեմ մտածեր, այստեղ ինծի համար Պոլիս է եւ բան մըն ալ աւելի, թէեւ շատ բաներ ալ պակաս:

«Տղոց բարոյական կերպարանափոխումը կատարեալ է արդէն: Իսկ ֆիզիքական մարզական կեանքին մէջ եռանդով նետուեցան եւ մարմնական զարգացումը մէկ ամսուան մէջ արդէն նախանձելի աստիճան զարգացաւ: Բնածին ձիրքերով օժտուած տղաք շատ են, որոնք մարմնակրթական աշխարհին մէջ աստղեր կրնան դառնալ: Բարձրութիւն ցատկելու առաջին փորձին, 15-ամեայ կարնեցի Սարգիս Յովհաննէսեանը 1,25 մետր ցատկեց անթերի ոճով, այժմ՝ 1,30-ը անցաւ: 3-4 տղաք ալ կը մօտենան անոր:

«Ժամանակս չի ներեր մանրամասնութեանց մէջ մտնելու, սակայն շատ ու շատ գոհ եմ: Այս ինծի համար երազ մըն է, որ իրականութիւն կը դառնայ. Ունենալ 100 տղայ, մարզել իբր սկաուտ եւ իբր մարզ, ըլլալ քաջալերուած ու լիազօր, ունենալ միջոցներն ու միջավայրը եւ արդիւնքները քաղելու գոհունակութիւնը: Այս բոլորը իրականացան շնորհիւ անզուգական քափիթէն Պրատունին:

«Տղոց տրամադրութիւնը շատ բարձր է՝ ապրուստ, մաքուր եւ լաւ դաստիարակուած չարքաչ կեանք, ուսում, աշխատանք ու զբօսանք, ամէն ինչ ունին:

«Փոքրիկ Պոլիս մը, Հ.Մ.Ը.Մ.ի մանրանկարը ունինք եւ անոնց պաշտելի դէմքերը քանի մը թանկագին նկարներու վրայ կ'երեւին:

«Տղա՛ք, պատգամաւոր մը, քննիչ մը տեղեկաբեր մը դրկեցէք մեր մօտ, որ աչքով տեսնէ ու վկայէ: Իմ մասիս շատ գրել չեմ ուզեր, սակայն ամէն բանի մէջ դժուարահաճ ըլլալով հանդերձ ես շատ գոհ եմ, ուրեմն հասկցէք:

«Ինչ անակնկալ կ'ըլլար եթէ յանկարծ Կարօն գար: Մեզի երգարան պէտք է: Իմիներս կրկնութիւն են: Տղոց նոր երգեր պէտք է սորվեցնել: Եղանակներ շատ գիտեմ, բայց բառերը՝ քիչ:

«Ձեր գործունէութենէն բոլորովին անտեղեակ ենք: Մեկ-

ներէս ի վեր Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն տեղեակ չեմ: «Հայ Սկաուտ» թերթերուն անհամբեր կը սպասենք:

«Փոխկոն որբանոցին ալ 800 տղաք սկաուտ պիտի ընենք: Առաջարկեցին, որ հոն փոխադրուիմ, սակայն մերժեցի: Այսուհանդերձ, ընդունեցի այնտեղի ալ ընդհանուր սկաուտապետը ըլլալ: Մեր երկու ֆուտպոլէն մէկը այնտեղ դրկեցինք:

«Կ'ըմբռնէք որ գործս ծանր է: Կը թելադրեմ, որ պոն- [Նպաստամատոցի ընդհանուր տնօրէն էրնեստ] Եարրոն տեսնէք եւ առաջարկէք մարզիչներ ուղարկել, եթէ կան: Մարզիչ ըսելով՝ համեստ, ոչ-ցուցամով գործի տղաք պէտք են: Մարտմեանը շատ յարմար կը գտնեմ: Ես լաւ եմ ու լաւատես, նոյնը կը մաղթեմ ձեզի: Մեզի մի մոռնաք, եւ ձեր հոգածութեան կը կարօտինք:


«Տղոց ողջոյնը բոլորիդ եւ համբոյրներս: Երկար նամակներ գրեցէք: Համբոյրներ ձիգմէճեանին, Վարազին, Եղ- Լարդին, Տիգրանին, Օննիկին եւ այլն»:

Վաչէ [Վահան]

1 Յունիս 1921, «Հայ սկաուտ»²³ կը յայտարարէ Արմաշի դժբախտ որբերուն վերադարձը հայրենիքէն, պոլշեկներու դաժան հալածանքին եւ որբանոցները թալանելու ու որբերը անտէր ձգելու, նաեւ՝ սկաուտութեան դէմ անոնց կեցողածքին պատճառով: «Բարի՛ եկաք, տղա՛ք, հազար բարի տառապանքի փշոտ ճամբաներու անխոնջ կարաւան» խորագիրով թերթը կը գրէ: «Հ.Մ.Ը.Մ.ի 20-րդ մասնաճիւղ՝ Արմաշի գիւղատնտեսական վարժարանի սկաուտները իրենց բոլոր ուսուցիչներով Պոլիս հասան, իրենցմէ 7 հոգի պաշտօնով կը մնան Ղարաքիլիսա, ամերիկացիներու մօտ, որոնք մօտ ատենէն կը հասնին հոս»:

- 17 Յունիս 1921, Չմիւռնիոյ Հայ սկաուտութեան օրկան «Պատրաստ»ի մէջ «Մարմնամարզը եւ սկաուտիզմը Հայաստանի մէջ» խորագիրով գրութիւնը հաւանաբար կ'անդրադառնայ Չերազի նամակին²⁴:-

«Հայաստանէն, մասնաւորապէս Ալեքսանդրապոլէն, շատ յուսալից նամակներ կը ստացուին: Այնտեղ ամէն շաբաթ կանոնաւոր կերպով ֆուտպոլի, մարմնամարզական մրցումներ եւ սկաուտական հանդէսներ տեղի կ'ունենան: Մարզիկներուն թիւը 10 հազարի մօտ է: Նիզակ, երկաթ, ցատկելու կազմած՝ բոլորը իրենք շինած են, միայն սկաւառակի շինութիւնը դժուար եղած է, սակայն կը յուսան այդ ալ շինել: Գոռնտի



համար կը գործածեն ռուսական հին ռումբերու գունդեր:

«Վերջերս տեղի ունեցած է մեծ մարզահանդէս մը, որուն ներկայ գտնուած է Ամերիկեան Նպաստամատոցի պետ [միս- իոնար եւ մարզիկ] դոկտ. Եարրօ [Ernest Alfred Yarrow, 1876-1939], որ նաեւ լուսանկարած է:

- «Վահան Չերազ կը շարունակէ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը որբանոցին մէջ, կարգ կանոն պարտադրելով բարոյապէս սանձարձակ այդ միջավայրին մէջ՝ գողութիւններ, աղջրկանց սեռային շահագործում եւ այլն, սկաուտներուն միջոցով հերթափոխութեամբ 24 ժամ պահակութեան դրութիւն հաստատելով:

(Շար. 3)

ԾԱՆՕԹՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Նահատակ ցեղի անմահներ», Տիգրան Քահանայ Խոյ- Եան, տպարան «Ալքափրէս», Պէյրութ:
2. «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի», Վազգէն Անդ- րէասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան»:
3. «Յառաջ», Երեւան, Բ. տարի, թիւ 222, 12 Հոկտեմբեր 1920, էջ 3:
4. Նոյնը, թիւ 224, 14 Հոկտեմբեր 1920, էջ 4:
5. «Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.ի 1918-1958», Ներսէս Աբեղայ Բախտիկեան, Պէյրութ, 1958, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 73-85:
6. «Յառաջ», Երեւան, Բ. տարի, թիւ 226, 16 Հոկտեմբեր 1920, էջ 3:
7. Նոյնը, թիւ 227, 17 Հոկտեմբեր 1920, էջ 3:
8. Նոյնը, թիւ 228, 19 Հոկտեմբեր 1920, էջ 4:
9. Նոյնը, թիւ 230, 21 Հոկտեմբեր 1920, էջ 3:
10. Նոյնը, թիւ 230, 21 Հոկտեմբեր 1920, էջ 1:
11. «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, Բ. Տարի թիւ 8, Յունիս 1924, Արշակ Չամալեան, էջ 77:
12. Նոյնը, թիւ 230, 21 Հոկտեմբեր 1920, էջ 3:
13. Նոյնը, թիւ 231, 22 Հոկտեմբեր 1920, էջ 4:
14. Նոյնը, թիւ 233, 26 Հոկտեմբեր 1920, էջ 3:
15. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», թիւ 5, Կոստանդնուպոլիս, 1 Յունուար 1920, էջ 72:
16. «Յառաջ», Երեւան, Բ. տարի, թիւ 244, 7 Նոյեմբեր 1920, էջ 4:
17. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», Ա. տարի թիւ 23-24, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1920, էջ 359:
18. «Յառաջ», Երեւան, Բ. տարի, թիւ 257, 23 Նոյեմբեր 1920, էջ 3:
19. Նոյնը, թիւ 259, 25 Նոյեմբեր 1920, էջ 3:
20. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», Բ. տարի, թիւ 1, Յունիս 1921, էջ 16:
21. Հայաստանի Հանրապետական կառավարութեան (Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի) օրկան «Ազատ Հայաստան», Ա. տարի, թիւ 22, 17 Մարտ 1921, էջ 2:
22. «Հայ Սկաուտ», Բ. տարի, թիւ 6, 16 Օգոստոս 1921, էջ 88-89:
23. Նոյնը:
24. Չմիւռնիոյ հայ սկաուտութեան օրկան «Պատրաստ», 17 Յունիս 1921, Ա. տարի, թիւ 22, էջ 5:



ՓԱՐԻԶԻ ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ. 7.5 ԹՈՆ ՄՆՆԴԵՂԷՆ, ՀԱԳՈՒՄՏՆԵՐ ԵՒ ԴԵՂՈՐԱՅՔ ԿԸ ԲԱԺՆԷ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՐԻՔԱԲՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներու սեմին, Հ.Մ.Ը.Մ. 7.5 թոն սննդեղէն, հագուստներ եւ դեղորայք բաժնեց լիբանանահայ ընկերային կարիքաւոր պարագաներու: Օժանդակութիւնը տրամադրեց Փարիզի արուարձաններէն Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութիւնը, Պէյրուսի նաւահանգիստի պայթումին առիթով իր կատարած մարդասիրական օգնութեամբ:

Արդարեւ, քաղաքապետ Անտրէ Սանթինիի նախաձեռնութեամբ եւ փոխ քաղաքապետ Արթիւր Խանճեանի գլխավորութեամբ, Պէյրուսի պայթումէն անմիջապէս ետք, Իսի Լէ Մուլինոյի մէջ ծայր տուաւ լիբանանցիներու օժանդակութեան ծրագիր մը, որուն մասնակցեցան քաղաքին բնակիչները եւ անոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի անդամները: Ծրագիրը նպատակադրեց օժանդակել պայթումէն ամէնէն աւելի վնասուած Պէյրուսի մարտնի եւ հայ համայնքներուն: Առայդ, օժանդակութիւնները ուղղուեցան մարտնիներու Պէյրուսի առաջնորդարանին եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ու Հ.Մ.Ը.Մ.-ի Լիբանանի ընտանիքին ճամբով՝ Պէյրուսի հայրութեան:

Նախատեսուած օժանդակութիւնը Պէյրուսի նաւահանգիստ հասաւ Նոյեմբերին: Օժանդակութեան հետ եօթնօրեայ այցելութեամբ մը Պէյրուս այցելեց Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետի ներկայացուցիչ՝ փոխ քաղաքապետ Արթիւր Խանճեան, որ այս առիթով՝ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան

անդամներու ընկերակցութեամբ տեսակցութիւններ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, Հայ Կաթողիկէ Գրիգոր-Պետրոս Ի. Հոգեւոր Տիրոջ, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի, Լիբանանի մէջ Ֆրանսայի եւ Հայաստանի դեսպաններուն, հայկական երեսփոխանական պլոքի եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բազրատունիի, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի, մարտնիներու Պէյրուսի առաջնորդին, «Ազդակ», «Լօրիան Լրժուր» օրաթերթերու եւ





«Վանայ Զայն»ի տնօրէնութիւններուն հետ: Ան նաեւ ընթրիքի հիւրը եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, որ այս առիթով երախտագիտութեան եւ շնորհակալութեան յուշանուէր մը յանձնեց Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութեան:

Լիբանան հասած օժանդակութիւնը հանգրուանեց Էշրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանի սկաուտ խմբապետները քանի մը հանգրուանով տեսակաւորեցին եւ առանձին հակերու վերածեցին զանոնք: Այնուհետեւ, հրաւիրուեցան գաղութին ազգային-բարեսիրական հաստատութիւններու ներկայացուցիչները, որոնք ստանձնեցին իրենց բաժինները եւ տօնական օրերու նախօրեակին բաժնեցին ընկերային իրենց պարագաներուն:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

2020 թուականի Հոկտեմբերի 4-ից, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչության նախաձեռնությամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչության հաստատման և հովանավորությամբ սկսուեց Ազրայէճանի կողմից սանձազերծուած պատերազմի արդիւնքում փրկուած արցախցի ընտանիքների օժանդակութեան ծրագիրը, որը իրականացուեց եւ դեռ շարունակուեց է մի քանի ուղղութիւններով եւ փուլերով: Ծրագիրը իրագործուեց է Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ կառոյցի եւ անհատ և ունիւնների նուիրապրութեամբ:

Սպորեւ անկայացուած է ծրագրի արդիւնքները ամփոփուած մինչեւ 2021 թուականի Յունուարի 31-ը:

- 4 Հոկտեմբեր 2020-ից սկսուած այս ծրագրով բաշխուել են սննդեղէնի եւ հիգիենայի պարագաների 740 փաթեթներ՝ 1480 փոստակ 22200 քիլոկրամ ապրանք 3655 հոգու, 8 փոննա կարպոֆիլ եւ կաղամբ:

- Արցախցի երեխաներին փրուել է գրեական պիտոյքների 150 փաթեթ:

- Արցախցի երեխաներին բաժանուել է 200 խաղալիք:

- Ամանորեայ ծրագիր արցախցի երեխաների եւ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գալլիկների մասնակցութեամբ, միջոցառում 2 փուլով 4-8 եւ 9-12 տարեկանների համար: Աւարտին բաժանուել են նոր տարուան 350 փոստակ նուէրներ:

- Արցախցի ընտանիքների համար նոր տարուան յարուկ փաթեթ, որը պարունակում էր 20 հազար դրամանոց «Քարֆուր» սուպերմարկէտների ցանցից գրեման քարտ եւ 20 հազար դրամ կանխիկ գումար, եւ նոր տարուան փոնական սնունդ: Այս միջոցառումից օգուրել է 350 ընտանիք:

- Երեխաների Ամանորեայ միջոցառումից սուրացուած «Սկաուտ 3 մեռ պապիկին նամակ» ծրագրի շրջանակներում 32 երեխաների համար իղչերի իրականացուում:

- Մեծ քանակութեամբ հագուարեղէնի եւ երեխաների փակդիրների բաշխում:

- Զինուորների համար փաթ հագուար եւ առաջին բուժօգնութեան պարագաներ:

Այս օրերին իրականացուում են այցելութիւններ մեզ մօտ գրանցուած եւ դեռեւս Հայաստանում գտնուող ընտանիքներին, մօտից ծանօթանալու իրենց կենսական պայմաններին եւ պահանջներին, որի արդիւնքում հնարաւոր կը լինի վերանայել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կողմից իրականացուող ծրագրերի ուղղութիւնները եւ աւելի նպատակային դարչնել յարկացուող օժանդակութեան փեսակը:


Շնորհակալութիւն ենք յայտնում բոլոր նուիրապրութեան, մշտապէս մեր կողքին լինելու եւ այս կարեւորագոյն ծրագրին սպարելու համար:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՀՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ «ԽԻԶԱԽՈՒԹԵԱՆ» ՀՔԱՆՀԱՆ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 35 ԱՆԴԱՄԻ

Արցախեան 44-օրեայ պատերազմի ակարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. յատուկ կանոնադրութեամբ մը հաստատեց «Խիզախութեան» շքանշան՝ այն բոլոր անդամներու համար, որոնք «Հայաստանի Հանրապետութեան զինեալ ուժերուն ծառայելու եւ կամ Հայաստանի հողային ամբողջականութեան դէմ ոտնձգութիւններու ընթացքին, հայրենիքի եւ ժողովուրդի պաշտպանութեան համար կը ցուցաբերեն խիզախութիւն եւ անմնացորդ նուիրում»:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան «Խիզախութեան» շքանշան կը շնորհէ վիրաւոր եղբ. Արման Գալստեանին...

...եւ արձակուրդով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գրասենեակ այցելած եղբ. Յրանդ Վարդանեանին:

Կանոնադրութիւնը կը նախատեսէ շքանշանը շնորհելու-

- Ա. Իր նահատակուած անդամին՝ յետ-մահու:
 - Բ. Հայաստանի զինեալ ուժերուն մէջ ժամկէտային ծառայութեան ընթացքին սխրանքներ կատարած իր անդամին:
 - Գ. Ոչ-ժամկէտային ծառայութեան ընթացքին Հայաստանի պաշտպանութեան գործին սխրանքներ կատարած իր անդամին:
- Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը նորաստեղծ այս շքանշանը շնորհեց Արցախեան վերջին պատերազմին մասնակից իր անդամներէն 35-ին, որոնցմէ վեցը՝ յետ-մահու:

Ստորեւ ցանկը «Խիզախութեան» շքանշանի արժանացած Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամներուն:

1. Ժիրայր Պէօճէքեան- «Վ. Չերազ» մասնաճիւղ
2. Կարին Աւագեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
3. Անուշաւան Հայրապետեան- Վետիի մասնաճիւղ
4. Արտաշէս Յակոբեան- Հրազդանի մասնաճիւղ
5. Անդրանիկ Ափոյեան- Հրազդանի մասնաճիւղ
6. Տիգրան Նազարեան- Հրազդանի մասնաճիւղ
7. Արտակ Ռեւազեան- Հրազդանի մասնաճիւղ
8. Էրիկ Նորոյեան- Վետիի մասնաճիւղ
9. Սազօ Գայմազամեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
10. Գագիկ Մարտիրոսեան- «Յովհաննէս Հինդլեան» մասնաճիւղ

11. Դաւիթ Յարութիւնեան- «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղ
12. Արամ Աղաջանեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
13. Գագիկ Աբովեան- «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղ
14. Սարմէն Սաֆարեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
15. Արտիոմ Մարտոյեան- «Վահան Չերազ» մասնաճիւղ
16. Անուշաւան Յովսէփեան- «Յովհաննէս Հինդլեան» մասնաճիւղ
17. Դաւիթ -

Հրազդանի մասնաճիւղ

18. Հայկ Յակոբեան- «Յովհաննէս Հինդլեան» մասնաճիւղ
19. Էտկար Մկրտչեան- «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղ
20. Յարութ Դերիկեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
21. Յարութ Յարութիւնեան- Վետիի մասնաճիւղ
22. Արթուր Միրզախանեան- Էջմիածինի մասնաճիւղ
23. Տարօն Մանուկեան- «Տիգրան Խոյեան» մասնաճիւղ
24. Հրակ Գուզոյեան- «Վահան Չերազ» մասնաճիւղ
25. Գարիկ Միքայէլեան- Արմաւիրի մասնաճիւղ
26. Արման Գալստեան- Արմաւիրի մասնաճիւղ
27. Սահակ Յակոբեան- Աբովեանի մասնաճիւղ
28. Հրանդ Վարդանեան- «Յովհաննէս Հինդլեան» մասնաճիւղ
29. Նարեկ Ստեփանեան- Հրազդանի մասնաճիւղ

ՅԵՏ ՄԱՀՈՒ

1. Գէորգ Հաճեան
2. Էրիկ Գալստեան
3. Հայկ Դերիկեան
4. Արմէն Առուստամեան
5. Գրիգոր Ղազարեան
6. Արտակ Մարտիրոսեան





20 Գեկպեմբեր 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչությունը Եռաբլուրի նահապետիկ պանթեոնին եւ Երեւանի իր կեդրոնին մէջ կազմակերպուած քրպատրիչ հանդիսութեամբ մը նշեց յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի «կամաւոր բանակ»ի հերոսացած այն եղբայրներուն, որոնք հայրենիքի սահմաններու պաշտպանութեան Սուրբ գործին շխնայեցին իրենց ամենէն բանկագիրը:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի արեւնապետ քոյր Սանգրա Վարդանեան արտասանեց խօսք մը, զոր կը ներկայացնենք ստորեւ:



ՀԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ԵՐԹԸ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՔՈՅՐ ՍԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՆԱՀԱՏԱԿ ՍԿԱՌԻՏԵՐՈՒ «ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Վերջին երկուսուկէս ամիսների ընթացքում, բոլոր ապրեցինք ու դեռ ապրում ենք ծանր օրեր: Օրեր, որի ընթացքում իրար են խառնուում մարդկային բոլոր զգացողութիւնները՝ յոյսն ու յուսահատութիւնը, յաղթանակն ու պարտութիւնը,

ուրախութիւնն ու տխրութիւնը, հպարտութիւնն ու հիասթափութիւնը: Մէկ կտարուում ենք, մէկ ոգեւորուում, մէկ թուլանում ենք ու մէկ էլ հաւաքուում: Բայց մի բան երեւի մնաց ու մնացել է անփոփոխ՝ այն է յանուն հայրենիքի ու յանուն ապագայի կամաւորագրուելու

մեր պարտաւորութեան գիտակցումը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը եւս անմասն չըմնաց այս բոլորից: Պատերազմի առաջին խկ օրուանից մեր տղաները, յայտնուեցին առաջնագծում եւ խիզախաբար, առանց մի պահ վարանելու նուիրուեցին հայրենիքի պաշտպանութեան



սուրբ գործին, գոհասեղանին դնելով իրենց ամենաթանկը՝ կեանքը: Եւ այս ամէնը յանուն հայրենիքի եւ յանուն ապագայի:

Այն քայրերն ու եղբայրները, որոնք մնացին թիկունքում օր ու գիշեր աշխատեցին, որպէսզի մեր զինուորը չունենայ ոչ մի բանի կարիք, իսկ պատերազմի արհաւիրքն ապրած արցախցի երեխան, մի պահ մոռանալով այն ինչ տեսել է, փայլուն աչուկներով ժպտայ: Արցախից պարտադիր տեղահանման ենթարկուած ընտանիքը, ստացած օժանդակութեան շնորհիւ իրեն մի քանի օր կենցաղային հոգսերից թեթեացած զգայ: Եւ այս ամէնը յանուն հայրենիքի եւ յանուն ապագայի:

Ի հարկէ, այս ճանապարհին ինչպէս եւ Երկիրը, ու այսօր մեր Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքի կարեւոր մասնիկը դարձած ընտանիքները, մենք էլ վճարեցինք շատ մեծ գին:

Սիրելիներ, պատերազմը ձեզանից խլեց ամուսին, հայր ու զաւակ, իսկ մեզանից խլեց մեր սիրելի եղբայրներին, որոնցից իւրաքանչիւրը իր տեսակով իւրապատուկ էր ու անփոխարինելի, որոնց մասին յիշողութիւնները ընդմիշտ մնալու են մեր մտքում ու սրտում: Ինչպէս նրանք դաստիարակուեցին իրենց աւագ եղբայր Վարդան Բախչեանի ուսմունքով՝ զնայ մեռնելու կամ յաղթելու, բայց յաղթելու, այնպէս էլ մեր այսօրւայ գայլիկներն ու սկառտներն են դաստիարակուելու մերօրեայ հերոսների սիրանքների, անձնագոհութեան,



կամաւորութեան ու խիզախութեան մասին պատումներով: Բարեբախտաբար, նրանց հետ շարունակելու են սկառտական եւ ընկերական բուռն կեանքով ապրել նաեւ մեր միւս խիզախները, որոնք եւս ոչ պակաս հերոսական դրուագների անմիջական դերակատարներն են եղել այս պատերազմի ընթացքին:

Այս ամէնից յետոյ մենք էլի շարունակելու ենք մեր երթը, աւելի վստահ քան առաջ, աւելի կառչած ազգային արժէքների քան առաջ, աւելի պատասխանատուութեամբ քան առաջ, աւելի նպատակասլաց քան առաջ, յանուն մեր գոհուած տղաների, յանուն մեր խի-



զախները, յանուն ապագայի եւ յանուն Հայրենիքի:

Իմ սիրելի՛ եղբայրներ Գէորգ, Գրիգ,

էրօ, Հայկ, Արտակ եւ Արմէն, դուք այսուհետ միշտ ներկայ էք լինելու...

Յաւե՛րժ փառք ու խոնարհում Ձեզ:







ԿԻՄՐԻԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Թղթակից
ԿԻՄՐԻ

Հայկական բանակի տոնին առիթով, 28 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կիւմրիի «Վահան Չերազ» մասնաճիւղը «Շիրվանեան» երիտասարդական կեդրոնին մէջ կազմակերպեց հանդիպում մը՝ Արցախեան

պատերազմին մասնակից սկաուտներու հետ, որոնք ներկայացուցին պատերազմի ժամանակ իրենց ապրած զգացումները, դէպքերն ու դրուագները:

Հանդիպումը իր տեսակին մէջ իւրայատուկ էր, որովհետեւ ներկաները անդրադարձան, որ հայ զինուորին օրինակով սերունդները պէտք է հասկնան անանձնական նուիրումի արժէքը եւ սեփական կեանքը հայրենիքին զոհաբերելու իմաստը:



ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱԴՂՐԸ

Կիրակի, 24 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Գրիգոր Յակոբեան» եւ «Յովհաննէս Հինգլեան» մասնաճիւղերը վերսկսան սկաուտական իրենց բնականոն աշխատանքներուն:

Սկաուտներ կատարեցին խմբային բազմաթիւ աշխատանքներ եւ ձեռք բերին զանազան հմտութիւններ՝ իրենց օրը դարձնելով աւելի ուրախ եւ հետաքրքրական:





«ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՄ ԲԱՐԻՔ ԳՈՐԾԵԼ ԱՄԷՆ ՕՐ...»

Մա է սկսուտի խոստման բաղկացուցիչ մասը, որը դառնում է կենսակերպ:

Այդ գիտակցումով 2021-ի տոնական օրերին ընդառաջ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Արմավիրի «Վարդան Բախչեան» մասնաճյուղի սկսուտները հիւրընկալեցին Արմավիրում բնակւող 12 բազմազաւակ ընտանիքի շուրջ 40 երեխաների:

Հանդիպումն անցկացուցեց Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցուն կից գործող Առաջնորդարանում, որտեղ տեղի քահանան՝ Տէր Տաճատը, երեխաներին ներկայացրեց Սուրբ Ծննդեան խորհուրդը: Այնուհետ սկսուտներն ուրախ խաղերով եւ ծափերով իրենց փոքրիկ հիւրերի օրը տօն դարձրին:

Դէ էլ ինչ տօն առանց Ձմեռ Պապի՝ ով եւ հիւրընկալուց փոքրիկներին միջոցառման աւարտին: Բնականաբար, նա «դատարկ ձեռքերով» չէր եկել:



Ձմեռ Պապիկը իւրաքանչիւր երեխայի համար քաղցրաւենիքով եւ անհրաժեշտ պարենամթերքով լի տուրակներ էր բերել:

Այս բարի գործը կատարելու հարցում իր նիւթական օժանդակութիւնն ունեցաւ մասնաճյուղի նախկին անդամ Նարեկ Ասատրեանն, ով բնակւում է Ա.Մ.Ն.ում եւ երբեք չի դադարում հաւատարիմ մնալ իր սկսուտական խոստմանը: Ի դէպ, այդ օր եղբայր Նարեկի ծննդեան տարեդարձն էր, որի առիթով սիրով շնորհակալութեանք զինք:

Օրուան աւարտին գոհունակութեան եւ շնորհակալական խօսքերը բազմաթիւ էին... սկսուտներն էլ երջանիկ էին, որ կարողացան երջանկացնել միւսներին:

ՇՐՋԱՅՑ ԿԻՒՄՐԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՎ
 Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կիւմրու «Վահան Զերազ» մասնաճյուղը Արցախից Կիւմրի տեղափոխւած 14-20 տարեկան երիտասարդների համար կազմակերպեց շրջայց՝ Կիւմրիի մշակութային վայրերով:





Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԵՐԿՕՐԵԱՅ ՄԵՄԻՆԱՐԸ ԱՂՎԵՐԱՆԻ ՄԷՋ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

30 և 31 Յունուար 2021-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչությունը Աղվերանի մէջ կազմակերպեց երկօրեայ սեմինար մը՝

այն անդամներուն համար, որոնք անցնող ամիսներուն ժամանակ եւ ճիգ չիր նայեցին իրենց մասնակցութիւնը բերելու Արցախեան պատերազմին պատճառով Հայաստան ապաստանած արցախցի ընտանիքներու օժանդակութեան գործին:

Սեմինարը ծառայեց նաեւ կազմակերպութեան հայեացքը նետելու եկող տարեշրջանին՝ գնահատելու իրավիճակը, պարզելով օրուան իրականութիւնը, զարգացնելու յարաբերութիւններ՝ ամրացնելով խմբային աշխատանքը եւ քննարկելու այն հիմնական ուղղութիւններն ու միջոցները, որոնք պէտք է նկա-

տի առնուին կազմակերպութեան ծրագիրներուն մէջ:

30 Յունուարը սկսաւ ձիւնելով: Խորհրդանշական երանգ ստացաւ սեմինարը, իբրեւ փաստ անոր նպատակին անբժուլթեան: Տեղաւորուելէ եւ տարածքին ծանօթանալէ ետք, օրակարգի առաջին կէտը խմբակային աշխատանքի զարգացման վարժութիւններն էին: Խումբակներու բաժնուելով, իւրաքանչիւր խմբակ կատարեց իրեն տրուած առաջադրանքները, յետոյ քննարկեց աշխատանքին ընթացքը՝ յանգելով եզրակացութիւններու, որոնք օգնեցին անդրադառնալու հաղորդակցութեան, խնդիր



լուծելու եւ առաջնորդութեան հմտութիւններու կարեւորութեան՝ խմբակային արդիւնաւէտ աշխատանքներու կազմակերպման մէջ:

Ապա, ճաշի դադարէ ետք, տեղի ունեցաւ քննարկում-քննալէճ՝ կազմակերպութեան դիմաց ծառայած մարտահրաւէրներուն շուրջ:-

- Ռազմավարական ուղղութիւն
- Երիտասարդական ծրագիր
- Սկստակական գործունէութեան վերակազմ մասնաճիւղերու մէջ
- Հաղորդակցութիւն

Իւրաքանչիւր քոյր-եղբայր միացաւ իր նախընտրած թեմայով քննարկման խումբին: Այնուհետեւ, բոլորին կարծիքները ներառելով՝ աշխատանքի աւարտին խումբերը ներկայացուցին իրենց եզրակացութիւնները:

Այս առիթով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան: Քոյրը շնորհակալութիւն յայտնեց բոլորին՝ քննարկումներու մասնակցութեան համար եւ իր խոր համոզումը յայտնեց կազմակերպութեան յուսալից ապագային համար, որովհետեւ կազմակերպութեան մէջ կը գտնուին առողջ եւ պիտանի երիտասարդներ, որոնք իրենց քննարկումներու եզրակացութիւններով կը ներկայացնեն հայաշունչ տեսլականներ:

31 Յունուարը դարձաւ ձմեռն ու ձիւնը վայելելու օր: Խմբակներ կազմելով՝ բոլորը մասնակցեցան «Ձմեռան գանձի որս» մրցումին, որուն նպատակն էր զարգացնել խմբակային պատկանելիութեան զգացումը՝ միասնաբար



ձիւնին վրայ կատարելով շարք մը մարտահրաւէրներ: Ձմեռնային ամրոց պատրաստելէ մինչեւ Եռագոյնը պարզելով տարածքի բարձրագոյն գագաթին վրայ, բոլորը հաստատեցին, որ խընդիրներու լուծումը դիւրին է, երբ գա-

նոնք կը կատարես գաղափարակից Հ.Մ.Ը.Մ-ական եղբօրդ եւ քրոջդ հետ: Հոսակ, արդիւնքները յայտարարելէ ետք, սեմինարը վերջ գտաւ խմբային լուսանկարով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՄՆԱԾԻՒՂԻ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԻՆ ՀԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ Կ'ԸՆԹԱՆԱՆ ՄԵԾ Թ-ԱՓՈՎ

Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի (Նետըրլենտներու՝ Յոլանտա-յի) մասնաճիւղը շուտով կ'օժտուի արդիական նոր կեդրոնով մը, որ միութեանական եւ ժողովական բոլոր յարմարութիւններով օժտուած տուն մը պիտի ըլլայ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Կեդրոնի շինարարական աշխատանքներուն հիմնարկէքը կատարուեցաւ 11 Յուլիս 2020-ին, հրապարակային հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան քաղաքի հոգեւոր հովիւ՝ Մաշտոց Քինյ. Պաղտասարեան, Յայաստանի Յանրապետութեան հիւպատոս Դաւիթ Սիրզախանեան, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի ներկայացուցիչ Նուպար Վարդանեան, ՀՕՄ-ի, Հ.Յ.Դ. Երիտասարդականի եւ Պատանեկանի անդամներ, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Ալքմարի եւ Ամնիեմի վարչականներ, սկաուտներ եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Յուլիսէն ասդին, հակառակ քորոնայի համաճարակին պարտադրած կաշկանդումներուն, ընձեռուած պայմաններու մէջ, կեդրոնին շինարարական աշխատանքները կ'ընթանան բաւական արագ:

Կ'ակնկալուի, որ աշխատանքի այս թափով շինարարութիւնը իր աւարտին հասնի Մայիս 2021-ին եւ կեդրոնը Հ.Մ.Ը.Մ.ականներու դիմաց իր դռները բանայ ամառնամուտին:

Յայտնենք, որ կեդրոնին աշխատանքները յառաջ կը տարուին ժողովրդային հանգանակութեամբ: Հետեւաբար, նուիրատուութիւններու ցանկը բաց կը մնայ բոլոր անոնց, որոնք կը փափաքին իրենց լուծման բերել հայապահպանման այս նոր տան կառուցման:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ԾԱՆՕԹ-ԱՅՈՒՄ

Շաբաթ, 21 Նոյեմբեր, 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Քիլիճեանի եւ շրջանի մասնաճիւղերու ատենապետներուն մասնակցութեամբ, տեղի ունեցաւ առջանց հանդիպում մը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետուհի քոյր Սանտրա Վարդանեանի հետ, որ անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց Արցախեան պատերազմին ընթացքին եւ յաջորդող հանգրուանին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի օժանդակութեան աշխատանքներուն եւ անոնց աջակցութեան ձեւերուն մասին:

Շաբաթ մը ետք, 28 Նոյեմբերին, այս անգամ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան հրաւերով, քոյր Սանտրա Վարդանեան նմանօրինակ առջանց հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաւտ. Խորհուրդի անդամներուն եւ շրջանի մասնաճիւղերու ատենապետներուն հետ:

Հանդիպումին ընթացքին քոյրը մանրամասնօրէն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կատարած մարդասիրական աշխատանքներն ու օժանդակութիւնները՝ Արցախեան պատերազմին զոհուածներու ընտանիքներուն եւ ընդհանրապէս զաղթական արցախցիներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի «ՄԱՍԻՍ» ՄԱՍՆԱԾԻԲՂԸ ԱՐՑԱԽԻ Ի ՆՊԱՍՏ ԿԸ ՀԱՆԳԱՆԱԿԷ 220 ՀԱԶԱՐ ՏՈՒԱՐ



Սան Ֆեռնանտո հովիտի Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղին նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ յեղափոխական երգերու երեկոյ մը՝ մասնակցութեամբ երգիչ Գառնիկ Սարգիսեանի, նպատակ ունենալով դրամահաւաք կատարել ի նպաստ Արցախի զինուորներուն օժանդակող ՀԵԴ-ի «Մեր զինուորներու կողքին» արշաւին:

Շնորհիւ մասնաճիւղի անդամներու, ծնողներու, մարզիչներու եւ բարեկամներու առատ նուիրատուութիւններուն, երեկոյին ընթացքին կարելի եղաւ հանգանակել 220 հազար տոլար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՍՐԱՀԸ ԿԸ ԿՈՉՈՒԻ ՆԱՀԱՏԱԿ ՄՈՍԻԿ ՍԵՔՂԵՄԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Թղթակից ՎԻԵՆՆԱ

Կ

իրակիր, 20 Նոյեմբեր 2020-ի առաւօտեան, Վիեննայի Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջ, յընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագի, տեղի ունեցաւ Արցախեան նորօրեայ պատերազմին նահատակուած բոլոր հերոսներուն եւ ի մասնաւորի՝ հայէպահայ երեք կամաւոր հերոսներու՝ Յարութ Բանոյեանի, Մովսէս (Մոսիկ) Սեքլեմեանի եւ Յակոբ Աստարճեանի Շուշիի մէջ նահատակութեան քառասունքին հոգեհանգստեան արարողութիւնը:

Արարողութենէն ետք, շրջանէ մը ի վեր Վիեննա հաստատուած նահատակ Մոսիկ Սեքլեմեանի ծնողքն ու հարազատները ընդունեցին ցաւակցութիւններ, ապա իբրեւ յարգանքի եւ մեծարանքի խորհրդանշական արտայայտութիւն, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի շրջանի ակումբի սրահին պաշտօնական անուանակոչութիւնը՝ Մոսիկ Սեքլեմեանի անունով:



ՆԵՐԿԱՆԵՐԸ

Նահատակի ծնողքին՝ տիկին Լուսին Սեքլեմեանի, նահատակի քրոջ՝ Արմիկ Մելքոնեան-Սեքլեմեանի կողքին, սրահի անուանակոչութեան ներկայ էին Կեդրոնական Եւրոպայի եւ Շուշիի Հայրապետական Պատուիրակ Տիրան Եպս. Պետրոսեանը, Աւստրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Պապիկեան, Վիեննայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ

հոգեւոր հովիւ Անտրէաս Քէնյ. Իսախանեան, դեսպանատան խորհրդական Ստեփան Պաղտասարեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Եւրոպայի կոմիտէի ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղի վարչութիւնն ու Աւստրիոյ Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչը եւ շարք մը սկսողներ:

Բացման արարողութեան յաջորդեց մէկ վայրկեան յոտնկայս լուծիւն՝ յարգելու համար յիշատակը Արցախեան





պատերազմի բոլոր նահատակներուն: Ապա, հանդիսավար եղբ. Յակոբ Սահակեան յաջորդաբար հրաւիրեց եղբ. Ճորճ Իսկէնտէրեանը Համօ Սահեանի «Ինձ բացակայ չդնէք» բանաստեղծութիւնը ասմունքերու եւ Ատրիանա Թաշճեանը՝ ջուլթակով «Ատանայի ողբ»ն ու «Կըռունկ»ը նուազելու: Ապա, եղբ. Սահակեան ընթերցեց Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շըրջանային Վարչութեան յղած ցաւակցագիրը (Տես քովը) եւ բեմ հրաւիրեց Հ.Յ.Դ. Կեղրոնական Եւրոպայի կոմիտէի ներկայացուցիչ Գէորգ Յակոբճեանը՝ փոխանցելու օրուան պատգամը:


ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Իր պատգամին սկիզբը, օրուան պատգամաբեր Գէորգ Յակոբճեան ներկայացուց նահատակ Մոսիկ Սեքլեմեանի կենսագրական գիծերը, մանկութիւնը, պատանեկութիւնը, մասնագիտու-



ՅԱԲԱԿՅԱԳԻՐ

Յարգարժան Բանոյեան,
Աստուծոյ եւ Սեքլեմեան ընկերակիցներ Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շըջանային Վարչութիւնը իր խորագգաց վշտակցութիւնը եւ ցաւակցութիւնը կը յայտնէ Հ.Մ.Լ.Մ.ական երեք եղբայրներ Յարոյք Բանոյեանի, Յակոբ Աստուծոյեանի եւ Մոսիկ Սեքլեմեանի ընկերակիցներուն, Արցախի գոյապայքարին եւ յարկապէս Շուշիի ինքնապաշտպանութեան մարտերուն Հ.Մ.Լ.Մ.ական երեք եղբայրներուն նահատակութեան առիթով:



Սուրբոյ պատերազմի փարիներուն, հալեպահայ երեք փղաքը ամբողջանուէր ծառայութեամբ իրենց կեանքերը վրանգի փակ դնելով պաշտպանեցին հայկական քաղաքները եւ ազգին շահը գերադասելով իրենց անձնական կեանքէն, անասկարկ նուիրումով իրենց վարահուած պարտականութիւնը կատարեցին: Անցնող օրերուն, երբ Արցախը վրանգի փակ գրնուեցաւ ցեղասպան թշնամիին հարուածներուն պարձառով, մեր փղաքը փութացին Արցախ, եւ իրենց փարիներու հմարութիւնն ու փորձառութիւնը ի սպաս դրին հայրենի հողերու պաշտպանութեան Սուրբ գործին: Անոնք անսայով ցեղին չայնին անվերապահօրէն ընծայաբերեցին իրենց ամենաքանակագինը՝ կեանքը, յանուն հայրենիքի ազատութեան:

Յաւերժ փառք եւ պարծանք մեր քաջարի փղոց: Նահատակութեան վեհ ճանապարհը ընկրելով անոնք միացան հերոսներու փառանքին եւ իրենց նահատակութեամբ անմահացան: Հ.Մ.Լ.Մ.ական սերունդները հպարտութեամբ պիտի յիշեն իրենց իրագործումները եւ հերոսական նահատակութիւնը: Արցախի գոյապայքարը չէ ասարպած, պիտի շարունակուի իրենց օրինակին հետեւող նոր հերոսներով:

Մեր ցաւակցութիւնները եւ զօրակցութիւնը կը յայտնենք նահատակ հերոսներու ընկերակիցներուն: Խունկ եւ աղօթք կը բարչրացնենք իրենց անմեղ հոգիներուն խաղաղութեան համար: Հայրենի հողին մէջ անջնկ խաղաղութեամբ:

Յիշարարկն արդարոց օրհնութեամբ եղիցի:

**Հ.Մ.Լ.Մ.Ի ՍՈՒԲՈՅՑ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

թիւնը, նկարագրային գիծերը, ինչպէս նաեւ՝ սուրբական պատերազմի օրերուն անոր կատարած աշխատանքները, Հայաստանի եւ Արցախի մէջ ունեցած հերոսական գործունէութիւնը եւ նահատակութիւնը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ երեք կէտի.-

պատճառած ցաւին, վիշտին ու ողբերգութեան:

Բ. Հպարտութեան՝ ի դիմաց Մոսիկի, իր ընկերներուն եւ հազարաւոր հերոսներու գիտակից զոհողութեան եւ սխրագործութիւններուն ու անոնց հերոսածին մայրերու տեսակին:

Ա. Սուգի, որ կը վերաբերէր հազարաւոր նահատակներու, վիրաւորներու, հայրենազրկումի եւ կորուստներու

Պարտաւորութիւններու, որոնք կը կեղրոնանան դասեր քաղելու Մոսիկին եւ բոլոր նահատակներու սխրագործութիւններէն, յարգելու անոնց



յիշատակը, չքաղաքականացնելու եւ չչարաչահելու անոնց նահատակութիւնը եւ վճռականօրէն շարունակելու իրենց կէս ձգած ճանապարհը, առանց յուսահատելու եւ ընկճուելու:

Գէորգ Յակոբճեան իր խօսքը սրահին մէջ գտնուող սկաուտներուն ուղղելով անոնց յորդորեց, որ «Շերոպայի հանգստաւէտ եւ համեմատաբար խաղաղ պայմաններուն մէջ ապրելով չհեռանան ազգային կեանքէ, չհեռանան հայրենիէ, չհեռանան այս ակումբէն, այս շէնքէն ու այս եկեղեցիէն, տէր ու պաշտպան կանգնին մեր ազգային արժէքներուն, հայ եկեղեցւոյ, մեր ազգային-մշակութային ու հոգեմտաւոր ժառանգութեան եւ ամէնէն կարեւորը՝ անշահախնդրօրէն ծառայեն մեր ժողովուրդին ու պետականութեան, ու երբ անհազանքը անգամ մը եւս հնչէ, Մոսկիին նման պատրաստ ըլլան իրենց գերագոյնը գոհաբերելու:

Մեր պետականութեան համար տագնապալի ու ծանր այս օրերուն, շարունակեց Յակոբճեան, իւրաքանչիւրս անխտիր գործ ունինք կատարելիք՝ քաղաքական, քարոզչական, մարդասիրական եւ ընկերային մակարդակներու վրայ: Ամէն անգամ որ Մոսկիին հայեցի ու խրոխտ աչքերուն կը նայիք, իրմէ ստացէք քաջութիւն, անկոտորում կամք, զոհողութեան եւ ծառայասիրութեան ոգի: Ամէն անգամ որ իր աչքերուն կը նայիք, քիչ մը աւելի մարդասէր, ազգասէր ու հայրենասէր դարձէք:

Յակոբճեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Մոսկին ու իր նման հազարները մեր կողքին չեն այսօր, անոնք միացան պատմութեան ընթացքին հայրենիէն համար նահատակուած հերոսներու աստղահոյլին եւ իւրաքանչիւրը այսօր, իբրեւ մէկական փայլուն աստղ, խաւարին մէջ կը լուսաւորէ մեր հոգիներն ու մեր ճանապարհը: Իրենք վերէն,

երկնային բարձունքներէն կը գծեն ու կը լուսաւորեն արդարութեան ճիշդ ուղին, որ կ'անցնի Շուշիի արահետներէն: Իրենց գծած ճամբէն պիտի տողանցենք ու իրենց լոյսով ու փայլքով պիտի առաջնորդուինք խաւարէն դէպի լոյս, պարտութենէն դէպի յաղթանակ ու կայուն խաղաղութիւն» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էք 17-19):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆ ԱՐՄԷՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Այս առիթով խօսք առաւ Աւստրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արմէն Պապիկեան, որ իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելէ ետք, վեր առաւ նահատակի զոհողութեան ոգին, դրուատեց նահատակներու մայրերուն ունեցած դերակատարութիւնը: Ան ըսաւ, որ օրուան խորհուրդը կը թելադրէ յիշել, հպարտանալ ու պատրաստուիլ, որովհետեւ պայքարը դեռ չէ աւարտած ու պէտք է բոլորս պատրաստուինք: Ան հաստատեց, որ Մոսկիին եւ մնացեալ հերոսներուն նահատակութիւնը ի գուր չէր, այլ կը նպատակադրէր հայ ժողովուրդի եւ պետականութեան գոյերթին ու յաւերժութեան ամրագրումը: Ան շեշտեց, որ պայքարը կը շարունակուի եւ իւրաքանչիւրս գործ ունի կատարելիք յանուն հայրենիքին ու մեր ժողովուրդին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Բացման արարողութեան աւարտին, նահատակին նկարը զետեղուեցաւ սրահին ճակատը՝ ստեղծելով յուզումնախառն մթնոլորտ: Կեդրոնական Եւրոպայի եւ Շուշիի Հայրապետական Պատուիրակ Տիրան Պետրոսեան եւս ցաւակցեցաւ նահատակին մօր եւ հաստատեց, որ Եւրաբլուրը, ուր այսօր Մոսկիլը եւ ընկերները կը հանգչին, հայրենիէն համար սրբութիւն սրբոց է եւ հպարտութիւն է: Ան ըսաւ, որ Մոսկիին եւ իր նմաններուն նահատակութեան շնորհիւ հայ ժողովուրդը այսօր ունի նոր հերոսներ:

Հոսակ, Սրբազան Հօր օրհնութեան աղօթքէն ետք, ներկաները Հայաստանի Հանրապետութեան «Մեր հայրենիք» քայլերգի երգեցողութեամբ փակեցին արարողութիւնը:



Հ.Ա.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՄՆԱԾԻԴԻՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՆ

ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղը զգալի աշխուժութիւն մը կ'ապրի վերջին շրջանին: Ստորեւ ներկայացուած թղթակցութիւնները՝ մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովին եւ սկստական բազմաբնոյթ գործունէութեան մասին, ընդհանուր գաղափար մը կու տան կատարուած աշխատանքներուն մասին:



ՄԱՄՆԱԾԻԴԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, 29 Յունուար 2021-ի երեկոյեան ժամը 6-ին, «Կարպուշեան» սրահին մէջ, ներկայութեամբ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներու, մասնաճիւղի վարչութեան եւ ՀՄԸՄ-ական անդամներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը ընթերցեց քոյր Լորա Մանուկեան, իսկ նիւթական տեղեկագիրը՝ քոյր Մակի Մանճիկեան:

Ներկաները քննարկեցին մասնաճիւ-

ղին միամեայ գործունէութիւնը եւ ներկայացուցին նոր առաջարկներ:

Այս առիթով, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Կարօ Գալայճեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ յաջողութիւն ու բարի երթ մաղթեց նորընտիր վարչութեան:

Այնուհետեւ ժողովը ընտրեց ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան եօթնանդամ նոր կազմ մը, որուն մաս կազմեցին հետեւեալները.՝ Եղբ. Սազօ Քէչէճեան, քոյր Լորա Մանուկեան, եղբ. Արշակ Տէյիրմէնճեան, եղբ. Գէորգ Տէօքմէքճեան, եղբ. Յովիկ Անդ-

րանիկ Խոտանեան, քոյր Ալին Հապոյեան եւ եղբ. Յակոբ Արզումանեան:

ԽՄԲԱՊԵՏԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Սկսուտ. Խորհուրդին եւ խմբապետութեան, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ եւ Քեսապի մասնաճիւղերու վարչութիւններուն, Սկսուտ. Խորհուրդներուն եւ խմբապետական կազմերուն, Ուրբաթ, 22 Յունուար 2021-ին, Լաթաքիոյ ակումբին մէջ տեղի ունեցաւ խմբապետի աստիճանի տուչութիւն, ձեռամբ՝ Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-Գատէհճեանին:

Գործունէութեան բացումը կատարեց Լաթաքիոյ մասնաճիւղի պատասխանատու՝ խմբապետուհի քոյր Վարդուկ Կարապետեան: Ապա, ան հրաւիրեց Սուրիոյ Շրջանային խմբապետուհին՝ կատարելու համար օրուան երդման արարողութիւնը: Այսպէս, Լաթաքիոյ մասնաճիւղէն քոյր Անի Մանուկեան, Քեսապի մասնաճիւղէն եղբ. Արա Գազազեան, քոյր Դարար Լընդեան, քոյր Էլիզապէթ Չէլէպեան, քոյր Նանօր





Պէօճէքեան եւ քոյր Մարի Շէխուկեան դրօշակիրն առջեւ երգուեցին, ապա ստացան խմբապետի կանաչ փողկապ:

Շրջանային խմբապետուհի քոյր Թամար խօսք առնելով շնորհակտրեց խմբապետի աստիճան ստացող քոյր-եղբայրները, ան անդրադարձաւ խմբապետի մը առաքելութեան եւ արժանիքներուն, ապա անոնց մաղթեց յարատեւ յաջողութիւն:



ւեցան խորհուրդները մտահոգող նիւթեր:

Իր կարգին, Սուրիոյ Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-Գատէհեան հանդիպում մը ունեցաւ զոյգ մասնաճիւղերու խմբապետական կազմերուն հետ եւ անոնց տուաւ կարգ մը թելադրանքներ եւ ցուցմունքներ (փոխադարձ յարգանքի, պարտականութեան գիտակցութեան, պարտաճա-

նաչութեան, հանդուրժողութեան, ընկերասիրութեան, հարցերու շուտափոյթ լուծման, նաեւ տարազի հեղինակութեան մասին): Աստիճանաւորները լրջութեամբ ունկրդրեցին՝ զանոնք գործադրելու խոստումով:

Գործունէութիւնը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ

ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Երկու օր ետք, Կիրակի, 24 Յունւար 2021-ին, ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի հերթական ժողովին տեղի ունեցաւ վկայագիրներու բաշխում եւ աստիճանատուցութիւն այն քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք մասնակցեցան Սկաուտ-Խորհուրդին եւ խմբապետական կազմին պատրաստած տեսական եւ գործնական դասընթացին: Այսպէս՝

- Նորընծայ, Փոխ առաջնորդի աստիճան ստացան 13 քոյր-եղբայրներ:
- Բ. կարգ, Առաջնորդի աստիճան ստացան 11 քոյր-եղբայրներ:
- Վարիչ Առաջնորդի աստիճան ստացան 5 քոյրեր:

Վկայականաց բաշխումին ներկայ գտնուեցան Սուրիոյ Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-Գատէհեան եւ Սուրիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամ քոյր Ալին Քիւրիւմլեան:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան մասնաճիւղի Ատենապետ եղբ. Սարգիս Քէչէհեան եւ Սկաուտ-Խորհուրդը:





Մասնաճիղի խմբապետուհի քոյր Վարդուկ Թուրումճեան-Կարապետեան բարի գալուստ մաղթել է ետք, հրաւիրեց Սկաուտ- Խորհուրդի ատենապետուհի քոյր Յոլին Պալեանը, որ վայրկեան մը լուովեամբ սկսաւ իր խօսքը՝ յարգելու համար յիշատակը Հայաստանի եւ Արցախի բոլոր նահատակներուն: Քոյրը բարձր գնահատեց մասնաճիղին խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն աշխատանքները, շնորհաւորեց նորեկ աստիճանաւորները, բոլորին բարի աշխատանք մաղթելով «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանի շուքին տակ:

Հանդիսութիւնը փակուեցաւ դրօշակի արարողութեամբ եւ «Ով հայ արի» քայլերգով:



ՆՈՐԸՆԾԱՅԻ ԵՒ

Բ. ԿԱՐԳԻ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիղի Սկաուտ- Խորհուրդին եւ խմբապետական կազմին Նորընծայի եւ Բ. կարգի կիսաւարտ դասընթացքը շարունակուեցաւ Կիրակի, 17 Յունուար 2021-ին, կեդրոնին մէջ:

Մասնաճիղին հրաւերով դասախօսներ հանդէս եկան իրերայաջորդ երեք դասախօսութիւններով:-

1. Լաթաքիոյ եւ ծովեզերեայ շրջանի հոգեւոր հովիւ Վազգէն Քհնյ. Քէօչկերեան դասախօսեց նիւթ ունենալով՝ «Եկեղեցւոյ հինգ տաղաւարները»: Ան խօսեցաւ նաեւ Առաքելական եկեղեցւոյ Ս. Ծնունդը Յունուար 6-ին տօնելու մասին:



- 2. Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիղի ատենապետ եղբ. Սարգիս Քէչէճեան դասախօսեց՝ նիւթ ունենալով «Սկաուտական զանազան թեմաներ»:
- 3. Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային

Վարչութեան անդամ եղբ. Մինաս Պալեան դասախօսեց՝ նիւթ ունենալով «Քորոնայի համաճարակը եւ նախնական դարմանումներ»:



ԱՐՑԱԽԵԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Թղթակից ՅԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ- Խորհուրդի հրատարակչական յանձնախումբին կազմակերպութեամբ, «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ Արցախեան վերջին պատերազմին նուիրուած սկաուտական զարգացման մրցում:

Մրցումին մասնակցեցան արի-արեւոյշներ եւ երէց-պարմանուհիներ:

Այս առիթով բացման խօսք արտասանեց հրատարակչական



կան յանձնախումբի ներկայացուցիչ քոյր Լուսին Ապաճեան: Ան շեշտեց հայ ժողովուրդի պայքարին կարեւոր յենակէտերը՝ գիտելիքը, կամքն ու միասնականութիւնը:

Ապա, մրցաշարքը ընթացաւ չորս մասով: Հինգ խումբերու մասնակիցներու կողքին, իւրաքանչիւր սեղանին ետեւը նստողները ներկայացան իբրեւ օժանդակ խումբեր:

Հաճելի եւ բարձր տրամադրութեամբ ընթացող մրցումի աւարտին, յաղթական խումբը ստացաւ խորհրդանշական նուէր:

Հինգ խումբերու անդամները ստացան Արցախի ճանաչումը խորհրդանշող նարտներ, իսկ բոլոր ներկաները՝ էջադիրներ:



Աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ- Խորհուրդի ատենապետ եղբ. Ծերուն Գահուէճեան իր եզրափակիչ խօսքին մէջ գնահատեց բոլորին մասնակցութիւնը եւ կարեւոր նկատեց հայուն դիմագիծը եւ նախնիներէն մեզի վստահուած աւանդը վառ պահելը՝ հայ լեզուի եւ հայոց պատմութեան խոր իմացութեամբ, դառնալու համար արժանավայել հայեր:

ՄԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ շրջանի հինգ մասնաճիւղերու (Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ եւ Հալէպ) Սկաուտ-Խորհուրդներու ատենապետներուն եւ խմբապետներուն, 8 Յունուար 2021-ի երեկոյեան ժամը 7-ին տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային խորհրդակցական առցանց առաջին հանդիպումը՝ հետեւեալ օրակարգով.-

- Բացում
- Մասնաճիւղերու ամփոփ տեղեկագիրներու ներկայացում
- Մասնաճիւղերու ընդհանուր իրավիճակի ներկայացում
- Մասնաճիւղերու մտահոգութիւններ եւ դժուարութիւններ
- Առաջարկներ
- Վկայեալ կարգ
- Շրջանային Սկաուտ- Խորհուրդի թելադրանքներ
- Փակում

Շրջանային Սկաուտ- Խորհուրդի ատենապետ եղբ. Ծերուն Գահուէճեան բարի գալուստ մաղթելէ ետք, մասնակիցներէն խնդրեց մէկ վայրկեան լուռութեամբ յարգել յիշատակը Արցախի եւ Հալէպահայ նահատակներուն ընդհանրապէս եւ վատակաշատ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի մասնաւորապէս: Ապա, ան խօսեցաւ Արցախի պատերազմին եւ ստեղծուած ներկայ իրավիճակին մասին, մաղթելով բարենպաստ լուծում:

Յաջորդ օրակարգով եղբ. Գահուէճեան առիթ տուաւ մասնաճիւղերուն՝ ներկայացնելու իրենց տեղեկագիրները:

Մասնաճիւղերու Սկաուտ- Խորհուրդներու ատենապետներն ու խմբապետները յաջորդաբար հակիրճ գեկոյցներ ներկայացուցին կատարուած եւ ապագային նախատեսուած ծրագիրներու մասին: Ապա, եղբայրը անդրադարձաւ ատենագրութիւն գրելու ճիշտ ձևին մասին, որմէ ետք մասնաճիւղերու ներկայացուցիչները խօսեցան իրենց ունեցած մտահոգութիւններուն եւ դիմագրաւած դժուարութիւններուն մասին: Մտահոգութիւնները գրեթէ նոյնանման էին՝ նիւթականի անբաւարարութիւն, գործունէութեան մնայուն վայրի դժուարութիւն եւ մասնաճիւղերու օժանդակութեան անհրաժեշտութիւն:



Առաջարկներու պարագային, Քեսապի մասնաճիւղի Սկաուտ- Խորհուրդի ատենապետը առաջարկեց կատարել աստիճանաւորական որակաւորման սեմինարներ: Վկայեալ կարգի առնչութեամբ, Հալէպի մասնաճիւղին խմբապետը առաջարկեց քննութեան ժամկէտը երկարաձգել: Խօսուեցաւ նաեւ գործնական բաժինի իրագործման զանազան տարբերակներու մասին:

Եղբ. Գահուէճեան զնահատեց Հալէպի մասնաճիւղին կատարած աշխատանքը՝ «Մոկլի» վոհմակի գործունէութեան վայրի՝ «Մոկլիի աշխարհ»-ի ստեղծման գծով եւ թելադրեց, որ մնացեալ մասնաճիւղերն ալ որդեգրեն նոյն ձևը: Աւելցնելով, ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմը գայլիկութիւնն է, ուր կը կերտուի ապագայ սկաուտին նկարագիրը: Ան նաեւ թելադրեց դրական մօտեցում ցուցաբերել մեծ կարգի սկաուտներուն եւ արենոյշներուն նկատմամբ, փորձելով սիրաշահիլ զանոնք, եւ ամէնէն կարեւորը յարգանք սորվեցնել եւ յարգանք սերմանել գայլիկական շարքերուն մէջ, այնպէս մը որ կրտսեր գայլիկը յարգէ իրմէ մեծ սկաուտը եւ սկաուտը՝ իր պատասխանատուն, հասնելով ամէնէն բարձր պաշտօն ունեցող խմբապետին: Ան հաստատեց, որ յարգանքը յարաբերութիւններու հիմն է: Ան թելադրեց զարկ տալ սկաուտական գիտելիքներու ամրապնդման:

Ապա, եղբ. Գահուէճեան խօսք տուաւ Շրջանային խմբապետ եղբ. Յովիկ Բամբալեանին եւ Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-Գատէհճեանին, որոնք իրենց կարգին զնահատեցին մասնակիցները եւ խօսեցան կանոնադրային կարգ մը հարցերու մասին:

Աւարտին, եղբ. Գահուէճեան զնահատեց բոլոր մասնաճիւղերու ատենապետներն ու խմբապետները, խոստանալով հերթական դրութեամբ կատարել առցանց նման ժողովներ:



Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆԵՐՈՒ ՄՏԵՐՄԻԿ ՀԱՒԱՔԻՆ՝

«Հ.Մ.Ը.Մ.Ը ՊԱՀՏՕՆ ԿԱՄ ԱԹՈՌ ՄՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ ՉԷ, ԱՅԼ՝ ԽՈՐՀՈՒՐԴ Է, ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ Է»

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՍԻՍ ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ

Թղթակից
ՀԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ. Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Երեքշաբթի, 23 Փետրուար 2021-ի երեկոյեան ժամը 8-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի կազմերը սիրոյ սեղանի շուրջ մտերմիկ հաւաք մը ունեցան «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ:


Հաւաքին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան, Հ.Մ.Ը.Մ.ի հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմը, Շրջանային Սկաուտ. Խորհուրդը եւ իր հրատարակչական յանձնախումբը, Շրջանային Վարչութեան գրական, հաշուեքննիչ, յուշամատենանի եւ ներքին ծրագիր-կանոնադրի վերամշակման յանձնախումբերը, Հայկալի մասնաճիւղի վարչութիւնը, Սկաուտ. Խորհուրդն ու մասնաճիւղի խմբապետը, շեփորախումբի, պասքեթպոլի, ֆութպոլի, ճատրակի, պարտէզի եւ շինարարական յանձնախումբերը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի շքանշանակիր երէց եղբայրները: Ներկայ էին նաեւ պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, Համազգայինի եւ ՍՕԽ-ի Շրջանա-



յին Վարչութիւններու ատենապետներն ու անդամները: Երեկոն սկիզբ առաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ԲԱՅՄԱՆ ԽՕՍԲԸ

Բացման խօսքը արտասանեց եւ օրուան յայտագիրը վարեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Եղիա Քիլիճեան: Եղբայրը ողջունեց պատուոյ հիւրերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ականներուն ներկայութիւնը, յայտնելով, որ նմանօրինակ հաւաքները առիթը կ'ընծայեն եղբայրական ոգիով աշխատանքի լծուելու, ի նպաստ նոր սերունդի առողջ կերտման: Ան նչեց, որ այս հաւաքը բազմիցս յետաձգուեցաւ Քորոնա ժահրի, ինչպէս նաեւ՝ Արցախեան գոյապայքարի մեր նահատակներուն առ ի յարգանք:



ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ.

ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ.



Աւետիս Տէրվիշեան, յայտնելով, որ քանի մը օր առաջ «Հայ Սկսողութի օր» էր: Հ.Մ.Լ.Մ.ի սկսողութի «Հայ Սկսողութի օր»ը կը յիշատակեն Վարդանանց տօնին, համաձայն համա-Հ.Մ.Լ.Մ.ական խմբապետական առաջին համագումարին, որ տեղի ունեցաւ Փետրուար 1982-ին, Աթէնքի մէջ:

Եղբ. Տէրվիշեան Երջանային Վարչութեան անդամները յայտնեց Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Հինգ մասնաճիւղերուն՝ Դամասկոսին, Հալէպին, Լաթաքիոյ, Գամիշլիին եւ Քեսապին, յատկապէս շնորհաւորելով Դամասկոսի եւ Հալէպի մասնաճիւղերը՝ իրենց հիմնադրութեան 95-ամեակին առիթով: Ան ընդգծեց, որ Հալէպի մասնաճիւղի պատգամները եւ ֆուլթայոյի դաշտերուն նորոգութեան համար Սուրբոյ Երջանային Վարչութիւնը, Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, պաշտօնական նամակով դիմած է Սուրիայէն դուրս գտնուող, նախկին հալէպահայ Հ.Մ.Լ.Մ.ականներու, որոնք ջերմօրէն ընդառաջած եւ իրենց նիւթաբարոյական աջակցութեամբ նպաստած են զոյգ դաշտերու նորոգութեան աշխատանքներուն:

Այնուհետեւ ներկաները հետեւեցան Հալէպի Նաւասարդեան դաշտին պատմութիւնը ներկայացնող տեսերիզի մը ցուցադրութեան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԻՆ ՍՐՏԻ ԽՕՄՔԸ

Բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան փոխանցելու իր սրտի խօսքը: Եղբ. Քէօշկերեան միութեան ծառայողական բնոյթին անդրադառնալով, անոր լաւագոյն օրինակը նկատեց այսօր Հայաստանի մէջ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին կատարած աշխատանքը՝ արցախցի գաղթական հայորդիներու նկատմամբ: Ան կոչ ուղղեց երիտասարդ սերունդին սրբութեամբ պահելու աւելի քան 100 տարիներու գոյերթ ունեցող միութեան աւանդը:


Եղբ. Քէօշկերեան իր խօսքին մէջ շնորհաւորեց Սուրբոյ շրջանի Դամասկոսի եւ Հալէպի մասնաճիւղերը՝ իրենց հիմնադրութեան 95-ամեակին առիթով, ինչպէս նաեւ Լաթաքիոյ մասնաճիւղը, որ այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 95-ամեակը: Ան շնորհաւորեց նաեւ Սուրբոյ Երջանային Վարչութիւնը, մաղթելով արդիւնաւէտ գործունէութիւն եւ դալար երթ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՍՐՏԻ ԽՕՄՔԸ
Հաւաքին իր սրտի խօսքը արտասանեց Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան: Ան ողջունեց Հ.Մ.Լ.Մ.ի այս մտերմիկ հաւաքը, որ կը նպատակադրէ յիշել եւ յարգել միութեան հիմնադիրները, աւագ սերունդը, բայց նաեւ՝ բացուել ապագային:

Առաջնորդը հաստատեց, որ Հ.Մ.Լ.Մ.ը պաշտօն կամ աթոռ ստանձնելու միութիւն չէ, այլ՝ խորհուրդ է, ծառայութիւն է, որուն կոչուած ենք բոլորս՝ հաւաքական ճիշդ շարունակելու մարդակերտումի եւ հայակերտումի նուիրական մեր առաքելութիւնը: Ան գնահատեց Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Երջանային Վարչութիւնը՝ երեկոյին կազմակերպման համար, մաղթելով բարեկալիք եւ արդիւնաւէտ գործունէութիւն:

ԿԱՐԿԱՆԴԱԿԻ ՀԱՏՈՒՄ

Այնուհետեւ կատարուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան 102-րդ տարեդարձի կարկանդակի հատում, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազան Հօր, Հ.Մ.Լ.Մ.ի



Կեդրոնական Վարչութեան անդամին, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Երջանային Վարչութեան ատենապետին, Հ.Մ.Լ.Մ.ի շքանշանակիր երէց եղբայրներուն եւ պատկան մարմինի ներկայացուցիչին:

Իրենց սրտի խօսքերը փոխանցեցին քոյր միութիւններու ներկայացուցիչներ՝ Համազգայինի Սուրբոյ Երջանային Վարչութեան ատենապետ Պերճ Պօղիկեան եւ ՍՕԽ-ի Երջանային Վարչութեան ատենապետուհի Սեղա Տէր Աբրահամեան-Կէրկէրեան, որոնք իրենց բարեմաղթութիւնները փոխանցելով յաղթանակներով լեցուն նորանոր ամեակներ մաղթեցին Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին:

Ապա, երէց եղբայրները սրտի խօսքեր արտասանեցին եւ Հ.Մ.Լ.Մ.ական քաղցր յուշեր պատմելով ջերմ մթնոլորտի մէջ գօտեպնդեցին երիտասարդ Հ.Մ.Լ.Մ.ականները:



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ՍԻՏՆԻԻ ՄԷՋ

Թղթակից ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ-ի Աևստրալիոյ Շրջանային Սկաուտ- Խորհուրդին կազմակերպութեամբ, Շաբաթ, 20 Փետրուար 2021-ի կէսօրէ ետք ժամը 6-ին, Սիտնիի Հ.Մ.Ը.Մ-ի «Արարատ» մասնաճիւղի ակումբին մէջ տեղի ունեցաւ Վկայեալ կարգի տուչութիւն, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Տիրան Վահրատեանի:

Այս առիթով բացման խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Աևստրալիոյ Շրջանային Խմբապետուհի քոյր Սեւան Պազարճեան եւ նշեց, որ 18 Փետրուարին՝ Վարդանանցի տօնին հետ



յիշատակուող «Հայ սկաուտի օր»ը ո՛չ միայն հպարտանքի եւ ուրախութեան օր է, այլեւ՝ Վարդանի եւ այլ հերոսներու յիշատակութեան եւ սկաուտական դաւանանքի

խոստումին հաւատարիմ մնալու եւ մեր ուխտը վերանորոգելու օր է:

Ապա, Վկայեալ կարգի կազմակերպիչ յանձնախումբէն եղբ. Բաֆֆի Նաճարեան խօսք առնելով անդրադարձաւ Վկայեալ կարգի արժանիքներուն եւ պարտաւորութիւններուն մասին: Ան յաջողութիւն մաղթեց կարգը ստացողներուն:

Յաջորդեց վկայագիրներու բաշխում եւ Վկայեալ կարգի պէճի տուչութիւն՝ կարգի դասընթացքին հետեւած չորս քոյր-եղբայրներու՝ քոյրեր Զարմիկ Քէյվանեանի, Թալին Գաճազաճեանի, եղբայրներ Արա Օհաննէսեանի եւ Վրէժ Ազճեանի:



Աւարտին, ներկաները բոլորուեցան մտերմիկ ընթրիքի սեղանի մը շուրջ եւ նշեցին «Հայ սկաուտի օր»ն ու չորս վկայեալներու միութեանական յաջողութիւնը:



ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ ԿԸ ՄՏԱՆԱՅ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Աևստրալիոյ «Նաւասարդ» մասնաճիւղի սկաուտները, որոնք Արցախի վերջին պատերազմին զօրակցական նամակներ գրած էին Հայաստանի եւ Արցախի հայ զինուորներուն, ուրախութեամբ տեղեկացան, որ իրենց նամակները գտած են իրենց հասցէները եւ զինուորները գոհունակութեամբ ստացած եւ ընթերցած են նամակները, իրենց թիկունքին զգալով հեռուոր Սիտնիի նոր սերունդին զօրակցութիւնը իրենց պայքարին, հայ հողին, սահմանին եւ հայ մարդու պաշտպանութեան ի խնդիր:

Վարձքը կատար սկաուտներուն եւ անփորձանք ծառայութիւն նամակները ստացող հայ զինուորներուն:



ԳԱՂԱՓԱՐԻ ԵՒ ԳՈՐԾԻ ՄԱՐԴԸ

(ԵՂԲ. ՅՈՎՍԷՓ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

**Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի
Շրջանային Վարչութիւն
ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ**



Քորոնա ժահրը չինայեց վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յովսէփ Մարգարեանին եւ պատճառ դարձաւ իր հարազատներէն ու սիրած միութենէն յաւէտ բաժանման:

Եղբ. Յովսէփը օժտուած էր ազգային բարձր ոգիով, ծառայասէր էր եւ ընկերային, բոլորին կողմէ սիրուած ու յարգուած, մարդամօտ եւ կատակասէր՝ այն աստիճան, որ բոլորը զինք կը ճանչնային իբրեւ «Զուգ» Մարգարեան: Նկարագրի այս յատկութիւնները զինք մղած էին ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ական: Ան դարձած էր Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի հիմնադիր սերունդի անդամներէն մէկը՝ ծառայելով 12 տարիներ:

Եղբ. Յովսէփ մարզասէր էր, իսկ նախասիրած մարզաձեւը ֆութպոլն էր: Այս մարզաձեւը զարգացնելու համար ան մաս կազմած էր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ֆութպոլի յանձնախումբին, երկար տարիներ գործած եւ

ստանձնած զանազան պաշտօններ՝ ըլլալով ատենապետ եւ տնտեսական յանձնախումբի անդամ: Ան Հ.Մ.Ը.Մ.ի անունը բարձր պահած էր Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնին մէջ:

Ան գաղափարի եւ գործի մարդ էր եւ ղեկավարի իր յատկութիւնները զինք ուղղած էին մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան՝ նախ իբրեւ անդամ եւ հետագային՝ ատենապետ: Մասնակցած էր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Ներկայացուցչական բազմաթիւ ժողովներու:

Ան կը նկատուէր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի վաստակաւոր ղեմաբերէն մէկը: Վաստակ մը, որուն համար 2015-ին ան արժանացաւ միութեան «Ծառայութեան» շքանշանին:

Սիրելի՛ եղբ. Զուգ, ընդունէ այս տողերը իբրեւ յարգանք յիշատակիդ եւ բուռ մը խունկ շիրիմիդ: Մեկնէ խաղաղօրէն միանալու մեր նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու անմահ փաղանգին:

Մենք կը խոստանանք միշտ բարձր ու կանգուն պահել քու սիրած Հ.Մ.Ը.Մ.դ:

Վարձքդ կատար, հոյը թեթեւ գայ վրադ:

ԵՂԲ. ՅՈՎՍԷՓ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Կարօ Պերպերեան
ԱՆԹԻԼԻԱՍ**

Մանր ու դժուար պարտականութիւն է յիշատակի եւ յարգանքի խօսքերով յիշել եղբ. Յովսէփ Մարգարեանը, որ Հ.Մ.Ը.Մ.ական 65 տարուան ծառայութեամբ բեռնաւորուած՝ 13 Յունուար 2021-ին անակնկալօրէն հրաժեշտ տուաւ իր հարազատներուն եւ իր սիրած միութեան:

Կ'ըսեն անփոխարինելի մարդ չկայ, իսկ ո՞վ պիտի փոխարինէ եղբայր Յովսէփը եւ իր նմանները, որոնք օրէ օր հրաժեշտ կու տան մեզի՝ մարդու տազնապ ստեղծելով մեր շուրջ, մեր մէջ. գաղափարական, միութենական, սկզբունքային եւ հայրենասէր մարդու տազնապ:

Ո՞վ չէր ճանչնար 77-ամեայ եղբ. Յովսէփը, Հ.Մ.Ը.Մ.ական անշահախնդիր ու առաքինի մարդը, իր վարքով ու բարքով: Անբացատրելի հմայք մը ունէր եղբայր Յովսէփ: Բոլորը կը սիրէին ու կը յարգէին զինք: Մեծ էր իր սրտով, հոգի-

ով եւ բոլորը ընդունելու իր լայնամտութեամբ: Գործի եւ միայն գործի նուիրեալ անձ մըն էր եւ իր աշխատանքն էր, որ զինք կը պահէր նուիրաբերումի պատուանդանին վրայ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի գործօն ղեմաբերէն մէկը:

Նկարագրիով մարդամօտ, ընկերային եւ կատակասէր

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ իր նախկին ատենապետ, «Ծառայութեան» շքանշանակիր, Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի նախկին անդամ

ԵՂԲ. ՅՈՎՍԷՓ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Յունուար 2021-ին:



եղբ. Յովսէփը կամ բոլորիս ծանօթ եղբ. Զուգ Մարգարեանը եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի հիմնադիր սերունդի անդամներէն մէկը: Տասներկու տարիներ շարունակ գործած է մասնաճիւղէն ներս, իբրեւ վարչական անդամ, իր կարելին ընելով մասնաճիւղին զարգացման եւ հզօրացման համար: Բազմավաստակ այս եղբայրը երկար տարիներ գործած է Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային

Վարչութեան Փութպոլի յանձնախումբին մէջ, իբրեւ ատենապետ եւ տնտեսական յանձնախումբի անդամ: Ան մաս կազմած է նաեւ Լիբանանի Փութպոլի Ֆետերասիոնին՝ Հ.Մ.Ը.Մ-ը պատուով ներկայացնելով այնտեղ:

Միութենական կեանքի մարդ էր եղբ. Յովսէփ: Այս պատճառով ան մաս կազմած էր նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, նախ իբրեւ անդամ, ապա՝ ատենապետ: Մասնակցած է բազմաթիւ Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու եւ 1991-ին Աթէնքի մէջ տեղի ունեցած

միութեան Պատգամաւորական Ե. Ընդհանուր Ժողովին:

Իբրեւ բազմավաստակ տիպար Հ.Մ.Ը.Մ-ական, եղբ. Յովսէփ 28 Նոյեմբեր 2015-ին, Անթիլիասի մասնաճիւղի 45-ամեակին նուիրուած հանդիսութեան եւ կալա ընթրիքին արժանացած է միութեան «Մառայութեան» շքանշանին:

Եղբ. Յովսէփ եւ իր նմանները սերունդներու համար պիտի ըլլան ուղեցոյց՝ անսահման զոհաբերութեան, նուիրումի եւ յարատեւութեան:

Շնորհակալութիւն, եղբայր Զուգ: Երթդ բարի դէպի Հ.Մ.Ը.Մ-ականներու պանթէոն:

Հողը թեթեւ գայ վրադ:

Վստահ, Հ.Մ.Ը.Մ-ի եւ մասնաւորաբար Անթիլիասի մասնաճիւղի ընտանիքը միշտ պիտի յիշէ քեզ:

ՃՇԳՈՒՄ

«Սարգիկ»ի նախորդ թիւի էջ 91-ի «Մեր կորուստները» նիւթին վերնագիրը պետք էր կարդալ «Վաստակաշատ Գ.Մ.Ը.Մ.ական եղբ. ԶԱԲԵՆ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ յիշատակին»:

Ճշդումին առիթ տուող վրիպակին համար կ'ապաւինինք մեր ընթերցողներու ներողամտութեան:

«ՍԱՐԶԻԿ»



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՒԴԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԵՒ ՃՈՒԹՊՈՒԻ ԴԱՇՏԵՐԸ ԿԵԱՆՔԻ ԿԸ ԿՈՉՈՒԻՆ ՄԵԾ ՃԻԳՈՎ

«ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ



Ուրախությամբ կը պեղեկացնենք, թէ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան շինարարական յանձնախումբին ջանքերով, Հալէպի Ազիզիէ բաղամասին մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի պասքէպոլի եւ ֆութպոլի դաշտերը շուրջով կեանքի

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանի մահուան առիթով, «Մարզիկ» պաշտօնաթերթին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

Եղբ. Վիգէն Աբելեան	250 \$
Եղբ. Սիեր Դաւիթեան	250 \$
Քոյր Սեդա Պէշլեան-Սաղտազարեան	200 \$
Եղբ. Գօգօ Պալեան	100 \$
Եղբ.Սանուէլ Մարսէլեան	100 \$

կը կոչուին:

Պասքէպոլի դաշտին նորոգութիւնը ամբողջանալով, շրջան մը երկրաչափերու հսկողութեամբ փորձարկուեցաւ եւ ներկայիս կը գտնուի օգտագործման պատրաստ վիճակի մէջ:

Ֆութպոլի դաշտին նորոգութիւնը սկիզբ առաւ Սուրիայէն դուրս գտնուող, նախկին սուրիահայ Հ.Մ.Ը.Մ.ականներու նիւթաբարոյական աջակցութեամբ:

Լիայոյս ենք, որ պասքէպոլի եւ ֆութպոլի դաշտերուն նորոգութիւնը մեծապէս կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մարզական կեանքին զարգացման:

Տէր եւ Տիկ. Ալէքքօ եւ Անի Պէզիբեան	2.000.000 Լ.Ո.
Տէր եւ Տիկ. Փիէր եւ Արաքս Գուլաճեան	200.000 Լ.Ո.
Տէր եւ Տիկ. Աբօ Մոսիկեան	200.000 Լ.Ո.
Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղ	150.000 Լ.Ո.
Քոյր Վարդուկ Ֆոնըզլեան	150.000 Լ.Ո.
Շաքէ Շիմշիրեան	100.000 Լ.Ո.
Տէր եւ Տիկ. Զրայր եւ Սիլվա Սաղըրեան	100.000 Լ.Ո.



ՄԱՀԱՉԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ շրջանի վաստակաշատ եղբայրներէն, «Արտակարգ» շքանշանակիր՝

ԵՂԲ. ՊԵՐՆ ԹԱՇՃԵԱՆԻ
մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 25 Գեկտեմբեր 2020-ին, Մելպուռն, Աւստրալիա:

